



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ	1
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ.....	2
ԻՐԱԽ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԹԷ՞ ԱՌԱՍՊԵԼ	2
ՀԱՐՑԱԶՐՈՅՑ.....	4
ԵՍ ԱՅՆՏԵՂ ԵՄ, ՈՐՏԵՂ ՍԻՐՈՅ ՈՒ ԶԵՐՄՈՒԹԵԱՆ ԿԱՐԻՔ ԿԱՅ	4
ԿԻՊՐԱՀԱՅ.....	7
ԲՈՆԱԳՐԱԽԵԱԼ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՇՈՒՐՋ ՆՈՐ ՈՏՆԶԳՈՒԹԻՒՆՆԵՐ.....	7
ՅՕԴՈՒԱԾՆԵՐ.....	8
ՄՏՈՐՈՒՄՆԵՐ 29,800 ՔԱՌ. ՔՄ.-Ի ՄԱՍԻՆ	8
ԱՐՑԱԽԷՆ ԵՏՔ՝ ԿԱԶԱ՞Ն	18
ՊԵՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ	21
ՇՓՈԹ	24
ԵԹԷ ՉԵՍ ՕԳՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ, ԳՈՆԷ ՍԻ՛ ՎՆԱՍԵՐ	26
ՏԵՍԱԿԷՏ	29
ՄԻՋԱՆՑՔՆԵՐՈՒ ՊԱՏԵՐԱԶՄԸ	29
ՔՍԱՆՄԷԿԵՐՈՐԴ ԴԱՐՈՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ԹԷ՞ ԲՈՆԱՏԻՐՈՒԹԻՒՆ.....	33
ԿՈՐՄՆՅՈՒՑԻՑԻՔ ԱՐՑԱԽԸ «ԺԱՄԱՆԱԿԱԽՈՐԱՊԷՍ». ՈՒՇՔԻ ՊԷՏՔ Է ԳԱՆՔ ՉԿՈՐՄՆՅՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ.....	37
ԻՐԱՆ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ	39
ԵՐՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ Բ. ԱՐԱՐԸ.....	41
ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ.....	43
ՓՈՒՆՋ ՍԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ.....	43
ԵՐԵՒԱՆԵԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԻՒՆՆԵՐ	48
ԿՈՄԻՏԱՍԻ ԱՐԺԱՆԱԽՈՐ ՍԱՆԸ.....	50
ՅՈՒՇԱՐԶԱՆՆԵՐԸ.....	53
Ի Ր Ա Վ Ի Ճ Ա Կ.....	56
ԱԿՆԹԱՐԹՆԵՐ	57
ՔԱՌԵԱԿՆԵՐ.....	59

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԻՐԱԻ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԹԷ՞ ԱՌԱՍՊԵԼ



Մեր հազարամեակներու պատմութիւնը կը յուշէ մեզի թէ իրաւ խաղաղութիւնը կ'երաշխաւորուի միայն ու միայն ՈՅԺՈՎ, կամ ԵՐԿԱԹԷ ՇԵՐԵՓՈՎ: Եթէ այդ ոյժը չկարենանք ստեղծել քայլ առ քայլ, այլեւ հետեւողականօրէն, աննահանջ վճռակամութեամբ եւ լրագոյն արդիւնաւէտութեամբ, յայնժամ խաղաղութիւնը կը դառնայ լոկ թուղթի վրայ արձանագրուած ինչ-որ համաձայնութիւն, որ փուչիկ կը դառնայ պատմական մէկ տուեալ պահուն: Սա է մերկ իրականութիւնը, որ աւելի կը շեշտուի երբ մեր դիմաց ունինք արիւնարբու թշնամիներ, որոնք բացէ ի բաց կը յաւակնին նոյնիսկ Երեւանը գրաւել: Պա՛րզ ու մեկի՛ն:

Մեր ժողովուրդին եւ մեր երկրին նկատմամբ թշնամական բացայայտ քաղաքականութիւն վարող Ատրպէյճանի եւ Թուրքիոյ հետ խօսելու համար կայ մէկ չգրուած օրէնք, որ կը կոչուի ակն ընդ ական: Այստեղ բարոյական օրէնքը կը կորսնցնէ իր ամբողջ իմաստն ու արժէքը եւ կը դառնայ անհեթեթ: Բա՛ւ չէ խօսիլ բարոյականութենէն, որուն դաժան ոտնահարումը մենք լիովին ճաշակէր ենք մեր փոթորկալից պատմութեան ամբողջ երկայնքին, դարեր շարունակ: Ոյժի լեզուն է որ կը խօսի դժբախտաբար պատերազմի մէջ, թէ խաղաղութեան, ի մասնաւորի՝ մերինին նման՝ դաժան, տմարդի եւ ահեղ ոսոխին դիմաց: Մեր հասարակութիւնը պէտք է շեշտակի նայի այն դառն իրականութեան, որ Ատրպէյճանն ու Թուրքիան թշնամի, հայասպան պետութիւններ են: Հետեւաբար, Հայաստանին ու հայութեան ամէն կերպ հարուածելու ու վնաս հասցնելու անոնց գործողութիւնները միանգամայն սպասելի են եւ փոխուելու հիմքեր չունին:

Մտահան ընելու չենք երբե՛ք, որ ՈՅԺՆ Է ՈՐ ԿԸ ԾՆԻ ԻՐԱԻՈՒՆՔ, պիտի աւելցնէի՝ ՈՅԺՆ Է ԵՐԱՇԽԻՔԸ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ:

Քանի ատեն է որ հայ հանրութիւնը օրն ի բուն ականջալուր կ'ըլլայ ՀՀ - Ատրպէյճան, ՀՀ - Թուրքիա «խաղաղության համապարփակ պայմանագրի» ուժգնօրէն տարուող քարոզչութեան մասին: Պայմանագիր՝ զոր կը պատրաստուի ստորագրել ՀՀ վարչապետը մինչեւ տարեվերջ: Կը փորձուի քաղաքացիական հասարակութիւնը համոզել որ այդ պայմանագիրը կենսական նշանակութիւն ունի մեր երկրի անվտանգութեան համար, որ ան ստորագրուելու է «այսպէս թէ այնպէս», որ անոր կէտերու պահպանումը պիտի երաշխաւորուի օտար ոյժերու կողմէ...եւ նման բաներ:

Հարց պիտի չտա՞նք որ այդ «խաղաղութեան Պայմանագիր»ը արդե՞օք չի կրնար խախտուիլ ու բեկանուիլ Ատրպէյճանի կողմէ, անոր ստորագրման յաջորդ օրն իսկ, կամ երբ որ ձեռնադրու ըլլայ իրենց: Վկայ՝ 2020 թուականի Նոյեմբեր 9-ի պայմանագիրը, որուն կէտերը շարունակաբար կը խախտուին Ատրպէյճանի կողմէ, որ կը մնայ անպատիժ, առանց դոյզն



Ժխտական հետեւանքներու ենթարկուելու այսպէս կոչուած գերպետութեանց կողմէ, ըլլան անոնք արեւմտեան երկիրներ, թէ Ռուսաստանի Դաշնութիւն եւ այլք:

Խաղաղութեան նեննիմներով օրօրելը, թէ օրօրուիլը մեզ ինքնախաբէութեան միայն կրնայ առաջնորդել, ջլատելով, տկարացնելով մեր կռուելու, ինքնապաշտպանուելու ոգին, մեր համաժողովրդական դիմադրութեան ոգին: Այս է գուցէ պատճառը որ թշնամիին շարունակական ոտնձգութիւններուն մենք չկրցանք պատասխանել նոյնպիսի ուժգնութեամբ, ակն ընդ ականութեամբ: Իսկ մեր կոյր ապաւինողականութիւնը արեւմուտքին, ԱՄՆ-ին, ԵՄ-ին թէ արեւելքին, հիւսիսին թէ հարաւին, ոչ մէկ արդիւնք տուին ԳԵՏՆԻ վրայ: Լսեցինք լոկ յայտարարութիւններ, դատապարտումի խօսքեր: Թէ՛ 44 օրեայ պատերազմի օրերուն, թէ՛ իննամսեայ Արցախեան շրջափակման ահեղ պայմաններուն նկատմամբ, աշխարհը քար անտարբերութիւն ցուցաբերեց...Սա դա՛ս է որմէ խրատուիլը պարտադիր հրամայական է մեր յարատեւման համար: Այդ դասը յստակօրէն կ'արձանագրէ որ մենք մեր համախմբուած ոյժերով միայն, մեր ներքին հզօրացումով միայն կրնանք դուրս գալ զոհի նուաստացուցիչ կարգավիճակէն եւ պարտողականութեան հոգեվիճակէն եւ պայքարիլ ու կռուիլ մեր պետականութեան անվտանգութեան ի պաշտպանութիւն:

Անգամ մը եւս կարդանք ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅԴԻԿԻ միշտ այժմեական խօսքերը.

«Երբ գնացի Բեռլինի կոնգրես՝ մեր ժողովրդի իրաւունքները բարձրաձայնելու համայն աշխարհով, միայն այդժամ հասկացայ, որ նախ եւ առաջ պէտք է ունենալ ԻՐԱԻՈՒՆՔ ՈՒՆԵՆԱԼՈՒ Իրաւունք: Այդ իրաւունքը նուաճում են զենքով: Երեւի լսել էք երկաթէ շերտի մասին: Եւրոպական քաղաքակիրթ ազգերը, որոնք մեզ թուում էին օրինապաշտ եւ արդար, խղճահարութիւնից բացի ոչինչ մեզ չտուեցին: Ռուսաստանը, որ թուում էր՝ մեր ժողովրդի մեծ բարեկամն է, իր շահերից բացի ոչինչ չէր տեսնում և չէր լսում: Հայ ժողովուրդը կարծես ձմռան սառնամանիքին դրսում յայտնուած անօթի երեխայ լինէր, որի առջեւ բոլորը փակեցին իրենց տան դռները: Հայ ժողովուրդը անտէր էր: Բայց ամէնից կարեւորը, որ եւ հասկացայ՝ այն էր, որ մենք տէրեր չպէտք է փնտռենք դրսում...»: Տողեր՝ որոնք կարծես նոր գրուած ըլլան:

Կարելոր է նաեւ նկատառել որ այդ «խաղաղության համապարփակ պայմանագրով» պիտի փորձուի ընդամենը ամրագրել և օրինականացնել Ատրպէյճանի եւ Թուրքիոյ նուաճումները, Արցախի հայաթափումը, Հայաստանի Հանրապետության տարածքներու զաւթումը...:

Զարմանալիօրէն, այսքան սարսռալից աղետներէն ետք, խօսք անգամ չկայ պետական մակարդակով ինքնապաշտպանութիւն եւ համաժողովրդական դիմադրութիւն կազմակերպելու մասին, ինչ որ մեր պետականութեան անվտանգութեան ապահովման թիւ մէկ ԵՐԱՇԽԻՔՆ է: Աւելցնենք որ որեւէ բանակցութիւն կրնայ տարուիլ միայն ու միայն երբ երկու կողմերու ուժային դիրքերը կը գտնուին որոշ հաւասարակշռութեան վրայ: Տկարին լոկ կ'արհամարհեն, զայն ողորմութեան կ'արժանացնեն եւ յետոյ ոտնակոխ կ'ընեն անոր իրաւունքները ամէնէն անողոք կերպով, միաժամանակ բարբաջելով մարդկային իրաւունքներու, արդարութեան մասին, սոսկ որպէս շրթանց մարգանք, ինչպէս տեսանք ազգովին...

Մինչեւ ե՞րբ մենք մեզ պիտի խաբենք օրօրներով, նենդիմներով կամ այլոց ապաւինելով: Մինչեւ ե՞րբ մեզի պիտի պակսին՝ սեփական պատմութենէն դասեր քաղելու եւ ըստ այնմ գործելու իմաստութիւնը, ողջամտութիւնը, յստակատեսութիւնը: Մինչեւ ե՞րբ պիտի հաւատանք թղթայ շերտիներու, փոխանակ կերտելու եւ կոթողելու մեր ԵՐԿԱԹԵԱՅ ՇԵՐԵՓԸ:

ԶԳԱՍՏՈՒԹԵԱՆ ՊԱՀՆ Է, ՀԱՄԱԽՄԲՈՒԵԼՈՒ ԵՒ ՀԶՕՐԱՆԱԼՈՒ ՊԱՀԸ, օգտագործելով մեր բոլոր հնարաւորութիւնները, ուր իւրաքանչիւր հայ անհատ պարտի ունենալ իր բաժինն ու ներդրումը համահայկական ոգիով ու մտածողութեամբ, յանուն ազգի, հայրենիքի եւ մեր պետականութեան յարատեւման եւ անխափան երթին: Յայնժամ միայն իրականութիւն կը դառնան Եղիշէ Չարենցի հզօր տողերը. «Ես եկել եմ դարերից Ու գնում եմ յաղթական Դէպի դարերը նորից, Դէպի շքեղ ապագան»:

ԱՍՏՈՒԱԾ ՄԵԶ ՊԱՀԱՊԱՆ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

ԵՍ ԱՅՆՏԵՂ ԵՄ, ՈՐՏԵՂ ՍԻՐՈՅ ՈՒ ԶԵՐՄՈՒԹԵԱՆ ԿԱՐԻՔ ԿԱՅ



Ես մեր ազգային նուագարաններից ամենաշատը քանոնն եմ սիրում: Քանոնի ձայնը՝ թրթռուն, վճիտ, զրնգուն, ասոցացում է արեւելեան հեքիաթի հետ ու ինչ-որ անմեկնելի առեղծուած ունի: Երբ առաջին անգամ լսեցի քանոնահարուհի Մարիաննա Գէորգեանին, թուաց՝ ծիածանի բոլոր գոյները՝ բոլոր նրբերանգներով, թափոււմ են ջրվեժի փրփուրների մէջ: Յետոյ ես համացանցում լսեցի Մարիաննա Գէորգեանի բոլոր կատարումները՝ սկսած հայկական մեղեդիներից մինչեւ դասական երաժշտութիւն, հոգեւոր տաղերից մինչեւ արեւելեան ազգային նուագներ: Բայց Մարիաննայի հետ հարցազրույց անելու միտքը ծնուեց այն ժամանակ, երբ քանոնահարուհին ասաց, որ պիտի շրջի Արցախի բանակի զօրամասերով ու նուագի հայրենիքի սահմանները առաջնագծում պաշտպանող զինուորների համար: Մարիաննան իր գալիք շրջայցն անուանեց

ուխտագնացութիւն: Ու ես որոշեցի զրուցել քանոնահարուհու հետ ուխտագնացութիւնից առաջ:

-Մարիաննա, կարո՞ղ եմ իմանալ՝ Ձեզ վճարելո՞ւ են Արցախի բանակի զօրամասերում նուագելու համար:

-Ինչպէ՞ս կարող եմ հայրենիքի սահմանները պաշտպանող զինուորների համար գումարով նուագել: Մենք բոլորս էլ խորապէս պարտական ենք բանակին: Ինչ էլ անենք, որքան էլ ջանանք՝ թշնամու գնդակի ճանապարհը կեանքով փակող զինձառայողների նուիրումն ու սիրանքը չենք կարող փոխհատուցել: Ես մեր զինուորի ու սպայի հանդէպ իմ ամբողջ սէրն ու երախտագիտութիւնն եմ դնելու նուագիս մէջ:



– Կան երաժիշտներ, որոնք զօրամասերում իրենց ելոյթը համարում են աշխատանք, որի համար պէտք է վարձատրուեն: Եւ դա բոլորովին էլ չի խանգարում, որ բոցաշունչ հայրենասիրական տեքստեր արտասանեն առիթի դէպքում: Դուք գնալու էք զօրամաս՝ Ձեր նուագախմբով, Ձեր երաժշտական տեխնիկայով, ու զարմանալի չէր լինի...

– Ջարմանալի կը լինէր: Ես նուագել եմ «Ջինուորի տանը», տեսել եմ, թէ ինչ գրկանքների ու զոհողությունների գնով ապրիլեան պատերազմի ժամանակ մեր սպաներն ու զինուորները կարողացան պաշտպանել Հայրենիքի սահմանները ու յետ շարտել թշնամուն, տեսել եմ, թէ ինչպիսի անօրինակ սխրանքների միջոցով են ձախողում թշնամու բազմաթիւ դիվերսիաները: Ամէն օր գլուխս բարձին դնելիս ես յիշում եմ, որ բազմաթիւ երիտասարդ տղաներ սահմանին՝ վտանգին դէմ յանդիման հսկում են իմ խաղաղ, անվրդով քունը:

– Դուք այդքան երիտասարդ էք: Բայց հասցրել էք երկու երաժշտական դպրոց աւարտել, ապա՝ կոնսերվատորիա, ասպիրանտուրա, վեց մենահամերգ էք ունեցել... Ո՞րն է Ձեր նպատակների բարձրակէտը:

– Ես շատ եմ աշխատում ու շատ եմ աշխատել: Ամէնը, ինչին հասել եմ, իմ աշխատասիրութեան շնորհիւ է: Չեմ կարող ասել, որ ես բացառիկ տաղանդ ունեմ ու հեշտօրէն եմ յաղթահարել բոլոր դժուարութիւնները: Պարզապէս, ես իմ առջեւ դրուած նշաձողը անընդհատ բարձրացնում եմ ու ամբողջ ուժերս ներդնում, որ հասնեմ արդիւնքի: Նպատակի բարձրակէտ չկայ, բայց կանգ առնելն էլ ճիշտ չէ: Իմ կարծիքով՝ իւրաքանչիւրս պիտի ձգտենք մեր ունակութիւնների չափով առաւելագոյնին հասնել մասնագիտութեան մէջ: Ես ժամերով, օրերով, ամիսներով կարող եմ նուագել նոյն նոտան, տակտը, մինչեւ ստացուի այնպէս, ինչպէս ինքս եմ ուզում:

– Ի՞նչ է պէտք, որ քանոնը երաժշտի մատների տակ հնչի իր ողջ հմայքով ու նրբերանգներով:

– Մեղեդին ծնւում է քո ներքին խտացումներից: Մինչեւ քանոնից հնչելը մեղեդին անցնում է քո միջով, ու իւրաքանչիւր հնչիւն լցւում է քո ներքին գոյներով, բովանդակութեամբ: Հնչիւնը զարմանալի մեծ տարողութիւն ունի, ամէն ոք այն կարող է լցնել իր չափով, ու ոչ ոք չգիտի, թէ որն է սահմանը:

– Ի՞նչ է պէտք, որ հնչիւնը լեցուն լինի, գունեղ լինի, բովանդակալի լինի...

– Պէտք է, որ մարդը երկար տարիներ՝ օրորոցից մինչեւ նուագարանին հասնելը կրթուի, դաստիարակուի, լցուի առաքինութիւններով ու բովանդակութեամբ...

– Առաքինութիւններով...

– Այո՛, եթէ դու բարի չես, քո նուագած մեղեդին չի կարող ջերմացնել մարդկանց սրտերը ու բարութեամբ լցնել: Բարութեան գոյնը կը պակասի: Եթէ դու խելացի չես, քո ասելիքը կը լինի կցկտուր, անբովանդակ, ու մարդիկ քեզ չեն լսի: Եթէ դու ազնիւ չես, ունկնդիրը քեզ չի հավատայ:

– Լրագրութեան մէջ էլ է նոյնը: Գրում են հարիւրաւորները, լաւ կամ վատ, բայց քչերն են կարողանում դէպի իրենց ձգել ընթերցողին: Միրոյ, ազնութեան, բարութեան էներգիան մարդիկ արեամբ են զգում. նրանց չես խաբի:

– Նոյն ստեղծագործութիւնը նուագում են հազարաւոր մարդիկ, բայց եզակիների, ընտրեալների անուններն են մնում պատմութեան մէջ: Տեխնիկան կարող են յաղթահարել շատերը, բայց քչերը կարող են հնչիւնը լցնել բովանդակութեամբ ու ապրումներով...

– Արդէն հասկացայ՝ հնչիւնը բովանդակութեամբ լցնելու համար էք ե՛ւ հանրակրթական, ե՛ւ երաժշտական դպրոցը, ե՛ւ կոնսերվատորիան, ե՛ւ ասպիրանտուրան աւարտել գերազանցութեամբ...

– Նաեւ պարի եմ գնացել, յաճախել եմ մանկական ֆիլիարմոնիա, դեռեւս դպրոցական տարիներից նուագել եմ կոնսերվատորիայի ուսանողների հետ, աշխատել եմ տարբեր համոյթներում ու համերգներով շրջել եմ ամբողջ հանրապետութիւնով: Մասնակցել եմ փառատօների, մրցոյթների, միաժամանակ՝ խաղացել եմ բակում ու շատ ընկերներ եմ



ունեցել: Կարդացել եմ անյագ, այցելել եմ թանգարաններ, նկարչական ցուցահանդեսներ: Այս ամէնը ես անուանում եմ կրթութիւն ու աշխատանք, որ լաւ երաժիշտ դառնալու նախադրեալներն են:

...Ես նաեւ ձախողումներ եմ ունեցել: Դպրոցն աւարտելուց յետոյ ցածր գնահատական ստացայ սովորելուից ու չընդունուեցի կոնսերվատորիա: Բազմաթիւ մրցոյթներից ու փառատօներից վերադարձել եմ ձեռնունայն: Մի քանի անգամ վայր եմ դրել քանոնը:

-Որոշել էք ուրիշ աշխատանքով զբաղուել:

-Ո՛չ: Որոշել եմ ճանապարհ անցնել, լցունել, կատարելագործուել: Ու յաջողել եմ: Իմ ձախողումները նոր թոնիքների յենարան են եղել: Բախտս բերել է, որ ես շատ լաւ ուսուցիչներ եմ ունեցել դպրոցում, կոնսերվատորիայում՝ յայտնի քանոնահարուստի Յասմին Լեյլոյեանը, իսկ մագիստրատուրայում ու ասպիրանտուրայում՝ Ալվարո Միրզոյեանը: Նրանք այնքան զգոյշ ու նրբանկատօրէն են ուղղորդել ինձ, այնքան անաղմուկ, բայց հաստատուն են եղել կողքիս: Դա մեծ վարպետութիւն է:

-Դուք շատ յաճախ նուագում էք ծերանոցներում:

-Ես այնտեղ եմ, որտեղ սիրոյ ու ջերմութեան կարիք կայ: Ծերանոցում մի պապիկ՝ Ռոբերտ Պետրոսեանը, ստեղծագործութիւն էր գրել՝ «Երգ սիրոյ մասին»: Նա խնդրեց, որ կատարեմ այդ ստեղծագործութիւնը: Այնպէս էի յուզուել: Երբ նուագում էի, պապիկը յուզմունքից լաց էր լինում: Ես երջանիկ եմ, որ իմ քանոնը ի խորոց սրտի սէր էր բաժանում:

-Ի խորոց սրտի արտայայտութիւնը ինձ յիշեցրեց, որ Դուք «Տաղարան» հնագոյն երաժշտական համոյթի մենակատարն էք 2012 թուականից: Մա մեծ ձեռքբերում է. Ձեր ջանքերը ապարդիւն չեն անցել, Ձեզ նկատել են:

-Ձեռքբերում է այն, երբ դու Հայաստանում ես, իսկ քո երաժշտութիւնը հնչում է ֆրանսիական ռադիոյով, արաբական երկրների երաժշտական ալիքներով:

Զգիտես ինչու, բոլորը խօսում են ռաբիս երգի մասին, բայց քչերն են նկատում ռաբիսը ազգային նուագարանների կատարմամբ, ինչը աւելի եղկելի է ու վտանգաւոր: Իմ քանոնը երբեք չի կլկլացնում: Ես հնչեցնում եմ մեր ազգային անաղարտ մեղեդին: Ու իմ բոլոր համերգներին ներկայանում եմ պրեմիերաներով:

-Ձեր մտայղացումն է, չէ՞, քանոնը ներդաշնակել երգեհոնին:

-Այո՛: Ես «լսեցի» այդ համանուագը: Խնդրեցի կոմպոզիտոր Երվանդ Երկանեանին, եւ նա ինձ նուիրեց միանգամից երեք ստեղծագործութիւն երգեհոնի և քանոնի համար՝ «Տաղ Աստուածածնի», «Էլեգիա» եւ «Մանկան ամանորեայ երազը» կոնցերտը: Շատ գեղեցիկ արարումներ էին:

-Մի անգամ ասացիք, որ առաքելութեամբ էք եկել աշխարհ:

-Միայն ես չէ, բոլորս ենք առաքելութեամբ եկել աշխարհ: Առաջադրանքով: Մի մասը կատարում է առաջադրանքը, մի մասը՝ ոչ: Երաժշտութիւնը հոգու թերապիա է: Ես հոգու բժիշկ եմ: Իմ հնչիւնը հոգու դեղ է:

Իմ մենահամերգներին ներկայ են եղել այն կոմպոզիտորները, որոնց ստեղծագործութիւնները կատարել եմ՝ Երուանդ Երկանեան, Վարդան Աճեմեան: Ու նրանք նոյնպէս իրենց ներկայութեամբ գոյն ու շունչ են տուել իմ հնչիւնին, ինչպէս իմ կարդացած գրքերի ամէն տողը, ինչպէս բոլոր այն մարդիկ, որոնցից մի լաւ բան եմ սովորել:

-Մարիաննա, բարի ուղևորութիւն Ձեզ դէպի Պաշտպանութեան բանակի զօրամասեր:

ԳԱՅԻԱՆԷ ՊՕՂՈՍԵԱՆ

ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐ

13/11/2023

ԿԻՊՐԱՀԱՅ

ԲՈՒՍԱԳՐԱԻՄԱԼ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՇՈՒՐՋ ՆՈՐ ՈՏՆՁԳՈՒԹԻՒՆՆԵՐ



Կիպրոսի թրքական բռնագրաւեալ մասին մէջ գտնուող Վիքթորիա փողոցի Ս. Աստուածածին եկեղեցւոյ տարածքին առնչութեամբ, վերջերս կիպրական ու թրքական մամուլին մէջ լոյս տեսած են մտահոգիչ յօդուածներ՝ այդ տարածքին վրայ կատարուած թրքական նոր ոտնձգութեանց գծով:

Արդարեւ, Երեքշաբթի 7 Նոյեմբեր 2023-ին, թրքական ոյժերու կողմէ բռնագրաւուած հիւսիսային Կիպրոսի ղեկավարութիւնը բացումը կատարած է հիմնարկութեան մը՝ հայկական Մելիքեան-Ուզունեան եւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ շրջափակին վրայ:

Նշենք որ շուրջ տասնամեակ մը առաջ, հայկական այս ամբողջ համալիրը, բաղկացեալ մանկապարտէզէ մը, նախակրթարանէ մը, Հայկական եկեղեցիէն եւ Առաջնորդարանէն բարենորոգուեցան USAID-ի եւ UNDP-ի մեծագումար միջոցներով եւ հովանաւորութեամբ, նպատակ ունենալով քաջալերել խաղաղութեան եւ վստահութեան խթանումն ու քայլ առ քայլ վերահաստատումը կողմերու միջեւ: Մինչդէռ տեղի ունեցած այս նոր նախաձեռնութիւնը՝ բացման արարողութիւնն է հիմնարկութեան մը, որուն նախագահն է Էրտողանի փեսան՝ Մելճուք Պայրաքթարը, որ յայտնի է որպէս գլխաւոր արտադրողը այն Պայրաքթար տրոններուն, որոնք վճռական դերակատարութիւն ունեցան Արցախեան 44-օրեայ պատերազմին ի վնաս հայկական կողմին: Մեկնաբանութիւնները կը թողունք ընթերցողներուն:



Նախաձեռնութիւնը յստակօրէն հերքումն իսկ է՝ UNDP-ի հսկայական ծախսերով ի գործ դրուած փոխադարձ վստահութեան վերստեղծման ջանքերուն եւ տեղի կու տայ մեր արդար վրդովմունքին եւ ընդվզումին:

Այս մտահոգիչ հարցին առնչութեամբ, Կաթողիկոսական Փոխանորդ՝ Գերշ. Տ. Խորէն Արքեպիսկոպոսի նախագահութեամբ Շաբաթ, 11 Նոյեմբեր 2023-ին, Ազգային Առաջնորդարանի մէջ Երեսփոխանական Ժողով գումարուած է քննելով վերոնշեալ հարցը, պարտն ու պատշաճը տնօրինելու համար:

ԱԶԱՏ ԽՕՍՔը կը գտնէ որ տեղի ունեցածը լուրջ ոտնձգութիւն մըն է թրքական կողմին կողմէ հայկական հնամենի տարածքէն ներս, ինչպէս նաեւ՝ կոպիտ խախտումը առաջադրուած փոխադարձ վստահութեան խթանումին եւ կերտումին եւ պէտք է խստագոյնս դատապարտուի Միացեալ Ազգերու պատկան Մարմիններու, ինչպէս նաեւ կղզիին խաղաղութեան եւ կողմերու փոխադարձ վստահութեան խթանումով մտահոգ պատկան անձանց եւ մարմիններու կողմէ: Ե.Գ.

ՅՕՂՈՒԱԾՆԵՐ

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ 29,800 ՔԱՌ. ՔՄ.-Ի ՄԱՍԻՆ

Արեգ Եափուճեան, Սիտնի, Աւստրալիա, 13 Հոկտեմբեր 2023



1987 թուականին Հայ Ազգային Հիմնադրամին հրաւերով, Գահիրէ այցելեց Հայ Գրականութեան Մպարապետ Մերօ Խանգաղեանը: Այդ տարիներուն, Եգիպտոս այցելելու համար պէտք է մէկը երաշխաւոր ըլլար որ անձը կարենար երկիր մուտք գործել: Հայրս, որ նախապէս Հայաստան այցելութիւններուն արդէն բարեկամութիւն հաստատած էր անոր հետ, եղաւ Մերօ

Խանգաղեանին երաշխաւորը:

Մերօ Խանգաղեան, իբրեւ Հայաստանէն ժամանած հիւր, հանդիպումներ ունեցաւ եգիպտահայ գաղութի բոլոր կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն հետ, բան մը որ սովորութիւն չէր այդ օրերուն: Իր հանդիպումներուն ընթացքին ան խիզախօրէն արտայայտուեցաւ Հայաստանէն ներս ազգայնական շարժումին մասին եւ անդրադարձաւ այդ ժամանակ քիչ լսուած հարցի մը՝ Լեռնային Ղարաբաղի Բնքնավար Մարզի հայ բնակչութեան ազգային ինքնորոշման իրաւունքին:

1988 թուականին արդէն ծագեցաւ Արցախեան շարժումը, որուն յաջորդեցին Սումկայիթի, Կիրովապատի, այլ վայրերու, յետոյ՝ նաեւ Բաքուի ջարդերը: Հակառակ Խորհրդային Ատրալեճանի իշխանութիւններու կոպիտ ընդդիմութեան որ Արցախը միանայ Խորհրդային Հայաստանին, 1 դեկտեմբեր 1989-ին Խ. Հայաստանի Գերագոյն Խորհուրդը եւ Լեռնային Ղարաբաղի Ազգային Խորհուրդը համատեղ կայացուցին ԼՂԻՄ-ի եւ Խ. Հայաստանի վերամիաւորման որոշումը:



Խ. Միութիւնը բռնած էր փլուզման ճամբան, երբ 2 սեպտեմբեր 1991-ին Լեռնային Ղարաբաղի Ազգային Խորհուրդը հրապարակեց «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին» փաստաթուղթը:

Եւ այսպէս առաջ կու գար Արցախի ազատագրման զինեալ պայքարը, որուն զոհ կ'երթային հազարաւոր արցախցիներ, կը սպանուէին հազարաւոր ատրպէյճանցիներ: Արիւնալի կռիւներէ ետք, Արցախի հայութիւնը կրցաւ ազատագրել Լեռնային Ղարաբաղի տարածքը եւ եօթը մերձակայ շրջաններ:

ԼՂՀ պաշտպանութեան բանակի յաղթարշաւին շնորհիւ, Ատրպէյճանն այլ ելք չունէր բացի զինադադարի պայմանագիր կնքելէ: 1994-ի մայիսի կէսին Հայաստանի, Ատրպէյճանի եւ Արցախի ներկայացուցիչներ զինադադար կը ստորագրէին՝ որոշ ճանաչում շնորհելով Արցախի ինքնակոչ հանրապետութեան:

Այդ ինչպէ՞ս եղաւ որ Հայաստան այսօր ինքզինք գտաւ այսպիսի յուսահատ ու անկարող կացութեան մէջ:

Յաջորդող 25 տարիներուն բանակցային սեղանին պիտի դրուէին Արցախի կարգավիճակի կարգաւորման 7 հիմնական տարբերակներ, որոնք յայտնի են հետեւեալ անուանումներով՝ Փաթեթային, Փուլային, Ընդհանուր պետութիւն, Քիուէսթեան սկզբունքներ, Մատրիտեան սկզբունքներ, Քազանեան ծրագիր, եւ, վերջինը՝ Լաւրովի ծրագիր:

1. 1995-1996 թուականներու Փաթեթային տարբերակը կը նախատեսէր, որ կողմերը պիտի ճանչնային Ատրպէյճանի եւ Հայաստանի տարածքային ամբողջականութիւնը, իսկ Լեռնային Ղարաբաղը պէտք է պետական եւ տարածքային կազմաւորում ըլլար Ատրպէյճանի կազմին մէջ: Այս տարբերակով, Լեռնային Ղարաբաղն ունենալու էր իր Սահմանադրութիւնը, դրօշը, զինանշանը, օրհներգը, ոստիկանութիւնն ու ազգային պահակախումբը, ընտրուած իշխանութիւնները: Լեռնային Ղարաբաղի քաղաքացիները պիտի ունենային Ատրպէյճանի անձնագիրներ՝ «Լեռնային Ղարաբաղ» յատուկ յաւելագրումով, բայց Հայաստանի Հանրապետութիւնը զանոնք օտարերկրացի պիտի չնկատէր: Ատրպէյճանի բանակը, անվտանգութեան ուժերն ու ոստիկանութիւնը միայն Լեռնային Ղարաբաղի իշխանութիւններու թոյլտուութեամբ իրաւունք պիտի ունենային մուտք գործել Լեռնային Ղարաբաղի տարածք:

Այս տարբերակին կտրականապէս դէմ էր Արցախը, քանի որ իր հռչակած անկախութիւնը կ'անտեսէր:

2. Քանի մը ամիս ետք, երբ յայտնի դարձաւ, որ ԼՂ-ի կարգավիճակի հարցին շուրջ համաձայնութիւն չկայ, Եւրոպայի անվտանգութեան եւ համագործակցութեան կազմակերպութեան (ԵԱՀԿ) Մինսքի միջնորդ խումբին համանախագահները կողմերուն առաջարկեցին հարցը լուծել փուլ առ փուլ: Նախ՝ հայկական զօրաբաժիններու դուրսբերում ԼՂ-ի յարակից շրջաններէն, բաժանարար գօտիներու ստեղծում, միջազգային խաղաղապահներու տեղակայում, տեղահանուածներու



վերադարձ, ապաշրջափակում ու հաղորդակցութիւններու վերականգնում: Առաջին փուլի կէտերն իրագործելէ ետք, երեք կողմերը պէտք է շարունակէին խաղաղութեան հաստատման գործընթացը՝ ԼՂ-ի վերջնական կարգավիճակը ճշգրտելու համար:

Հայաստանի ու Ադրբեջանի նախագահները, որոշ վերապահումներով ընդունեցին այս տարբերակը որպէս հիմք հետագայ բանակցութիւններուն, սակայն Արցախի դարձեալ դէմ եղաւ այս ծրագրին:

Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանը կողմ էր հարցը բանակցութիւններով ու փոխզիջումներով օր առաջ լուծելուն, քանի որ, ըստ անոր, ժամանակը Հայաստանի Հանրապետութեան օգտին չէր աշխատեր եւ փուլային տարբերակը այն հնարաւոր առաւելագոյնն էր, որ հայկական կողմը կրնար ստանալ: Այս տեսակէտին հետ, սակայն, համաձայն չէին Հայաստանի ատենի վարչապետ Ռոբերթ Քոչարեանը, պաշտպանութեան նախարար Վազգէն Սարգսեանը եւ ներքին գործերու նախարար Սերժ Սարգսեանը: Անոնք համոզուած էին, որ հետագային միջնորդներէն կրնան ստանալ այնպիսի տարբերակ, ուր ԼՂ-ը Ատրպէյճանի մաս չէր կազմեր:

Այս տարաձայնութիւնները յանգեցուցին ներքաղաքական ճգնաժամի, եւ նախագահ Լեւոն Տէր Պետրոսեան ի վերջոյ հրաժարեցաւ իր պաշտօնէն: Նախագահական աթոռին բազմեցաւ Արցախի նախկին նախագահ Ռոպերթ Քոչարեան, որուն Տէր Պետրոսեան նախապէս վստահած էր ՀՀ-ի վարչապետի պաշտօնը:

3. Արցախի կարգաւորման յաջորդ ծրագիրը 1998-ին էր, երբ շրջանառութեան մէջ դրուեցաւ Ռուսիոյ մշակած «Ընդհանուր պետութեան» գաղափարը. Լեռնային Ղարաբաղն ու Ատրպէյճանը միասնաբար պիտի կազմէին մէկ պետութիւն: Միաժամանակ, ԼՂ-ը ունենալու էր սեփական սահմանադրութիւն, կառավարման մարմիններ, դրօշ, զինանշան ու օրհներգ, հայերէնը պիտի ըլլար հիմնական պաշտօնական լեզուն, իսկ Ատրպէյճանէրէնը՝ երկրորդ պաշտօնական լեզուն: Հակամարտութեան լուծման այս տարբերակով եւս, հայկական զօրաբաժինները պէտք է դուրս գային Լեռնային Ղարաբաղի յարակից շրջաններէն:

«Ընդհանուր պետութեան» գաղափարին ընդդիմացան հակամարտութեան երեք կողմերն ալ՝ ՀՀ-ը, Ատրպէյճանն ու Արցախը:

1999-ի աշնան սկիզբը, երբ ՀՀ-ն ու Ատրպէյճանը կը քննարկէին նոր ծրագիր մը՝ Մեղրիի եւ Բերձորի շրջանները փոխանակելու տարբերակը, Երեւանի մէջ տեղի ունեցաւ 27 հոկտեմբերի ահաբեկչութիւնը, որու ընթացքին սպանուեցան 8 պետական գործիչներ, որոնց մէջ էին լայն ժողովրդականութիւն վայելող վարչապետ Վազգէն Սարգսեանն ու Ազգային ժողովի նախագահ Կարէն Դեմիրճեանը:

4. Քի Ուէսթի մէջ 2001 թուականի բանակցութիւնները Ամերիկայի Միացեալ Նահանգներուն նախաձեռնութիւնն էր: Ըստ այս տարբերակին, ԼՂ-ը Բերձորի միջանցքով պիտի միանար Հայաստանին, իսկ Ատրպէյճանը Մեղրիի միջանցքով՝



Նախիջեւանին: Ասկէ զատ մանրամասնութիւններ չկային այս գաղտնի տարբերակին մասին, զոր Ատրպէյճան մերժեց:

Այստեղ կ'արժէ յիշել, որ քիուէսթեան բանակցութիւններէն սկսած, ԼՂՀ-ը որպէս կողմ դուրս մնաց բանակցային գործընթացէն. ՀՀ-ը այլեւս ինք պիտի ներկայացնէր Արցախի հայութեան շահերը: Սա ՀՀ-ի վարած արտաքին քաղաքականութեան կոպտագոյն առաջին սխալն էր:

2008-ին գրի առած մտորումներուս մէջ նշած էի հետեւեալը: Այս հակամարտութիւնը իրականութեան մէջ Ատրպէյճանի եւ արցախահայութեան միջեւ է՝ իբրեւ վերջինիս ազգային ինքնորոշման հարց: ՀՀ-ը որեւէ իրաւասութիւն չունի եւ ի վիճակի չէ արցախահայութեան անունով բանակցելու ատրպէյճանցիներուն հետ: Արցախահայութիւնը որոշում տուաւ եւ անկախութիւն հռչակեց Ատրպէյճանէն, սակայն այս անկախութիւնը ճանչցաւ ո՛չ մէկը, մանաւանդ՝ ո՛չ Ատրպէյճանը եւ... ո՛չ ալ ՀՀ-ը:

Ռուպերթ Քոչարեանի գործած քաղաքական այս կոպիտ սխալը, անշուշտ, թէ՛ Ատրպէյճանի եւ թէ՛ Թուրքիոյ գործին եկաւ. անոնք հարցը հմտօրէն դարձուցին ՀՀ-ի զինուժին կողմէ «Ատրպէյճանի գրաւեալ հողատարածքներու ազատագրման խնդիր»:

5. 2003-ին բանակցութիւնները վերսկսան: Չորս երկար տարիներէ ետք, «Մատրիտեան սկզբունքներ» անուան տակ փաստաթուղթ մը մէջտեղ եկաւ: Յատկանշական է, որ անորմով՝ առաջին անգամ շրջանառութեան մէջ կը դրուէր Արցախի վերջնական կարգավիճակի հարցը ԼՂ-ի բնակչութեան կողմէ հանրաքուէով որոշելու գաղափարը: Մնացած հարցերը՝ տարածքներու վերադարձ, խաղաղապահներ կամ անվտանգութեան երաշխիքներ, կը մնային նախորդ տարբերակներուն նման: Հանրաքուէի ժամկետներն ու մանրամասնութիւնները հետագային պէտք է որոշուէին Մինսքի խումբի համանախագահող երկիրներուն հետ համագործակցաբար: Ուստի, ԼՂ-ի վերջնական կարգավիճակին հարցը կը մնար անորոշ ու անիրական: Ատրպէյճան կը պնդէր, որ ԼՂ-ի կարգավիճակին շուրջ որեւէ հանրաքուէի պէտք է մասնակցին Ատրպէյճանի բոլոր քաղաքացիները, քանի որ այդ հանրաքուէն կը վերաբերի երկրի տարածքային ամբողջականութեան:

2008-ի գարնան Քոչարեան նախագահական աթոռը յանձնեց իր գործընկերոջը՝ նոյնպէս արցախցի Սերժ Սարգսեանին, որ անկարող եղաւ որեւէ գործնական լուծումի հասնելու:

Արցախի հարցին լուծումը դարձեալ կը ձգձգուէր ու կը ձգձգուէր...

6. Եւ այսպէս, բանակցութիւնները հասան յաջորդ տարբերակին՝ 2011-ի Քազանեան փաստաթուղթին, ուր գրուած սկզբունքները ԼՂ-ի կարգավիճակին մասով չէին տարբերէր 2007-ի Մատրիտեան տարբերակէն: Դարձեալ կը նախատեսուէր ԼՂ-ի յարակից եօթը տարածքներու վերադարձ, միջանկեալ կարգավիճակ ու հանրաքուէ, որուն մանրամասնութիւնները պէտք է որոշուէին ապագային:



Ատրպէյճան այս առաջարկը նոյնպէս մերժեց. իրեն համար անընդունելի էր որ ապագայ հանրաքուէին արդիւնքներէն մէկը հնարաւորութիւն տար ԼՂ-ը Ատրպէյճանէն դուրս տեսնելու:

7. Եւ, վերջապէս, ծնունդ առաւ Լաւրովի ծրագիրը, որ առաջին անգամ քննարկուեցաւ 2015-ին, աւելի վերջ՝ 2016-ին ՀՀ-ի սահմանին ռազմական գործողութիւններէն ետք: Ըստ այս ծրագրին, եօթը շրջանները պիտի վերադարձուէին Ատրպէյճանին՝ 5 + 2 բանաձեւով, կը նախատեսուէին փախստականներու վերադարձ եւ ռուս խաղաղապահներու տեղակայում: Դարձեալ յստակ խօսք չկար Արցախի կարգավիճակին մասին:

Յոյս ունենալով, որ այս ծրագիրը կրնար հիմք դառնալ ԼՂ-ի յարակից շրջաններու վերադարձին, Ատրպէյճան պատրաստակամ էր ընդունիլ Ռուսիոյ խաղաղապահ առաքելութիւնը, որ պիտի փոխարինէր հայկական զինուժը եւ ապահովէր վերաբնակիչներուն անվտանգութիւնը, մինչեւ որ տարածքները վերադառնային Ատրպէյճանի վերահսկողութեան տակ: Միւս կողմէ, ՀՀ-ը պատրաստ էր աջակցելու Ռուսիոյ մասնակցութեամբ բազմազգ ներկայութեանը, սակայն այդ հաւաքակազմը պէտք չէ զինուած ըլլար, այլ ունենար միայն դիտորդի կարգավիճակ, եւ Արցախէն հայկական զինուժի հեռացման որեւէ պայման պէտք չէ դրուէր: Արցախի վերջնական կարգավիճակը կը մնար անորոշ եւ կը դրուէր ԵԱՀԿ-ի Մինսքի խումբին հովանաւորութեան տակ:

ՄԱԿ-ը վաղուց յայտարարած էր թէ պէտք է յարգուի Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը, սակայն ՀՀ-ի իշխանութիւնները 25 տարի կը հակադարձէին «Արցախը Հայաստան է եւ ... վե՛րջ», «Ո՛չ մի թիզ հող չե՛նք տալու», «Նո՛ր պատերազմ՝ նո՛ր տարածքներ» նշանախօսքերով:

Արցախի հայութիւնը, օգտուելով այս յարաբերաբար խաղաղ մթնոլորտէն, կրցաւ բաւական յառաջխաղացք արձանագրել: Որեւէ այլ երկրի ժողովուրդին նման, ան ինքնիշխան պետութիւն հիմնած էր՝ առանձին Սահմանադրութեամբ եւ պետական համապատասխան բոլոր կառոյցներով: Կարծէք հարցը լուծուած ըլլար, Արցախի մէջ տեղի կ'ունենային ընտրութիւններ, մշակութային ձեռնարկներ, շինարարական աշխատանքներ... Հայաստանի եւ Արցախի Հանրապետութիւնները գրեթէ միաձուլուած էին եւ կեդրոնացած իրենց բարգաւաճման հարցերուն վրայ:

Մինչ այդ սակայն, աշխարհաքաղաքականութիւնը էական փոփոխութիւններու կ'ենթարկուէր... Հին ոյժերէն ումանք կը նահանջէին եւ նոր խաղցողներ մէջտեղ կու գային: Ռուսիա երկար ատենէ ի վեր կը նահանջէր՝ հակառակ Փութինի բոլոր ճիգերուն: Ան կը ջանար որ Ռուսիոյ Դաշնութիւնը վերատիրանայ ցարական Ռուսիոյ եւ երբեմնի Խորհրդային Միութեան գերպետութեան փառքին: Միւս կողմէ, մէջտեղ կու գար Էրտողանի Թուրքիան, որ վերջին տարիներուն, ակռաները սրած, կը յաւակներ աշխարհի զանազան անկիւններուն մէջ, Եւրոպայէն մինչեւ Միջին Արեւելք ու հասնելով Չինաստան, իր ձայնը բարձրացնել, հրահանգներ տալ եւ միջամտել ուրիշ երկիրներու ներքին հակամարտութիւններուն՝ Օսմանեան տէրութեան երանելի օրերը վերադարձնելու երազներով:



Մերժ Սարգսեան 2018-ին յայտարարեց, թէ բանակցութիւնները մտած էին փակուղի, իսկ «Թաւշեայ յեղափոխութիւն»ով զայն փոխարինած Նիկոլ Փաշինեան հաւաստիացուց, թէ որեւէ լուծում անկարելի էր ընդունիլ առանց արցախահայութեան հաւանութեան, որ 2001-էն ի վեր արդէն դուրս քշուած էր բանակցութիւններէն:

Բոլորին համբերութիւնը կարծէք հատած էր, եւ պահը եկած էր Ռուսիոյ, Թուրքիոյ եւ Ատրպէյճանի, որ հարցը իրենք իրենց միջեւ լուծեն եւ վե՛րջ: Լուծման հասնելու համար օրէնքի ուժը ապարդիւն մնացած ըլլալով, կարգը եկաւ ուժի օրէնքին:

2020-ի աշնան, ատրպէյճանական բանակը իր ետին ունենալով Թուրքիան, Փաքիստանը, Իսրայէլը, սուրիացի թիւրքմէն ու ծայրայեղական իսլամ վարձկաններ, օժտուած թրքական եւ իսրայէլական բարձր ճշգրտութեան, արդիական ԱԹՄ-երով ու այլ զենքերով, 44 օր անընդհատ ոմբակոծելով մեծ մասամբ ոչ-ռազմական թիրախներ Արցախի տարածքին, յաջողեցաւ վերականգնել իր հսկողութիւնը Արցախի մեծ մասին վրայ, ներառեալ Շուշին եւ ԼՂՀ-ի շուրջ «անվտանգութեան գօտի»ի եօթը շրջանները:

Միայն վերջին պահուն, երբ Արցախի վերջնական անկումը ժամերու հարց էր, Ռուսիա բարեհաճեցաւ միջամտել, ուղարկելով իր «խաղաղապահ» ուժերը եւ պարտադրել խախտու գինադադար մը հինգ տարուայ ժամկետով: Սա այլ բան չէր եթէ ոչ նոյնինքն Լաւրովի 2015-ին ներկայացուած ծրագիրին պարտադրումը ամբողջ հայ ազգին:

Ո՞րն էր Հայաստանի երկրորդ մեծ եւ մահացու սխալը:

Պատասխանն է՝ ռազմավարական մտածելակերպի պակասը:

Դարձեալ մէջբերեմ 2008-ի մտորումներէս: Հայաստան առ այժմ որոշ չափով կը վայելէ Ռուսիոյ ռազմական աջակցութիւնը, որուն շնորհիւ ան կրցաւ գոյատեւել ի դիմաց կարգ մը սուղ զիջումներու: Սակայն Հայաստան միայն Ռուսիոյ վրայ վստահելով չի կրնար գոյատեւել, մանաւանդ որ ուղղակի սահմաններ գոյութիւն չունին երկու երկիրներուն միջեւ: Անոնք պէտք է անցնին անկայուն Վրաստանի վրայով, որ մասնաւոր արտօնութիւն պէտք է տայ ռուսական ուժերուն, որ իր օդային տարածքն օգտագործեն Երեւան հասնելու համար: Առաւել, կարելի չէ սպասել որ Ռուսիոյ շահերը յաճախ համընկնին Հայաստանի շահերուն հետ, երբ առաջինը պիտի փորձէ սիրաշահիլ նաեւ Հայաստանի հարեւանները՝ Հարաւային Կովկասի մէջ իր ներկայութիւնը պահպանելու համար:

Ռուսիոյ հետ իր յարաբերութիւններուն մէջ Հայաստանի վերջին երեք տարիներու փորձառութիւնը յուսալքիչ պատկեր մը կը ներկայացնէ: Արցախի 44-օրեայ պատերազմին ընթացքին, ինչպէս միշտ, Ռուսիա շուտով հրադադար պարտադրելու որեւէ գործնական քայլ չառաւ: Հակառակ վերջին վայրկեանին իր հովանաւորած նոյեմբերի 9-ի յայտարարութեան, Ատրպէյճան պատերազմի այդ փուլէն ետք, ի տես ռուսական «խաղաղապահ» ուժերուն, շարունակեց ՀՀ-էն ու Արցախէն նոր տարածքներ հատել եւ ոմբակոծել սահմանային դիրքեր ու գիւղեր: Աւելին. Ատրպէյճան անտեսեց միջազգային



բոլոր օրէնքները եւ հարիւրէ աւելի հայ ռազմագերիներ պատանդ վերցուց եւ զանոնք կը պահէ մինչեւ օրս՝ զանոնք սակարկութեան առարկայ դարձնելով:

Ռուսիա, որ ի զուր կը փորձէ իր ծրագրած միութենական պետութիւնը իրականացնել, վերջերս ականատես կ'ըլլայ Արեւմուտքի հետ դիւանագիտական գետնի վրայ ՀՀ-ի յաջողութիւններուն, որ, անկասկած, վնաս պիտի պատճառէ իր ծրագիրներուն: Փութին սկսաւ հրահրել ներքին տագնապներ թէ՛ ՀՀ-ի եւ թէ՛ Արցախի մէջ՝ գլխացաւ պատճառելով ՀՀ-ի ներկայի իշխանութիւններուն, որոնք, ի տարբերութիւն Ատրպէյճանի բռնատիրական վարչակարգին, ընտրուած են ժողովրդավարական քուէարկութիւններով:

Իր ծրագրած միութենական պետութեանը Ատրպէյճանն ալ ներգրաւելու, իսկ Թուրքիան ԱՄՆ-էն հեռացնելու հեռահար նպատակներով, Ռուսիա սակարկութիւններու սկսաւ Թուրքիոյ եւ Ատրպէյճանի հետ՝ Հայաստանի հաշտոյն:

Մինիքը զիջելով՝ ՀՀ-ը Արցախի հետ միասին ընդմիշտ կ'անցնի պատմութեան գիրքերուն՝ իբրեւ երբեմնի հայկական պետականութիւն...

Եւ որոնք աւելի յարմար են աղմուկ ստեղծելու, քան ՀՀ-ի մէջ իշխանութեանց ընդդիմադիր, ռուսամետ «նախկինները», որոնք ամէն կերպ փորձեցին վերադառնալ իշխանութեան: Ասոնց միացան իշխանամուլ պատեհապաշտներ, որոնք առիթ կը փնտռեն աթոռներու տիրանալու: Ասոնց միացած են նաեւ ուրիշներ, որոնք իսկապէս վշտացած Արցախի պատերազմի ընթացքին իրենց հարազատներու կորուստէն, իրենց ցասումը կը փափաքին յայտարարել միաբանուելով ընդդիմադիրներուն:

Այս նախկինները, որոնք Արցախի կարգավիճակի հարցը իբրեւ պատճառաբանութիւն կ'օգտագործեն, այն նոյնն են որոնք անցեալ 25-30 տարիներուն, երբ իշխանութեան գլուխն էին, իսկ պայմանները՝ աւելի նպաստաւոր, ո՛չ ճանչցան Արցախի անկախութիւնը, ո՛չ Արցախը պաշտօնապէս ընդունեցին իբրեւ ՀՀ-ի անբաժանելի մաս, ո՛չ ալ հրաւիրեցին արցախահայութեանը տեղ գրաւելու Ատրպէյճանի հետ բանակցութիւններու սեղանին շուրջ:

Ընդդիմադիր ոյժերը փողոց իջան, եւ սկսան գոռալ՝ «Նի-կո՛ւ, դաւաճա՛ն»: Սակայն, ի զուր: Որքան աւելի ճնշում կը բանեցուէր Փաշինեանի վրայ, ան աւելի կը մօտենար Արեւմուտքին:

Իր կարգին, Արցախ, իբրեւ փրկութեան միջոց, անընդհատ հաճոյացաւ ռուսերուն: Ան ռուսերէնը պաշտօնապէս ընդունեց իբրեւ Արցախի պետական երկրորդ լեզու, այն յոյսով որ առ ի երախտագիտութիւն, Ռուսիա մշտապէս կը հաստատուի Արցախի մէջ: Մի՛ն յոյսեր...

Ռուսիոյ նկատմամբ Արցախի հայութեան միակողմանի սիրոյ արտայայտութիւններուն դիմաց, Ատրպէյճան պիտի անցնէր յաջորդ քայլին՝ Արցախը ենթարկել շրջափակումի՝ յաւելեալ ճնշում բանեցնելու համար Փաշինեանի վրայ: Եւ այսպէս, 10 ամիս Արցախը



ենթարկուեցաւ շրջափակումի: Ձայն սկսան այսպէս կոչուած բնապահպանները, ու երբ յայտնի դարձաւ թէ որեւէ լուրջ հակադարձութիւն չկայ արտաքին աշխարհէն, շրջափակումն ստանձնեցին Ատրպէյճանի անվտանգութեան ուժերը: Վերջին երեք ամիսներուն որեւէ սննդամթերք, դեղորայք եւ ամէն տեսակի կարիքներ դադրեցան Բերձորի միջանցքով մուտք գործել Արցախ: Ռուսիոյ «խաղաղապահ» ուժերը, որ նոյեմբերի 9-ի եռակողմ յայտարարութեամբ ստանձնած էին Արցախի բնակչութեան անվտանգութեան երաշխաւորի պարտաւորութիւնը, ատրպէյճանցիներու կողքին պատին տակ նստած, իրենց աչքերուն առջեւ տեղի ունեցող ցեղասպանութեան նկատմամբ անտարբեր, իրենց առօրեայ կեանքը կը շարունակէին յուօրէն... Անդին, Արեւմուտքը ամէն օր կը յայտարարէր, թէ Ատրպէյճան պարտաւոր է ապահովել Բերձորի միջանցքին անխափան աշխատանքը եւ ... ուրիշ ոչի՛նչ:

Այս ճնշումները առաջ բերին քաղաքական ներքին լարուածութիւն Արցախի մէջ: Անոնց հետեւանքով, նախագահ Արայիկ Յարութիւնեան – որ կը ծրագրէր այցելել Սոֆիա՝ հարցի լուծման արեւմտեան տարբերակներ քննարկելու –, ինչ-ինչ ճնշումներու տակ կը հրաժարէր եւ կը փոխարինուէր աւելի՛ ռուսամետ անձով մը: Ընդդիմութիւնը յոյս ուներ, որ նոր նախագահ մը, ի տարբերութիւն Արայիկ Յարութիւնեանի, կը կարողանայ Արցախը դուրս հանել ծանր վիճակէն:

Մէկ շաբաթ հազիւ անցած, Ատրպէյճան լայնածաւալ յարձակում ձեռնարկեց Արցախի դէմ՝ գործի դնելով իր ամբողջ զինանոցը՝ ռազմական օդանաւեր, անօդաչու թռչող սարքեր, հրետանային եւ հրթիռային միջոցներ: Անողորմ շրջափակումէ, Արցախի բնակչութիւնը սովամահութեան ենթարկելէ եւ հիւծելէ յետոյ, Ատրպէյճան անցաւ Արցախի հայոց ցեղասպանութեան վերջին՝ արիւնալի փուլին:

Այս բոլորը տրամաբանական հետեւանքն էին ատրպէյճանական շարունակական յանցագործութիւններու անպատժելիութեան եւ միջազգային հանրութեան՝ նախադարձակն ու զոհը հաւասարեցնելու անբարոյական քաղաքականութեան:

Արցախի պաշտպանութեան բանակը յամառ դիմադրութիւն ցոյց տուաւ զգալի վնասներ պատճառելով Ատրպէյճանի բանակին: Սակայն ուժերն անհաւասար էին: Ատրպէյճան ի վերջոյ գրաւեց Արցախի որոշ ռազմավարական բարձունքներ, ճանապարհներ եւ քանի մը բնակավայրեր:

Բախումները դադրեցան դարձեալ ռուս «խաղաղապահ»ներու միջամտութենէն ետք: Յանկարծ լուր տարածուեցաւ, թէ Արցախի նորընտիր նախագահն ու անոր թիկունք կանգնող ուժերը համաձայնած են լուծարել ոչ միայն Արցախի պաշտպանութեան բանակը, այլեւ Արցախի Հանրապետութեան բոլոր պետական հիմնարկներն ու կազմակերպութիւնները: Արցախի նախագահին մէկ ուրիշ հրամանագիրով՝ Արցախի Հանրապետութիւնը յառաջիկայ տարուան առաջին օրը պիտի դադրի գոյութիւն ունենալէ...

Այս իմանալով, Արցախի հայերը զանգուածաբար սկսան լքել իրենց պապենական հողերը, եւ հայ բնակչութեան քանակը 120.000-էն մէկ շաբթուայ մէջ իջաւ հազիւ քանի մը հարիւր



հոգիի, որոնք կա՛մ տարիքոտ, անկար, հաշմանդամ մարդիկ են, կա՛մ անկարող՝ մինակնին դուրս գալու Արցախէն:

Այսպիսով, Արցախի հայութեան կարգավիճակին հարցը դարձաւ Գորիս մագապուրծ հասած 100.000-է աւելի արցախցիներու մարդասիրական օգնութիւն հասցնելու խնդիր...

«Ալ-Ճազիրա» հեռուստակայանը այսուհետ Խանքենտի կոչուող Ստեփանակերտ մտած առաջիններէն էր: Քաղաքն ամբողջովին դատարկուած էր բացի փողոցային շուներէ, քանի մը ձիերէ եւ կառավարութեան շէնքին մէջ բազմած ռուս «խաղաղապահ»ներէն...

Դադիվանքի վերջին վանահայր Դերենիկ աբեղայ Սահակեան, որ երկու սարկաւագներու հետ ռուս «խաղաղապահ»ներու միջնորդութեամբ ՀՀ-ի հետ «սահման» հասած է, հետեւեալը կը պատմէ. «Ընտանի կենդանիները արդէն անտէր թափառում էին փողոցներում, տները գողացւում էին, թալանում էին ամէն ինչ՝ խանութները, տները: Եւ այդ ամէնը կատարւում էր քո աչքերի առջեւ»:

Նոյն ատեն, ատրպէյճանական լրատուական գործակալութիւնները քանի մը օրը մէյ մը կը ցուցադրէին Արցախի ձերբակալուած նախկին նախագահներ, կառավարական պաշտօնեաներ եւ հայ ազատամարտիկներ՝ զանոնք ամբաստանելով իբրեւ ահաբեկիչներ: Եւ ըսել որ այս նոյն դէմքերն էին որ այսքան տարի որոշած էին կառչիլ Ռուսիոյ որպէսզի երաշխաւորէ Արցախի ապահովութիւնը: Առ ի գնահատանք անոնց հաւատարմութեան, Ռուսիա կը յայտարարէ, թէ մտադիր չէ քայլեր ձեռնարկելու Արցախի նախկին նախագահները ազատ արձակելու համար...

Եւ երբ արդէն ամէն բան վերջ գտած էր, Ատրպէյճանի կարգադրութեամբ՝ ՄԱԿ-ը դիտորդներ կը դրկէ Ստեփանակերտ: Անոնք Պաքու կը վերադառնան՝ հաստատելով թէ Ատրպէյճանի կողմէ ուժի որեւէ կիրառում չեն նկատած... Ինչո՞ւ զարմանալ, երբ ի յայտ կու գայ թէ այդ «չեզոք» դիտորդական խումբին անդամները Թուրքիայէն, Հունգարիայէն, Ալպանիայէն, Փաքիստանէն եւ Ռուսիայէն ներկայացուցիչներ էին...

Այս բոլոր զարհուրելի իրարայաջորդ զարգացումները ահաւոր ազդեցութիւն ունեցան հայ ժողովուրդի հոգեբանութեան վրայ, հարց տալով, թէ ինչպե՞ս այս օրուան հասանք:

Ռուսիա, որ Ատրպէյճանի արինարբու ախորժակները գոհացնելով արդէն որդեգրած էր Խանքենդի անունը փոխանակ Ստեփանակերտի, հաւաստիացուց որ ռուս «խաղաղապահ»ները կը շարունակեն առաջատար դեր խաղալ հայ բնակչութեան անվտանգութիւնը ապահովելու մէջ, եւ մեղադրեց ՀՀ-ի իշխանութիւնները այս վերջին զարգացումներուն համար:

Եւ ըսել որ Հայաստանի ընդդիմադիր ուժերը, որոնց միացաւ հոգեւոր դասին ղեկավարութիւնը, արձագանգեցին համանման մեղադրական արտայայտութիւններ



հնչեցնելով՝ առանց գիտակցելու թէ որո՞ւ շահերն է որ կը պաշտպանեն՝ ՀՀ-ի մէջ ներքին քաղաքական լարուածութիւնն աւելցնելով:

Սակայն, ընդդիմադիր ուժերը Արցախի կորուստով չբաւականացան: Անոնք օգտագործեցին Երեւանի քաղաքապետարանի աւագանիի ընտրութիւնները՝ իրագործելու իրենց յաւիտենական երազը՝ իշխանափոխութիւն ամէ՛ն գնով, հոգ չէ թէ այդ կրնայ զոհաբերել ՀՀ-ի ինքնիշխանութիւնը եւ հողային տարածքները ինչպէս պատահեցաւ Արցախի հետ:

Ռուսիա հոս ալ ձախողեցաւ երբ ռուսամէտ ընդդիմադիր ուժերը չկրցան անցնիլ Երեւանի քաղաքապետարանին գլուխը:

Ուրեմն ի՞նչ է յաջորդ քայլը:

Վստահօրէն, Ռուսիա արդէն ծրագրած է յաջորդ քայլը՝ տարածաշրջանին մէջ իր ռազմական ներկայութիւնն արդարացնելու համար: Հիմա որ Արցախը հայաթափուեցաւ, Ատրպէյճան պիտի պահանջէ որ ռուսերը հեռանան իր հողերէն: Պէ՞տք է յիշեցնել, թէ Ատրպէյճանի խորհրդարանը չէ վաւերացուցած ռուս «խաղաղապահ»ներուն առաքելութիւնը:

Ատրպէյճան Սիւնիքը միշտ իր սեփականութիւնը նկատած է այն օրերէն, երբ Անդրկովկասեան Մէյմը լուծուեցաւ եւ թուրքերու ստիպման տակ կազմուեցան Անդրկովկասի երեք անկախ հանրապետութիւնները: Յարմար առիթին ան միշտ ուզած է ստանալ Սիւնիքը՝ վերջ ի վերջոյ կապ հաստատելու համար Նախիջեւանի ու եղբայրական Թուրքիոյ հետ: Չէ՞ որ Ատրպէյճանի բռնատէր նախագահը քանիցս յայտարարած է որ Մեւանն ալ, Երեւանն ալ մաս կը կազմեն Արեւմտեան Ատրպէյճանի տարածքներուն...

ՀՀ-ը 30 տարիէ աւելի շրջափակած Թուրքիա կը յայտարարէ, թէ ինք պատրաստ է ՀՀ-ի հետ յարաբերութիւնները քայլ առ քայլ զարգացնելու, եթէ «Հայաստան կատարէ իր խոստումները, յատկապէս Զանգեզուրի միջանցքի բացման առնչութեամբ»:

Այսպիսով կ'իրականանայ նաեւ Փութինի ծրագիրը՝ ՀՀ-ի կցումը միութենական պետութեան, որով Հայաստան միանգամընդմիշտ կ'անցնի պատմութեան գիրքը՝ իբրեւ գոյութիւն ունեցած հայկական երբեմնի պետականութիւն...

Խորհրդային Միութեան փլուզման առաջին մէկ օրէն ՄԱԿ-ը, ԱՄՆ-ը եւ Արեւմուտքը ընդհանուր առմամբ, սկզբունքային որոշում կայացուցին ու ճանչցան օրուան 15 հանրապետութիւններու վարչական սահմանները իբրեւ միջազգայնօրէն ճանչցուած սահմաններ:

Ի դէպ, ՀՀ-ի իշխանութիւնները ատենէ մը ի վեր յստակօրէն արտայայտուած են ՀՀ-ի եւ Ատրպէյճանի՝ իրարու տարածքային ամբողջականութիւնը ճանչնալու մասին: ՀՀ-ի



վարչապետը շեշտեց, թէ ինք, ՀՀ-ի անունէն, կը ճանչնայ Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը 86.600 քառ. քմ. տարածքով, ներառեալ Արցախը, եւ կ'անկնկալէ որ Ատրպէյճան իր կարգին ճանչնայ ՀՀ-ի տարածքային ամբողջականութիւնը 29.800 քառ. քմ. տարածքով:

Հայաստանի ընդդիմադիր ուժերը խստագոյնս դատապարտեցին Նիկոլ Փաշինեանի այս յայտարարութիւնը, մինչդէռ երբ իրե՛նք էին իշխանութեան գլխին, ամէն առիթի կը հաստատէին, որ Հայաստան որեւէ հողային պահանջ չունի Թուրքիայէն:

Օգտագործելով ՀՀ-ի ընդդիմադիր ուժերուն կեցուածքը, Ատրպէյճան որոշեց ճանչնալ Հայաստանի տարածքային ամբողջականութիւնը միայն՝ առանց ճշդելու 29.800 քառ. քմ. տարածքը: Ասիկա հարցականի տակ կը դնէ Ատրպէյճանի յաջորդ քայլերը, քանի որ կ'արժարձէ գուշակումի հարց մը, թէ արդե՞՞ք խօսքը Հայաստանի ուրիշ տարածքի մը՝ մասին է միայն: Արդե՞՞ք ան ի մտի ունի ըստ Պաթումի 4 յունիս 1918-ի պայմանագրին՝ 11.396 քառ. քմ. տարածութեամբ Հայաստան մը, դուրսի աշխարհէն կտրուած, շրջափակուած, պաշտպանութեան հնարաւորութենէ ու երթելեկութեան միջոցներէ զուրկ՝ անհնար դարձնելով իր գոյատեւումը:

Առանց արտակարգ քաղաքական հասունութեան եւ լուրջ խոհեմութեան, կրնանք կորսնցնել 29.800 քառ. քմ. տարածութեամբ ՀՀ-ն ալ եւ վերադառնալ պատմութեան գիրքերու էջերուն իբրեւ ինքնիշխան եւ բարգաւաճ երբեմնի պետութիւն...ՆՈՐ ՔԱՐՏԷՄԵՐՈՒ ՍԱՀՄԱՆԱԳԾՈ՞ՒՄ:

ԱՐՑԱԽԷՆ ԵՏՔ՝ ԿԱԶԱ՞Ն

Պարոյր Յ. Աղապաշեան


«Եւրո՛ պան՝ այդ դիւանագէտ պոռնիկը, ոսկի կը ցանէ, որպէսզի բոգութիւն հնձէ...»

Նահատակ գրող՝ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ

Պաղեստինեան-իսրայէլեան բախումները, առճակատումները եւ ընդհարումները, բնական է, նորութիւն չեն, անոնք միշտ ալ եղած են ու կան, այնքան ատեն որ Իսրայէլ կը շարունակէ բռնանալ, գազանանալ ու բրտանալ պաղեստինցիներուն դէմ, որդեգրելով ամէն տեսակի խժոժութիւններ, գրգռութիւններ ու բարբարոսութիւններ:

Իսրայէլը այս անմարդկային ռազմավարութիւնը կը կիրարկէ, յականէ-անուանէ, որովհետեւ ան ունի իր զօրակից կողմերը, որոնց միջոցով կը ֆինանսաւորուի, կը զինուի ու խթանուի, պարգապէս ոչ միայն պաղեստինցիները խեղդելու եւ աքցանելու դիտաւորութեամբ, այլ նաեւ՝ ամբողջ արաբական աշխարհը ոտնակոխելու, իր ինքնութենէն եւ արժանապատուութենէն, վարկէն ու հեղինակութենէն:

Իսրայէլը իր թիկունքին ունենալով անարդարութեան ախոյեան Ամերիկայի Միացեալ Նահանգները եւ անբարոյականութեամբ ճորտացած Արեւմտեան պետութիւններու վարչակարգերը, անդուլ եւ անգուսպ մոլեգնութեամբ կը փորձէ ճզմել ժողովուրդներու իրաւունքներու ազատութեան ու հողային սեփականութեան նուիրականութիւնները, որոնք այնքան անգին եւ անփոխարինելի արժէքներ են իրենց համար:



Սակայն, Իսրայէլը պաշտպանող ու զօրացնող խաւարամիտ պետութիւնները փոխանակ միջին եզրեր գտնելու, հանդարտեցնելու կամ մեղմացնելու վայրենաբարոյ տրամադրութիւնները, աւելի կը սրեն ու կը թեժացնեն կացութիւնը, երբ քաւութեան նոխազ (՝) կը դարձնեն Իսրայէլը, իսկ պաղեստինցիները կը նկատեն նախայարձակներ եւ ահաբեկիչներ:

Այսօր, անցած է շուրջ երեք քառորդ դար, երբ Պաղեստինը յայտնուած է բռնագրաւուած ու բռնադատուած ճիրաններու մէջ եւ ոչ մէկ նշոյլ կամ նախաձեռնութիւն կայ բառնալու այս հակոտնեայ եւ անհաւասարակշիռ իրավիճակէն, ընդհակառակը, նոր բռնութիւններու ու հալածանքներու ճամբով Իսրայէլ կը խստացնէ իր խարանդուները պաղեստինեան շրջաններուն ու պաղեստինեան բնակչութեան դէմ, արարաշխարհի սառնասիւրտ աչքին առջեւ, նոր աւերներ ու նոր զոհեր պատճառելով անոնց մօտ: Այս յամրաքայլ, բայց մնայուն զարգացումներու լոյսին տակ, ինչպէ՞ս պէտք է բնորոշել կամ մատնանշել իսրայէլեան սանձարձակութեանց, անպատկառութեանց ու ստորնութեանց յոռի բարքերը, մերթ ոմբակոծելով պաղեստինեան տարածքներ, մերթ՝ սուրիական քաղաքներ, առանց որ իրենց «պոս»երը եւ կողմնակիցները ծպտուն հասնեն:

Այս տխրահռչակ երեւոյթը ինչո՞ւ եւ ինչպէ՞ս կարելի է բացատրել, երբ իրենց ֆաշիստաձոյլ թունաւոր «խորթ-գաւակ»ը, մարդկութեան ու ժողովուրդներու, բնակիչներու եւ երկիրներու հետ կը վերաբերի քմահաճօրէն ու կամայականօրէն, համոզուած ըլլալով որ՝ ո՛չ ոք պիտի արգելակէ իր սպանդային գործողութիւնները ո՛չ ալ պիտի կարենայ զսպել իր հիւանդկախ մոլուցքը:

Իսրայէլը շատ լաւ կը գիտակցի, որ ինք՝ որպէս պետութիւն եւ աշխարհագրական դիրք, թէեւ արուեստականօրէն հիմնուած է, բայց, յստակ ծրագիրով մը, որ արաբական աշխարհի կողին մէջ պիտի ըլլայ ու մնայ «գործակալական ազդակ» մը, անշուշտ, ի նպաստ այն վատահամբաւ մեծաւորներուն, որոնք հետամուտ են աշխարհը ստրկացնելու իրենց քստմնելի քմայքներուն հաշուոյն:

Հոս կարելի է նաեւ յիշատակագրել, որ պաղեստինցիները, որոնք իրենց «մասնատուած» հայրենիքին մէջ կ'ապրին, քաջ համոզուած են, որ ասիկա՝ է իրենց ճիշդ ընտրանքը, սակայն, այն ինչ որ տեղի կ'ունենայ անկէ դուրս, օրինակ՝ Լիբանանի մէջ, ներքին պայքարներու զարգացումներով, ո՞րքանով կը ծառայէ պաղեստինեան հարցին, երբ ծանօթ է, թէ նոյն «օտարամուտ» ուժերը կը մղեն կացութիւնը պայթեցնելու, որուն վերջին օրինակներէն մէկուն ականատես դարձանք:

Ասիկա կը նշանակէ, թէ դաւադրութիւնը, իր խորհրդաւոր հոլովոյթներով կը մնայ ցայտուն գործօն մը, քանի որ՝ այն ինչ որ տեղի ունեցաւ (ու կ'ունենայ) պաղեստինեան-իսրայէլեան հարթակին վրայ, արդէն ծրագրուած ու կազմակերպուած էր, հոգ չէ թէ՛ այս կամ այն կողմէն, բայց, անպայմանօրէն, պայթիւնավտանգ իրադրութիւնը հասցնելու այս հանգրուանին:

Վստահաբար, պատճառը ա՛յս էր, որ՝ պաղեստինեան ջոկատներ, երկար ժամանակէ ի վեր նախապատրաստուած էին նման յանդուգն դիրքորոշումի, իսկ իսրայէլեան կողմը, հակառակ իր ուժականութեան, չէր կրցած պատկերացնել կամ կանխագուշակել, որ կրնայ ենթարկուիլ նման կտրուկ հակազդեցութեան ու թափանցիկ սլացիկութեան:

Եթէ պաղեստինեան-իսրայէլեան շարունակուող ու վերանորոգուող բռնկումները նորութիւն չեն, ապա նոյնքան ալ նորութիւն չեն յատկապէս Ամերիկայի եւ Արեւմուտքի փրո-իսրայէլեան կողմնակալ համակրումները, որոնք կարծես թէ չեն տեսներ (կամ չեն ուզեր տեսնել) Թել Աւիւի ռազմական նկրտումներն ու ոճրաբարքները, երբ անոր ֆաշական



զինուժերը կը դարպասեն պաղեստինեան քաղաքները, սուրիական Դամասկոսն ու Հալէպը, լիբանանեան հարաւը, անարգել ուժակոծելով եւ ամօթալի լկտիութեամբ:

Մինչեւ ե՞րբ պիտի շարունակուի այս խայտառակութիւնը ու զատողութիւնը «խորթ ու շինծու զաւակի» մը շփացնելով, որ շնականօրէն ամէն ինչ կ'ընէ, կը խլէ, կը սպաննէ, կը քանդէ, կը սպառնայ եւ ոչ միայն անպատիժ կը մնայ, այլեւ՝ կը պաշտպանուի, կը քաջալերուի ու կը վարձատրուի:

Բոլոր այն պետութիւնները, որոնք նեցուկ կը կանգնին այս հրէշածին վոհմակներուն, ի՞նչպէս իրենք զիրենք կը նկատեն ժողովրդավար, արդարաբաշխ, մարդասէր ու անխտրական, երբ ականատեսը կը դառնան անոր հակամարդկային խաղքութիւններուն եւ այլամերժութիւններուն:

Կազայի դէմ լարուած քառսային բռնագրօսիկ ցարդ ընթացող անիրաւութիւնները, արինով ներկուած, բան մը չե՞ն ըսեր այդ պետութիւններու վարկաբեկուած վարչակազմերուն, երբ նոյնիսկ իրենց ժողովուրդներն ու մարդապաշտպան կազմակերպութիւնները հաշտ աչքով չեն նայիր անոնց անտարբեր ու նոյնիսկ տմարդի վերաբերմունքներուն:

Ամերիկայի արտաքին գործոց նախարարը, որ քանի մը անգամ շունչը առաւ շրջան, ի՞նչ ընելու եւ ըսելու, մինչ մարդ որսալու, քաղաք կործանելու, հանրային կառոյցներ ուժահարելու ամենօրեայ տեսարանները իր դիմացն էին, ընդ որուն՝ վերջին այցելութեան ընթացքին, շուրջ եօթը ժամ դռնփակ նիստ մը գումարեց Իսրայէլի իշխանութիւններուն հետ:

Յաջորդ օրն իսկ, քրիստոնէական «Մահմատանի» հիւանդանոցը հիմնայատակօրէն թիրախաւորուեցաւ, պատճառելով, հաւատալ թէ ոչ, շուրջ ՀԻՆԳ ՀԱՐԻԻՐ գոհեր եւ, ի՞նչ հեզմանք, մեղքը ձգելով պաղեստինցի զինեալներուն վրայ, իսկ Ամերիկայի նախագահը՝ Ճօ Պայտըն, որ սուրացած էր Իսրայէլ, իր բացայայտ գորակցութիւնը փոխանցելու իր դաշնակիցին, առանց խպնելու նոյն մեղադրանքը ուղղած էր «դիմացի կողմին»:

Եթէ հզօր երկրի մը ղեկավարը, նման յայտարարութեամբ հանդէս կու գայ, ալ պէտք է երեւակայել, թէ ստորաքարշ ռազմաքաղաքականութիւնը ո՞ր հասած է եւ ինչպէ՞ս կը շահագործուի անոր... կերտիչներուն կողմէ:

Հոս պէտք է արձանագրել նաեւ, որ արաբական աշխարհի մեծամասնութիւնը, ինք եւս իր պարտագանցութեան բաժինը ունի, Իսրայէլի հետ իր սկսած «մեղրալուսին»ներով, անշուշտ, միշտ Ամերիկեան օրհնութեամբ ու խրախուսութեամբ:

Մինչդեռ ակնկալուածը պիտի ըլլար անգիջող եւ աննկուն կեցուածք եւ ոչ թէ փեշերը հաւաքելով հասնիլ հոն, ուրկէ միայն ո՞ր ու թոյն կը հոսի, դժոխային ու գեհենային աղբիւրներով:

Եթէ այս մահասփիւռ պատերազմը զգաստացուց արաբներէն ոմանց եւ նոյնհետայն սառեցուցին իրենց բանակցային կապերը, շատ բարի, յուսալով որ այդ մօտեցումը չըլլար ժամանակաւոր եւ անցողակի, որովհետեւ արաբական աշխարհը կը մնայ հզօր եւ անսասան, միայն իր կուռ միասնականութեամբ, ազգակցութեամբ եւ արաբականութեամբ:

(Ի դէպ, Ամերիկայի Քեմփ Տէյլիտին մէջ, նախագահ Ճիմի Քարթըրի գլխաւորութեամբ, յատենի Եգիպտոսի նախագահ Անուար Սատաթ «խաղաղութեան» դաշինք կնքեց (17 Սեպտեմբեր 1978ին) Իսրայէլի վարչապետ Մենահիմ Պեկինին հետ, որմէ ետք, Սատաթ դաժանօրէն սպաննուեցաւ (6 Հոկտեմբեր 1981ին), սակայն, մինչեւ օրս, Եգիպտացի ժողովուրդը երբեք խանդավառութիւն չէ ցուցաբերած այս դաշինքին հանդէպ, ինչ որ կը նշանակէ թէ ատիկա... անարժէք թուղթի կտոր մըն է լոկ):

Այս բոլորով հանդերձ, ինչո՞ւ այս հանգրուանին նման մեծ տարողութեամբ պատերազմ ծագեցաւ եւ ի՞նչ նպատակ թաքնուած է անոր ետին:

Անշուշտ, մէկ կողմէն՝ Ուքրանիոյ դէմ շղթայագերծուած ահաւոր պատերազմը, միւս կողմէն՝ Կովկասի ձգտուած կացութիւնը, Արցախի բռնագրաւումով ու բնակչութեան



տարհանումով, բոլորն ալ ծրագրուած էին պատկան կողմերէ, տեսանելի թէ անտեսանելի, կազմաւորումներով ու ձեւակերպումներով, յուշելով որ տուեալ շրջաններուն մէջ, հաւանական է որ ուրուանշուին նոր տեղաշարժեր, նոյնիսկ՝ քարտէսագծումներ:

Ասկէ պարզ կը դառնայ, որ ինչպէս պատահեցաւ Արցախի պարագային, անոր յանձնումը, պարտութիւնը, ռմբակոծութիւնը, յստակօրէն կը միտէին զայն «նուիրել» Ատրպէյճանին, նոյնիսկ ի գին հայ գործակալներու, դաւաճաններու ու դաւադիրներու արարքներուն:

Ամերիկայի, Արեւմուտքի եւ ընդհանրապէս աշխարհի լռութիւնը ու դիտողականութիւնը պէտք է բացատրել այս ՉՈՐ իրականութեամբ, որուն դէմ պայքարիլը մեր «վտիտ» միջոցներով, գէթ այս հանգրուանին կամ հեռահար ժամանակացոյցով, տարբեր զարգացում չէր կրնար ունենալ:

Ուրիշ պատկեր չունի պաղեստինեան ճակատագիրը, այն տարբերութեամբ, որ՝ պաղեստինցիք գիտակցելով որ իրենց դէմ ի՞նչ դաւ կը հիւսեն հրեաները, կը մերժեն իրենց բնօրրանէն դուրս ելլել (կամ բռնագաղթուիլ), այդուհանդերձ, այդ տարբերակը, եթէ ոչ հիմա, «բաց օրակարգ» է թշնամիին համար:

Յամենայն դէպս, բոլոր մակարդակներու վրայ ու հատուածներուն մէջ, բռնի դէպքերը ու ճակատները ՅՂԻ են նոր զարգացումներով, այնքան ատեն որ՝ «սեւ ու մուշ» յայտագիրները ի զօրու են...

(Պէյրութ)

ՊԵՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ



Դոկտ. Արէլ քինյ. Մանուկեան հեղինակած է գիտական բժախնդրութեամբ գրուած, լայնածաւալ ու համապարփակ ուսումնասիրութիւն մը՝ Պետութիւն եւ եկեղեցի. դժուար համակեցութիւն մը խորագիրով: Ստորեւ կը ներկայացնենք հատուածներ ուսումնասիրութեան վերջին մասին մէջ տեղ գտած դիտարկումներէն: Սեղմեցէք [այստեղ](#)՝ ամբողջութեամբ ընթերցելու համար արժանապատիւ Տէր Հօր այս շատ կարեւոր աշխատութիւնը:

Դոկտ. Արէլ քինյ. Մանուկեան, Ժընեւ, 28 հոկտ. 2023

... Ո՞ր օրէնքն է, որ կրնայ կարգաւորել Հայաստանի Հանրապետութեան եւ Հայց. առաք. սուրբ եկեղեցւոյ յարաբերութիւնները: Կա՞յ արդեօք այդպիսի օրէնք մը: ՀՀ սահմանադրութիւնը այս մասին ոչինչ կը բնորոշէ: Այլ խօսքով՝ սահմանուած չէ օրէնք մը, որ կը ճշդէ պետութիւն եւ եկեղեցի յարաբերութեան ձեւաչափերն ու գործընթացը:

Այս ուղղութեամբ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի որոշումով եւ Գարեգին Բ. կաթողիկոսի գործակցութեամբ՝ 3 մայիս 2019 թուականին կը կայանայ աշխատանքային մասնաւոր յանձնախումբի մը առաջին նիստը՝ կարգաւորելու համար պետութիւն եւ եկեղեցի փոխյարաբերութիւնները: «Հրապարակ» թերթը այս մասին կը հաղորդէ.

«Յունուարի 29-ին հրապարակուեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի որոշումը, որով ստեղծուում է աշխատանքային խումբ՝ կարգաւորելու համար պետութեան եւ Հայ առաքելական եկեղեցու միջեւ յարաբերութիւններում առաջ եկած խնդիրները: Որոշման մէջ մասնաւորապէս ասուում է. «Ղեկավարուելով «Կառավարութեան կառուցումաճքի եւ



գործունէութեան մասին» Հայաստանի Հանրապետութեան օրէնքի 7-րդ յօդուածի 16-րդ մասով՝ ստեղծել Հայաստանի Հանրապետութեան եւ Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցու յարաբերութիւններին առնչուող հարցերով աշխատանքային խումբ եւ հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն յաւելուածի»:

Մայր Աթոռը, ի դէմս իր խօսնակ Վահրամ քահանայ Մելիքեանի, արդէն հասցրել է ողջունել այդ յանձնաժողովի ստեղծումը՝ հետեւեալ յայտարարութեամբ. «Ողջունելի է ՀՀ իշխանութիւններին յանձնառութիւնը Ազգային եկեղեցու առջեւ ծառացած հարցերին լուծումներ գտնելու հարցում յանուն մեր ազգային ու հոգեւոր զարթօնքի: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի հրամանով յունուարի 29-ին ստեղծուած աշխատանքային խումբը ձեւաւորուել է Ամենայն հայոց կաթողիկոսի եւ ՀՀ վարչապետի քննարկումների արդիւնքում՝ փոխադարձ համաձայնութեամբ: Վստահ ենք, խմբի աշխատանքը, Աստուծոյ կամօք, կը նպաստի եկեղեցի-պետութիւն յարաբերութիւնների առաւել արդիւնաւէտ ծառայեցմանը մեր հայրենիքի եւ աշխարհասփիւռ ժողովրդի շահերին»:

Սոյն յայտարարութեան առնչութեամբ «Հրապարակ» թերթը կը նշէ.

«Առաւել ստանդարտ եւ ոչինչ չասող յայտարարութիւն երեւի թէ դժուար կը լինէր պատկերացնել»:

Արդարեւ, ի՞նչ արդիւնքներու հասաւ այս յանձնաժողովը, կամ Հայաստանի Հանրապետութեան եւ Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցիին յարաբերութիւններուն առնչուող հարցերով ան ինչպիսի՞ օրինակարգ մը կը ցուցաբերէր: Այսօր մէկ իրողութիւն կարելի է հաստատել, որ պետութիւն եւ եկեղեցի փոխյարաբերութիւնները, նաեւ գործակցութիւնը կը գտնուին ամենավատ եւ լարուած վիճակի մը մէջ: Դժբախտաբար, Հայաստանի մէջ ստեղծուած արտաքին եւ ներքաղաքական պառակտուած կացութիւնը եւ Արցախեան Բ. պատերազմին չարաքաստիկ աղէտը միանգամայն չնպաստեցին պետութիւն եւ եկեղեցի յարաբերութիւններու կայացման, այլ ընդհակառակը՝ ստեղծեցին խիստ լարուած, չըսելու համար «թշնամական» իրավիճակ մը:

Պարագան ի՞նչ ալ ըլլար, արդեօ՞ք կաթողիկոսը Արցախեան 44-օրեայ պատերազմին վերջ դրած զինադադարէն գրեթէ ամիս մը ետք՝ 8 դեկտեմբեր 2020 թուականին, պէտք է պահանջէր ՀՀ վարչապետին հրաժարականը: Մի՞թէ ան ունի նման իրաւալիազօրութիւն մը, որ արձանագրուած է ՀՀ սահմանադրութեան կամ թէկու՞զ եկեղեցական որեւէ կանոնագիրքի մը մէջ: Ըսել, թէ հայրենիքի եւ հայ ժողովուրդի գոյութեան վերաբերող հարցեր եկեղեցիին եւ անոր ընդմէջէն եկեղեցւոյ վերնախաւին կամ ուղղակի կաթողիկոսին ալ կը վերաբերին՝ բաւարար չէ: Նման պատասխանատու քայլ մը պէտք է անպայման օրինական հիմք ունենայ, որուն համար գոյութիւն ունին ՀՀ նախագահ, Հայաստանի Ազգային ժողով, ժողովրդավարական կարգեր, ընտրութիւն կազմակերպելու եւ ատոր միջոցաւ Հայաստանի քաղաքացիներուն կամքը արտայայտելու օրինակարգ եւ այլն: Հարց պէտք է տալ՝ Հայաստան կը ներկայացնէ բացարձակ միապետութիւն մը, կրօնապետութիւն մը, թէ, – իր բոլոր թերութիւններով հանդերձ, – սահմանադրական պետութիւն մը: Կը կասկածիմ, եթէ եկեղեցին հոգեւոր-բարոյական ոլորտէն բացի՝ իրաւասութիւնը ունենայ վերոնշեալ



օրինաչափութենէն վեր ինքզինքին վերապահելու գուտ քաղաքական հանգամանք ունեցող լիազօրութիւն մը:

Եկեղեցիին հեղինակութիւնը միանշանակ հոգեւոր-բարոյական հանգամանք ունի՝ «սէր սերմանելու հոն, ուր ատելութիւն կայ, ներում շնորհելու հոն, ուր վիրաւորանք կայ, միութիւն բերելու հոն, ուր տարակարծութիւն կայ, ճշմարտութիւն բացայայտելու հոն, ուր սխալ կայ, հաւատք ներշնչելու հոն, ուր կասկած կայ, յոյս տալու հոն, ուր յուսահատութիւնը կ'ընկճէ, լոյս սփռելու հոն, ուր խաւարը կ'իշխէ, մխիթարութիւն բերելու հոն, ուր տրտմութիւնը արցունք կը քամէ»:

Եկեղեցին կուսակցութիւն մը չէ, որ կողմ բռնէ: Կաթողիկոսը զգուշ պէտք է ըլլայ կամայ թէ ակամայ դառնալու կուսակցապետ մը: Կաթողիկոսին առաջին եւ կարեւորագոյն յատկանիշը իր հայկազուն հօտին հոգեւոր հայր ըլլալն է, անոր համար ալ ան կը կոչուի «հայրապետ»: «Հայր» եւ «պետ» գոյականներէն կազմուած այս բառակապակցութիւնը պէտք չէ սահմանափակել լոկ եկեղեցական հայրերուն պէտք ըլլալու դրութեամբ, այլ բոլոր այն հաւատացեալներուն, որոնք անդամ կը նկատուին Հայց. առաք. սուրբ եկեղեցիին: Այլապէս ան կը կորսնցնէ իր զաւակներուն միջեւ հօր մը հաշտարար դերակատարութիւնը եւ ազգին կողմէ իրեն վստահուած արժանահաւատ բարձրագոյն հեղինակութիւնը:

Այսօրուան վիճակով, մեր շատ մը պականներու կարգին, կարեւորագոյններէն մին՝ արժանահաւատ հեղինակութեան մը հաշտարար գործին եւ պատկառագործ խօսքին էական կարիքն ունենիք, ներքաղաքական պառակտուած եւ հակոտնեայ կիրքերէ հրկիզուած դաշտին վրայ հայրական սէր եւ գուրգուրանք ցօղելու: Այս առնչութեամբ ինչքան յատկանշական է, որ Հռոմէական կաթողիկէ եկեղեցւոյ քահանայապետին՝ Հռոմի պապին բարձրագոյն տիտղոսը՝ «pontifex maximus» է, որ բառին բուն իմաստով ոչ այլ ինչ՝ քան գերազանցապէս «ամենամեծ կամուրջ ստեղծող» կամ «ամենամեծ կամուրջ կառուցող» կը նշանակէ: Իւրաքանչիւր ճշմարիտ հոգեւորական իր ծառայական առաքելութեան մէջ պէտք է, որ այս կոչումը կրէ, որպէս մարդկային յարաբերութիւններու մէջ կամուրջ կառուցող, հեռաւորութիւններ իրարու մօտեցնող, տարաբնոյթ բազմազանութիւններուն եւ այլազանութիւններուն մէջ միութիւն եւ ներդաշնակութիւն ստեղծող: Ներկայ ժամանակներու մեր իրականութեան մէջ այս կարեւորագոյն բացը լրացնելու հանգամանքն ու պատասխանատուութիւնը Ամենայն հայոց կաթողիկոսին վերապահուած էր, իբրեւ անկողմնակալ եւ կուսակցական հատուածականութիւններէ վեր՝ հաղորդակցութիւն եւ միութիւն ստեղծող հոգեւոր-բարոյական հեղինակութիւն մը: Դժբախտաբար, ան կորսնցուց այս բախտորոշ առիթը՝ առաւել քան սնանկացնելով եկեղեցիին քրիստոնէական առաքելութեան եւ ծառայական հեղինակութեան դարաւոր կալուածը:

Պետութիւն եւ եկեղեցի յարաբերութիւնները կարգաւորելու հարցով նաեւ պէտք է նկատի ունենալ այն կարեւորագոյն հիմնախնդիրներէն մէկը, որ բոլոր կրօնական կազմակերպութիւններն ու եկեղեցիները առանց բացառութեան, ներառեալ Հայց. առաք. սուրբ եկեղեցին, պէտք է անպայման ներգրաւուին հարկային դաշտին մէջ: Մակայն սոյնը ծաւալուն եւ առանձին նիւթ մըն է, որուն հանդէպ այլազան մօտեցումներ ցուցաբերած են պետական մարմիններն ու եկեղեցին, եւ այս նիւթին շուրջ լայնօրէն անդրադարձած է հայ մամուլը: Բայց եւ այնպէս առկայ հիմնախնդիրը ցայսօր կարգաւորուած չէ, եւ այս ալ մեր շատ մը անորոշութիւններու շարքին վերջնական հանգուցալուծումի մը կը կարօտի:

Յաւարտ բանիս, կ'արժէ այստեղ անգամ մը եւս տալ հարցումը. ինչպէ՞ս է կարգաւորուած Հայաստանի Հանրապետութեան եւ Հայց. առաք. սուրբ եկեղեցիին միջեւ փոխյարաբերութիւնը: Փաստօրէն՝ պետութիւնը եւ եկեղեցին, ըստ ՀՀ սահմանադրութեան, իրարմէ անջատ են: Պետութիւնը կը ճանչնայ Հայ եկեղեցիին ունեցած բացառիկ առաքելութիւնը հայ ժողովուրդի հոգեւոր կեանքին, առանձնապէս անոր դերակատարութիւնը ազգային մշակոյթի զարգացման եւ ազգային ինքնութեան պահպանման գործին մէջ, սակայն ցայսօր տակաւին ամենեւին ճշդուած չէ, թէ ի՞նչ օրինակարգով կամ ո՞ր օրէնքով կը կարգաւորուին Հայաստանի Հանրապետութեան եւ Հայ եկեղեցիին միջեւ յարաբերութիւնները:

ԳԵՂԱՐԴ

ՇՓՈԹ

«Բնութիւնը երբեք մեզ չի խաբոււմ,

այդ մե՛նք ենք, որ միշտ խաբոււմ ենք մեզ»:

Ժան-ժազ Բոուսօ



Հիմնականում բացարձակապէս սիրելի եւ պաշտելի է մեր աւետեաց երկիրը, միայն թէ երբեմն այն դառնում է տարօրինակ, անհասկանալի ու անըմբռնելի: Յաճախ խումի ընթացքին, երբ այն լինում է **«տնական քաշած»** թթի օղիով եւ մասնակիցների կատարը արդէն լինում է որոշ աստիճանի տաքացած, նրանցից ոմանք գնում են մինչեւ Տիգրան մեծ ու հասնում ԱՄՆ նախագահ Վիլսոնի քարտեզին եւ արդի **«միթոզական»** Արցախ փրկող քաջերին՝ երբեմն չնկատելով նրա բռնի արտագաղթը: Թերեւս ամենուրեք այդպէս է, բայց մեր լուծելիք խնդիրները բազում են եւ տարբեր, ուստի կարօտ՝ աւելի լուրջ, առարկայական մօտեցումների: Այն տհաճ կարծիքն է ստեղծուում, թէ մեր հասարակութեան գործող համակարգը, իշխանութեան շրջանակի հետ, մտաւոր շփոթի վիճակ է ապրում թերեւս ներքին քաղաքական անբարոյ խլրտումների ու դաւերի պատճառով, երբ իշխանափոխութեան փորձերը անհատնում են, կամ դրսում ու ներսում հաստատուած **[1]** մեր բարեկեցութեամբ մտահոգուողները չեն դադարում մահափորձի արարքներից:

44-օրեայ դժոխքից ի վեր տարբեր հարթակներում ու տարբեր ծրարումով խօսուել է, թէ՛ հայկական եւ թէ՛ ադրբեջանական կողմի համար կարեւոր Մեղրիի երթեւեկութեան ուղիների մասին է, պարզ չէ, թէ ինչո՞ւ այդ կարեւոր խնդրի լուծումը տեղից չի շարժուել: Մինչեւ իսկ Արցախի անկումից յետոյ վարչապետը, ԵՄ նիստին (17 հոկտ. 23) մասնակից լինելով, ամբիոնից դարձեալ անդրադարձաւ այն վերականգնելու շուտափոյթ



անհրաժեշտութեանը՝ յայտարարելով, թէ ՀՀ պատրաստ է երաշխաւորել անվտանգ ընթացքը՝ բոլոր տեսակի ադրբեջանական երթեւեկութեան համար: Թերեւս պատահական չէր եւ այդ էր Ալիեւի վերջին յայտարարութեան առիթը, թէ իրենք վերադառնալու են Սիւնիք ոչ թէ հրասայլերով, այլ մարդատար մեքենաներով:

Ալիեւի ներկայացուցիչ Էլչին Ամիրբեկովը օրերս յայտնեց, թէ իր երկիրը ճանաչում է Սիւնիքի նկատմամբ ՀՀ գերիշխանութիւնը եւ հերքեց տարածուած այն լուրը, թէ ցանկանում են այն գրաւել, բայց որքա՞ն կարելի է հաւատալ մի պաշտօնեայի, երբ իրականում անընդհատ իրենց յայտարարութիւններին հակառակ են գործել:

Զարմանալի մի այլ երեւոյթ էր քաղաքական դաշտում Վրաստանի նախկին նախագահ, մահի դուռը հասած Միխայիլ Սահակաշվիլիի յայտնուելը, որ մոռանալով իր անփառունակ անցեալը, գրաւոր պատգամ է ուղարկում ՀՀ վարչապետին՝ խրատելով զգուշանալ Պուտինի վրիժառութիւնից, օր առաջ հեռացնել ռուս ռազմակայանը ՀՀ տարածքից, իսկ ՀԱՊԿ-ի եւ Ռուսաստանի հետ բոլոր տեսակի յարաբերութիւնները եւ ժամ առաջ փարուել ԵՄ եւ արեւմուտքի համակարգին, մանաւանդ ԱՄՆ, որպէսզի Կովկասում խաղաղութիւն եւ անդորր հաստատուի: Վրիպումների այս փորձառուն դեռ չի հասկացել, որ արեւածագը արեւելքում է, իսկ մայրամուտը արեւմուտքում, մինչ դեռ համարձակում է, շփոթ առաջացնելով, խրատ տալ՝ որպէս փորձառու հաստատելով, որ տխմարութիւնը սահման չունի:

Բախումների եւ շփոթի մի այլ նոր մեծ հոսանք է ստեղծուել արցախցի տեղահանուածների եւ չքանտարկուած նորընտիր ղեկավարների միջեւ, որ տեղաւորուած են Երեւան: Նրանք եւս արժանացան **«թուրք»** ու **«դաւաճան»** անուանումին: Շատ պղտոր է միջավայրը: Նախկինների **«Նիկոլ-դաւաճան»** պիտակը փոխանցուել ու փակցուել է միւսների ճակատին մինչեւ իսկ մեղադրանքներով, թէ Արցախի նորընտիր փրկիչները կարողացել են հսկայական գումարներ իւրացնել, որի հետեւանքը նմանում է քոչի ու սերժիկի դէպքին, իմա՝ կը մնան անհետեւանք: Փաստ է, որ ՀՀ արդի վիճակը եւ Արցախի անկումը, իր որպէս անկախ պետութեան լինելու յամառ ցնորքներով, հիմնաւորուել է ՀՀ 1998 պետական յեղաշրջումից ի վեր, երբ քոչը դարձաւ միահեծան նախագահ իր ողբալի հետեւանքներով, իսկ թալանը դարձել էր ապրելակերպ:

Համընդհանուր խառնիճաղանձի մէջ դժուար է լռելեայն անցնել Պաղեստինում (Գազա) տեղի ունեցող դժոխք- երեւոյթի նկատմամբ, որ հեռու չէ Արցախում եղածից, բոլոր նրբութիւնները նկատի ունենալով: Տարբերութիւն չկայ Շուշիում հաստատուած թուրք **«գորշ գայլերի»** ու **«սիոնիստ»** մարտիկների ծրագրային ոտնձգութիւնների միջեւ, կամ այն մեծ չէ, որ քաջալերում է շատ երկրների կողմից, մանաւանդ ԱՄՆ-ի:



Շատերը դեռ չեն հասկացել եւ կը հասկանա՞ն արդեօք, որ ԱՄՆ, բացի Իսրայէլից, որեւէ երկրում կառուցողական չեն եղել, քանի որ այդ երկրի վարչական համակարգը հրեաներն են ղեկավարում եւ ոչ միայն այնտեղ, այլ նաեւ եւրոպական բազում երկրներում եւ բոլոր տեսակի յարաբերութիւնները ուղղուած են Իսրայէլի շահերին: Կոյր պիտի լինել եւ չնկատել ԱՄՆ նախագահի շուտափոյթ ժամանումը Երուսաղէմ եւ օժանդակութիւնը, որ նա խոստացաւ, որի իրաւունքը մենք չունեցանք, բացի կրակը դադարեցնելու՝ ցաւակցող փուշ կոչերից եւ դարեր անց դարձեալ գտնուեցինք թղթէ շերտի եւ պապենական Արցախը լքած գաղթականների վիճակում: Կա՞ր արդեօք այլ ելք,– թերեւս, բայց անհրաժեշտ էր մտածել ժամանակին, նախատեսել եւ պատրաստուել, իսկ միաւորուել բոլոր գործածել չեմ համարձակում: Յիշում եմ երգը, երբ հայը պատրաստ էր միակ եզր ծախել ու թուփանք առնել Կիկոյին: Փոխարէնը, մերոնցից ոմանք, զէնք ծախեցին, որ փառաւոր ապարանքներ կառուցեն: ՅՈՒՆԻԲԱՍ:

Մեր ղեկավար այրերի պարտաւորութիւնն է՝ առանց բացառութեան, զգոյշ, շատ զգոյշ քայլեր անել եւ խօսել:

Ուշիմ լինելը արգելուած չէ եւ ոչ աւելորդ:

22-10-23

Ռուբէն Յովակիմեան- Մեն Ռաֆայել

[1]Տեղին է նշել եւ կարելորել՝ ոչ պաշտօնական մամուլում տարածուող այն լուրերը թէ վարչապետի սեղմ շրջապատում գործողներից ոմանք սերտ կապի մէջ են սորոսականների հետ, նոյնիսկ շրջանառութեան մէջ է Փաշինեանի նկարը Սորոսի հետ, եւ եթէ միայն այդ լինէր, որ խորհելու առիթ է տալիս:

ԵԹԷ ՉԵՍ ՕԳՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ, ԳՈՆԷ ՄԻ՝ ՎՆԱՍԵՐ

Լիւսի Տօքմէճեան, Երեւան, 30 Հոկտեմբեր 2023



Արցախի հայաթափման:

44-օրեայ արցախեան պատերազմէն ետք, Արցախին պատուհասած աղէտը նոր փուլ թեւակոխեց 2022-ի Դեկտեմբերին, երբ թշնամին արգելափակեց Բերձորի միջանցքը, ամբողջական շրջափակումի մէջ պահելով Արցախը: Այնուհետեւ, Հայոց պատմութեան այս ցաւոտ փորձութիւնը իր գագաթնակէտին հասաւ 2023-ի Սեպտեմբերի իրադարձութիւններով, որոնք առաջնորդեցին



Աւելի քան 100.000 արցախցիներ անօթեան մնալու մարտահրաւէին դէմ-յանդիման գտնուեցան: Բայց Հայաստանի Հանրապետութիւնը առաջին օրէն պատրաստակամութիւն յայտնեց գրկաբաց ընդունելու բռնի տեղահանուած արցախցիները, անոնց տրամադրելով ապաստան եւ այն ինչ որ տարրական է այդ իրավիճակին մէջ գոյատեւելու համար: Ինչքան ալ անկատար կամ բազում բացթողումներ կան Հայաստանի կառավարման մեթոտներուն ու քայլերուն մէջ, կարելի չէ չգնահատել այն, որ պետութիւնը անմիջապէս սրտբաց ընդունեց արցախցի մեր հայրենակիցները եւ ջանք չի խնայեր անոնց ապաստան տալու՝ կեցավայր ու դրամական օժանդակութիւններ յատկացնելով, աշխատանքի առիթներ ստեղծելով, բժշկական ծառայութիւններ մատուցելով եւ երեխաները Հայաստանի դպրոցներուն մէջ ներառելով: Կառավարութեան կողքին, չեն թերանար նաեւ հայրենի եւ սփիւռքեան բազմաթիւ կազմակերպութիւններ, որոնք հնարաւոր ամէն ինչ կ'ընեն ի սպաս բռնի տեղահանուած արցախցիներուն բարօրութեան, որոնք լիայոյս ենք որ միայն ժամանակաւորապէս կը գտնուին իրենց հողերէն ու տուներէն հեռու:

Կան, սակայն, արցախցիներուն տրամադրուած բազմաբնոյթ օժանդակութիւնը քննադատողներ, զայն համարելով անբաւարար ու անհամաչափ՝ անոնց կրած կորուստին դիմաց: Դժգոհիլն ու քննադատելը ամենահեշտ բանն է: Իրականութեան մէջ ցաւ ու կորուստ կրեց ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ. ցաւ՝ որ բառերու մէջ տեղաւորելը անհնար է, եւ կորուստ՝ որ լոկ նիւթական պարունակին մէջ դիտելը անբաւարար է: Բոլորս կորսնցուցինք մեր հայրենիքէն մաս մը: Բայց հիմա մեր տեղահանուած քոյրերն ու եղբայրները Հայաստանի մէջ համարկելու, անոնց ցաւերը դարմանելու, վերքերը հնարաւորինս շուտ ամոքելու, օժանդակութեան ձեռք մեկնելու ժամանակն է: Եւ հոս չկայ քիչի ու շատի սակարկութեան տեղ, որովհետեւ ամէն ոք պիտի տայ ի՛ր կարողութեան սահմաններուն մէջ:

Սա կը վերաբերի նաեւ Հայաստանի Հանրապետութեան, որ, քաջ գիտենք, անսահմանափակ կարողութիւններով երկիր չէ: Վերջինս այս առումով ոչինչ կը խնայէ ու այդպէս ալ պետք է շարունակէ: Այս համոզմունքին հասնելու համար մենք պետք չունինք օտարներու հնչեցուցած գնահատանքին, թէ ինչպէս, իրենց իսկ վկայութեամբ, Հայաստանի Հանրապետութիւնը կրցաւ շատ կարճ ժամանակի մէջ ընդունիլ մեծ քանակով «փախստականներ», մինչ տնտեսապէս աւելի յառաջադէմ ու բարեկեցիկ երկիրներ կը դժուարանան ընդունիլ քանի մը հազարը: Այդ օտարները բաց կը թողեն շատ կարեւոր հանգամանք մը՝ արցախցիները մեր ԱԶԳԱԿԻՑՆԵՐՆ ԷՆ: Եթէ ուրիշ երկիրներ այլ ազգի փախստականներ կ'ընդունին մարդասիրական նկատառումներով, մեր մօտ անիկա երկրորդական կարգի վրայ է, քանի որ առաջին հերթին կու գայ այն, որ մենք մեր հարազատները կ'ընդունինք, եւ անոնց փոխուած, դժուարացած ու դառնացած կեանքը որոշ չափով բարելաւելու ամէն ջանք անգէն աչքով իսկ դժուար չէ տեսնել:

Միւս կողմէ, ոչ միայն նիւթական նեցուկ է որ բռնի տեղահանուած մեր արցախցի քոյրերուն ու եղբայրներուն կը տրամադրուի: Կայ նաեւ բարոյական նեցուկը: Ամէն առիթով պետական բարձրագոյն մակարդակով կը յայտարարուի, որ անոնք իրենց հարազատ տան մէջ են եւ պետք չէ մտածեն Հայաստանէն հեռանալու մասին: Հոս գլխաւոր առանցքը կը կազմէ Հայաստանի մէջ մնալու, հո՛ւ ապրելու եւ հո՛ւ արարելու հաստատակամ «հրաւեր»ը: Այսպիսով ոչ միայն Հայաստանի Հանրապետութիւնը կ'աջակցի արցախցիներուն, այլեւ արցախցիներն ալ իրենց կարգին աջակցած կ'ըլլան Հայաստանի Հանրապետութեան:



Արցախցիները երբ տեղահանուեցան, իրենց ուղղությունը միանշանակ պիտի ըլլար Մայր Հայաստանը: Լռելեայն հասկնալի է այս հանգամանքը եւ այդ պիտի ըլլար բնական ու տրամաբանական ընթացքը: Անհասկնալին, անբնականն ու անտրամաբանականը ասոր հակառակն է: Այս ռազմավարությունը «անխելք առաջարկություն» անուանելը, մեղմ ըսած, անհեթեթություն ու լկտիություն է: Այդ բաց «հրաւեր»ը ԱՆԽՏԻՐ ԲՈԼՈՐ հայերուն ուղղուած է եւ ժամանակի կամ պարագաներու մէջ չի սահմանափակուիր:

Այդ հրաւերին հաւատացողներէն եղած եմ նաեւ ես: Անկէ մեկնելով ալ, երբ 2016 թուականին ՀՀ Սփիւռքի նախարարութիւնը համահայկական շարժում մը սկսած էր «Դու ի՞նչ ես անում Ղարաբաղի համար» կարգախօսով, օրին, նախարարուհիին ներկայութեան ինծի տրուած խօսքի առիթի ընթացքին առաջարկած էի, որ օր մը եթէ համահայկական այլ շարժումով մը որդեգրուի «Դու ի՞նչ ես անում Հայաստանի համար» կարգախօսը, տարատեսակ օժանդակություններու կողքին, մեր հաւաքական առաջնային ու համոզուած պատասխանը պետք է ըլլայ՝ «Մենք Հայաստանի համար հայրենադարձ կ'ըլլանք»:

Եւ ոչ ոք թող չմտածէ, թէ Հայաստան գալով ի՞նչ կրնայ ընել, թէ ի՞նչ կայ զինք դէպի Հայաստան քաշող: Արդէն լրացաւ իմ հայրենադարձութեան 3-րդ տարին: Շուտով նաեւ կ'ամբողջանայ երեք տարին՝ Հայաստանի մէջ աշխատելու: Մեր աշխատավայրին մէջ նոյն գործը կը կատարեն եւս 8 հոգի: Ես տիտանական աշխատանք չեմ տանիր, սակայն գիտեմ, որ իմ կատարածովս, իմ մատուցած աշխատանքովս դոյզն իսկ չափով կը ծառայեմ Հայաստանի Հանրապետութեան ու ժողովուրդին, հպարտ կը զգամ որ փորձս ու գիտելիքներս կը ներդնեմ ի խնդիր աւելի պայծառ, յառաջադէմ ու աշխատունակ Հայաստան մը ստեղծելու ջանքերուն:

Բացի անկէ, ես հիմա արդէն Հայաստան հողի մէկ բուռն եմ, Հայաստան արտի մէկ ծիլն եմ, Հայաստան ծաղիկի մէկ թերթն եմ, եւ Հայաստանի Հանրապետութեան բնակչութեան թիւին մէկ միաւորն եմ: Եւ իւրաքանչիւր միաւոր անհատ, հայրենի հողին վրայ ապրելու իր փաստովն իսկ, ա՛ն-պա՛յ-մա՛ն բան մը կը փոխէ դրականօրէն, որովհետեւ քանակն է որ որակ կ'ապահովէ: Եւ մեզմէ իւրաքանչիւրը, հաւատացէ՛ք, կրնայ իր բաժին կաթիլը աւելցնել ու լեցնել Հայաստանի ամբողջութեան բաժակը:

Այս ես եմ, քու կարգիդ՝ դուն ալ կրնաս: Գոնէ ա՛յս ձեւով օգնենք Հայաստանի Հանրապետութեան: Հոս ապրիլն ու արարելը ամենամեծ օգնությունն է անոր:

Իսկ եթէ չենք կրնար օգնել, գոնէ չվնասենք՝ Հայաստանի հասցէին տարակուսանքի պիտակներ կ'պցնելով, անոր նկատմամբ անվստահութեան ու թերահաւատութեան թեզեր յառաջ քաշելով:

ԳԵՂԱՐԴ

ՏԵՍԱԿԷՏ

ՄԻՋԱՆՅՔՆԵՐՈՒ ՊԱՏԵՐԱԶՄԸ

24/10/2023



ԱԻՕ ՊՕՂՈՍԵԱՆ

Մինչ աշխարհը շնչասպառ կը հետելի Իսրայելի եւ պաղեստինեան Կազայի հատուածին միջեւ 7 շոկտեմբերին ծայր առած պատերազմին, մեզի՝ հայերուս, համար պարտադիր է ուսումնասիրել այս պատերազմի մանրամասնութիւնները՝ քաղաքական կամ ռազմական, հիմնական խաղացողները, օգտագործուող զէնքերը եւ՝ ամէն ինչ: Յաւակնութիւնը չունինք այս յօդուածով այդ բոլորը քննարկելու: Այդ մէկը մեր ռազմական եւ քաղաքական հետազօտական ծառայութիւններուն պարտականութիւնն է:

Կասկածէ վեր է, որ պաղեստինեան «Համաս» կազմակերպութիւնը առանց որեւէ աջակցութեան պիտի չկարենար զինուիլ, ո՛չ ալ սկսիլ այս պատերազմը: Նկատի ունենալով, որ իսրայելեան ապահովութեան սպասարկութիւնները չափազանց կատարելագործուած են՝ պաղեստինեան այս ներխուժումին մասին պէտք է տեղեկացուած ըլլային եւ, հետեւաբար, այս բռնկումը իր սաղմին մէջ խեղդած ըլլային:

Միւս կողմէ, եթէ «Համաս»ը շրջանցած էր իսրայելեան այդ սպասարկութիւնները, հարց կը ծագի, թէ ի՛նչ էր պաղեստինցիներուն ստանալիք առաւելութիւնները այսպիսի ակնկալելի եւ արինալի հակադարձութենէ մը ետք:

Փաստօրէն, Միջին Արեւելքի մէջ կան քանի մը հիմնական ուժի կեդրոններ, որոնք, երկար ժամանակէ ի վեր հաստատած են որոշ հաւասարակշռութիւն մը: Իսրայել՝ այդ կեդրոններէն մէկը, նժարին մէկ կողմն էր: Միւս կողմը արաբական աշխարհն էր, իր սիւննի դաւանանքին պատկանող մեծամասնութեամբ՝ Սէուտական Արաբիան ունենալով իր հոգեւոր կեդրոնը:

1979ին՝ Իրանի յեղափոխութեան պատճառով թագաւորութեան անկումով եւ կրօնականներու իշխանութեան գալով (theocracy), Իսլամական աշխարհը ունեցաւ սիւննի մեծամասնութեան պատմականօրէն հակադրուած շիի դաւանանքին պատկանող իսլամ բազմութիւններուն համար հոգեւոր նոր կեդրոն մը, որ այդ թուականէն ի վեր սուր պայքարի մէջ է Սէուտական Արաբիոյ հետ: Այդ պայքարին մէջ Սէուտական Արաբիոյ համապատասխան մրցակից ըլլալու համար, անհրաժեշտ էր իր հովանաւորութիւնը



շնորհել արաբական աշխարհի տարածքին գոյութիւն ունեցող շիի փոքրամասնութիւններուն եւ անհրաժեշտութեան պարագային, պաշտպանը հանդիսանալ ազատագրական պայքար մղող արաբ բազմութիւններուն, ըլլա՛ն անոնք շիի կամ սիւննի դաւանանքի հետեւորդներ:

1979ին, Եգիպտոսի եւ Իսրայէլի միջեւ յարաբերութիւններու բնականոնացումէն ետք, Արաբական Միացեալ Էմիրութիւնները հետեւեցաւ նոյն ընթացքին, ապա չուշացաւ Մէուտական Արաբիոյ նոյն քաղաքականութիւնը:

Փաստօրէն, պաղեստինեան դատը մոռացութեան տալու գործընթացը սկսած էր: Ահա՛ այդ էր որ սկիզբը դրաւ Իրանի հոգեւոր իշխանութիւններուն՝ արաբական աշխարհ մուտքին: Իրան ձեռնարկեց շիի համայնքները ուժի լծակներու վերածելու մարտավարութեան՝ իր ազդեցութեան ոլորտը ընդարձակելու համար: Անիկա զօրակցեցաւ Սուրիոյ շիի դաւանանքի մէկ ճիւղը համարուող Ալաւիի իշխանութեան, Լիբանանի շիի համայնքի թիկունքը հանդիսացաւ եւ ստեղծեց կրօնա-զինուորական «Հըզպալլա» կազմակերպութիւնը, հովանաւորը դարձաւ եւ զինեց Եմէնի մէջ մեծամասնութիւն նկատուող շիի դաւանանքին պատկանող հուսի ցեղերը, որոնք հակադրուած են Սիւննի իշխանութեան եւ, վերջապէս, Իրաքի մէջ իշխանութեան տիրացած շիիներու միջոցով ունեցաւ իրեն սահմանակից յաւելեալ ազդեցութեան գօտի մը:

Արաբական երկիրներուն եւ Իսրայէլի միջեւ յարաբերութիւններու բնականոնացումը, որ կը կատարուէր ի հեճուկս պաղեստինեան դատին՝ ոսկի առիթ մը եղաւ Իրանի համար, արաբական աշխարհի բազմութիւններուն ամենէն սուրբ դատը նկատուած պաղեստինեան հարցին որդեգրողը եւ օժանդակողը ըլլալու: Այսպէս, Իրան Միջին Արեւելքի մէջ ունեցաւ Լիբանանի «Հըզպալլա»ն, Եմէնի հուսիները, Իրաքի իշխանութիւնը, Սուրիոյ Ալաւիի իշխանութիւնը եւ Կազայի «Համաս»ը:

Կազայի մէջ վերջին բռնկումէն ետք, անկասկած հրդեհի կրակը պիտի հասնի նաեւ Արեւմտեան Ափի «Ֆաթի»ի ազդեցութեան տակ գտնուող պաղեստինեան բազմութիւններուն, որոնք չեն կրնար ձեռնաձալ մնալ. անոր նախանշանները կ'երեւան արդէն: Իրանի համար, պատերազմի մը պարագային, վերոնշեալները Իսրայէլի դէմ անուղղակիօրէն իր կոիւր մղողները պիտի ըլլան (proxy war):

Իրանի այս ռազմավարութեան դէմ իսրայէլեանը պիտի չուշանար: 1991ին, Ատրպէյճանի անկախացումէն ետք, Իսրայէլ սկսաւ իր սերտ յարաբերութիւնը անոր հետ, որ սկիզբ առաւ տնտեսական գործունէութեամբ, որուն պիտի հետեւէր զենքերու վաճառքը եւ, վերջապէս,

Խարայէլեան ռազմակայաններու եւ ունկնդրող կեդրոններու հիմնումը Ատրպէյճանի հարաւը՝ Իրանի սահմանակից տարածքներուն վրայ: Այսպիսով, Իսրայէլ, ի դէմս իր տարածքին շուրջ իրանեան ուժի կեդրոններուն՝ ստեղծած եղաւ իր սեփականը Ատրպէյճանի մէջ:

Այս պատերազմին արդեօք Իրան կը միջամտէ՞: Այս հարցին պատասխանը տուաւ ինք՝ Իրան, երբ յայտարարեց, թէ ոչ մէկ աջակցութիւն տուած է Կազային եւ պիտի չմիջամտէ այդտեղ:

Գալով միւս կեդրոններուն, Արեւմտեան Ափին՝ «Ֆաթի»ի միջամտութիւնը հաւանական է, մինչ ամենէն ուժեղը եւ ուժերու հաւասարակշռութեան վրայ ազդող լիբանանեան «Հըզպալլա»ն, որուն դերակատարութիւնը էական պիտի ըլլայ եւ լուրջ սպառնալիք Իսրայէլի կայունութեան եւ ապահովութեան, ըստ քաղաքական վերլուծաբաններու շատ հաւանական չէ նկատի ունենալով, որ՝

1.- Լիբանան ներկայիս կը դիմագրաւէ տնտեսական աննախընթաց ճգնաժամ մը: Աղքատութիւնը համատարած է եւ անկէ կը տառապի մասնաւորաբար, թերեւս ամենէն աւելի շիի համայնքը: Մինչ 2006ի Խարայէլեան ներխուժման դէմ «Հըզպալլա»ն իր թիկունքին ունէր այդ համայնքի անվերապահ բարոյական աջակցութիւնը եւ հետեւանքները կրելու պատրաստակամութիւնը, որովհետեւ խնդրոյ առարկան իրենց բնակած տարածքներն էին եւ իրենց բնակարանները, դաշտերը եւ գործատեղերը: Մինչ այս պարագային, այդ աջակցութիւնը չունի, որովհետեւ իրենց տարածքէն դուրս գտնուող վայր մըն է ռազմադաշտը, հետեւաբար, կազմակերպութիւնը չունի այդ ժողովրդային նեցուկը: Թերեւս այդ պատճառով է, որ մինչեւ այսօր, նման պարագաներու մարտավարութիւն դարձած՝ «Հըզպալլա»ի առաջնորդին պատկերասփիւռի ելոյթները եւ հռետորաբանութիւնները չկան:

2.- «Հըզպալլա»ի ունեցած տարիներու վրայ կուտակուած սպառազինութիւնը թէւ մեծ է եւ լուրջ վտանգ՝ Իսրայէլի համար, սակայն անոր ազդեցութիւնը աւելի մեծ է իր չգործածուած վիճակին մէջ, թէ՛ Իսրայէլի եւ թէ՛ լիբանանեան ներքին հաւասարակշռութեան ու անոր միջոցով միւս համայնքներուն վրայ ունեցած ուժի դիրքէն ինքզինք պարտադրելու համար: Գործածութեան եւ անոր սպառման պատճառով, հակառակ հասցնելիք վնասներուն, այդ ուժի գործօնը պիտի չեզոքանայ:

Թերեւս այդ պատճառով է որ մինչեւ հիմա լուրջ հակադարձութիւն չի նկատուիր Իսրայէլի դէմ, բացի սահմանային գօտիին մէջ տեղական սահմանափակ բախումներէ:



Իսրայել նոյնպէս, եթէ իրանեան միջամտութիւն մը չըլլայ իրեն դէմ, քիչ հաւանական է որ նախայարձակ ըլլայ Ատրպէյճանի տարածքէն անոր վրայ, մանաւանդ որ այդ մէկը ամերիկեան շահերուն չի համապատասխաներ ներկայիս, երբ անիկա զբաղած է ուքրանական ճակատով, նաեւ աշալուրջ ըլլալով Ծայրագոյն Արեւելքի մէջ չինական ռազմական հզօրացման: Իրանի դէմ զինուորական գործողութիւն մը շղթայական ազդեցութեամբ կրնայ կլանել ամբողջ Միջին Արեւելքը եւ անկէ շատ հեռուները, որմէ կրնան օգտուիլ Ռուսիան, Չինաստանը, Թուրքիան եւ ուրիշներ:

Հակառակ լայնածաւալ պատերազմի մը քիչ հաւանականութեան՝ Իսրայել վստահաբար կորսնցուց IMEEC (India-Middle East-Europe Economic Corridor) Հնդկաստան-Արաբական Միացեալ Էմիրութիւններ-Սաուտական Արաբիա-Յորդանան-Իսրայել-Եւրոպա միջանցքի ծրագիրին իրականացումը, այս պատերազմին եւ անոր՝ արաբական աշխարհին հետ վերաթշնամացման մթնոլորտին պատճառով: Արդեօք Կազայի մէջ ռազմական բռնկման բուն պատճառը ուղղակի այդ միջանցքի իրականացումը խափանելու՞ համար էր: Այդ ճանապարհին այլընտրանքը եղող եւ Իրանն ալ ընդգրկողը կը մնայ Հնդկաստանէն Սեւ ծով ճանապարհը, որ պիտի խաչաձեւէր Չինաստան-Եւրոպա ճանապարհը, որ պիտի անցնի Միւնիքով, որուն վրայ կ'ուզեն վերահսկողութիւն ունենալ թէ՛ Ռուսիա եւ թէ՛ Արեւմուտքը: Ահա այստեղէն կ'երեւայ Արեւմուտքին կողմէ կակուղ վերաբերմունքը Ատրպէյճանի նկատմամբ, որովհետեւ եթէ այս տրամաբանութիւնը ճիշդ է, անոնք ալ պիտի շահագրգռուած ըլլան Զանգեզուրի միջանցքով, հետեւաբար, Միւնեաց աշխարհով հետաքրքրուած են բոլորը եւ անոնք պիտի պայքարին անոր վերահսկողութեան իրաւունքին համար:

Կը մնայ Իրանի՝ ներգրաւուելու քիչ հաւանականութիւնը պատերազմին մէջ, որուն ընթացքին հաւանաբար հարուածներ հասցուն Ատրպէյճանին, եթէ անոր տարածքէն իսրայէլեան գործողութիւններ սկսին: Այդ մէկը արդէն այնքան բարդ եւ վտանգաւոր է, որ կրնայ առաջնորդել Համաշխարհային երրորդ պատերազմին: Ամէն պարագայի, այսքան բարդ աշխարհաքաղաքական խաղերուն մէջ, Ատրպէյճանական յանկարծակի եւ արագ Միւնիք ներխուժելու վտանգը կը մնայ բարձր, եւ բոլոր հաւանականութիւններուն պատրաստ ըլլալու համար, մեր պարտաւորութիւնը կը մնայ նոյնը:

Զինուիլ:

ԱՍՊԱՐԷԶ

ՔՍԱՆՍԷԿԵՐՈՐ ԴԱՐՈՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ԹԷ՝ ԲՈՆԱՏԻՐՈՒԹԻՒՆ

Յարութիւն Իսկահատեան- Պէյրութ



Այս օրերուն ամէն ոք ագրպէյճանական աժան եւ նոյնիսկ ոմանց համար ձրի քարիւղի եւ կազի առետուրէն յղփացած, լրիւ անտարբերութեամբ ու սառնասրտութեամբ կը դիտեն Արցախի հայոց նահանջը կամ աւելի ճիշդ՝ բռնի տեղահանութիւնը դէպի Հայաստանի Հանրապետութիւն, վերագտնելու համար իրենց ազատութիւնը, որուն համար անոնք դարերով պայքարեցան վայրենի ու նենգ թշնամիներու դէմ:

Շատ հեշտ պիտի ըլլար արցախցիին համար իսլամանալու ճամբով թրքանալ եւ «եղբայրաբար» ապրիլ զինք շրջապատող մարդակերպ ու թրքածին էակներու հետ հանգիստ ու խաղաղ կեանք մը, պահպանելով իր նիւթական ստացուածքները՝ տուն, պարտէզ, գործատեղի, այլ հարստութիւններ, եւայլն:

Այսօր արցախցի հայը կը նախընտրէ ազատ ապրիլ, թէկուզ ժամանակաւորապէս իր տունէն եւ հողէն հեռու, քան՝ իր իսկ հողին վրայ չգոյանալ հայու եւ մարդկային արժէքներու տեսակետով: Սա ազատութեան կանչն ու մղումն է, որ այսօր հեռատեսիլի ու բջիջայինի պաստառներուն վրայ կը տեսնենք կարաւաններու շարքերը դէպի ազատութիւն: Նոյն այս ազատութեան համար արցախցի հայը տարիներով կռուեցաւ իր ազատութիւնը իսլէլ ուզող վայրագ թշնամիներու դէմ: Այդ պայքարին մէջ արցախցին ցոյց տուաւ իր իսկական ազատատենչ պատերազմիկի ոգին ու քաջութիւնը: Այս է պատճառը որ թշնամին հայէն շատ աւելի մեծ թիւով մեռեալներ ու վիրաւորներ տուաւ, հակառակ անոր որ ան մարտի դաշտ նետած էր իր ընտրեալ զինուորները եւ իր ձեռքին մէջ ունէր եւ ունի յառաջացած ու մեծ քանակութեամբ զէնքեր ու ռազմական սարքեր:

2020-ի 44-օրեայ պատերազմին, արցախցին կռուեցաւ ոչ միայն նախապարձակ ազերի զինուորներու դէմ, այլ նաեւ թուրք, վարձկան ծայրայեղ իսլամական, վարձկան փաքիստանցի ու աֆղանիստանցի եւ ուրիշ թշնամիներու դէմ, եւ մանաւանդ իսրայէլացի ռազմական մասնագէտներու դէմ: Այդ, հայ կռուողներու թիւը թշնամի միացեալ վոհմակներու թիւէն շատ պակաս էր, սակայն վերջիններուս մարդկային կորուստներու եւ վիրաւորներու թիւը հայ նահատակներու թիւը կը գերազանցէ:

Վերջերս, 2023-ի Սեպտեմբերի վերջաւորութեան ազերիական վայրագ յարձակումի, շրջափակումի եւ ռմբկոծումի հետեւանքով երբ մօտ երկու հարիւր հայեր նահատակուեցան, ազերի բանակը 350-400 բացառիկ զինուած ընտրեալ զինուորներ կորսնցուց ըստ հաւաստի աղբիւրներու: Ագրպէյճանական իշխանութիւնները մեռեալներու եւ վիրաւորներու թիւերու պաշտօնական յայտարարութիւն կը յամառին չտալ, ինչպէս միշտ: Թշնամիին եւ անոր դաշնակից կամ վարձկան կռուողներու մարդկային կորուստներու եւ վիրաւորներու թիւին գերազանց ըլլալուն պատճառը այն է թէ հայը իր սեփական հողն ու ազատութիւնը կը պաշտպանէր, իսկ ազերին եւ վարձկանները ոտնձգութեան գազաթնակետին հասածի հոգեբանութեամբ կամ մութ ոյժերու խստիւ հրահանգներուն ենթարկուողի պարտաւորութեամբ կը կռուէին, փոխան վճարումի: Այս մութ կողմերուն մակերեսի վրայ երեւցածը իսրայէլեան յատուկ ոյժերն են գետնի վրայ: Հայը կռուեցաւ իր արդար դատին՝ սեփական հողը պաշտպանելու մղումով ու այս պատճառով անոր կռուելու որակը գերազանց է քան թշնամիներունը, որոնք զաւթելու, կեղեքելու եւ կողոպտելու մարմաշով կը կռուին:



Այս պատերազմին մէջ եթէ Ագրպէճան օտար ոյժերէ, մանաւանդ Բարայէլէ եւ Թուրքիայէ հսկայական օգնութիւն եւ ցուցմունք ստացած չըլլար, ապա վստահաբար կրնանք հաստատել թէ յաղթանակը հայունն էր:

Մինչ կը կը լսէինք Արցախի բռնագաղթի լուրերը զանազան լրատուական պաստառներու վրայ եւ կը տեսնէինք Արցախի հայոց կարաւաններով մեկնումը դէպի Գորիս, համայն աշխարհի հաշտ ու անտարբեր աչքերուն առջեւ, կը տեսնէինք հայ գաղթականներու դժուարութիւններով լի վիճակը ճամբուն վրայ եւ անոնց ապրուստի վերաբերեալ մտահոգութիւնները կ'իմանանք, յանկարծ Ռոյթըրզ լրատուական գործակալութիւնը կը յայտնէ թէ Ագրպէճան պատրաստած է 200 պատասխանատու արցախահայերու ցանկ մը զանոնք ձերբակալելու նպատակով: Հայոց հողերը խլելէ ետք հայ ազատամարտիկներու ազատութիւնը կ'ուզեն կաշկանդել անոնք, գլխաւորաբար Արեւմուտքի ցուցմունքներով եւ Ռուսիոյ հաւանութեամբ ու նոյնիսկ՝ ցուցմունքով : Այս բոլորին մէջ, ռուսերը նիւթական շահի փոխարէն իրենց դաշնակիցին՝ հայոց շահերը ոտնակոխ ըրած կը ջանան «արդար» միջնորդի դիմակ յարմարցնել իրենց դէմքին վրայ, իրենց ազգային շահերը առաջնահերթ նկատելու մեծապետական պատրուակով:

Ի՛նչ հիւանդագին հոգեբանական մղում, որով ախտաւոր մարդիկ հայոցմէ հողերը խլելէ ետք իսկ կ'ուզեն անոնց ազատութիւնը բռնաբարել: Մարդկային արիւնի ծարաւ թուրք ազերի ղեկավարները չեն բաւականացած թափուած արիւնով, ու այժմ կ'ուզեն իրենց զոհերը չարչարել բանտերու զնտաններուն մէջ եւ ապա անոնց արիւնը ծծել: Ռոյթըրզ պարզապէս Արեւմուտքի դաշնակից այսպիսի մարդակերպ գազաններէ ազատատենչ հայոց պատգամ մը կը փոխանցէ՝ անոնց ազատութեան ըմբռնումին վերաբերեալ: Ազերի թուրքերը հայ ազատամարտիկներու մտքերու աչքերուն առջեւ կը պարզեն Պաքուի բանտերու զնտաններուն տեսարանները, Արեւմուտքի եւ Ռուսիոյ հաւանութեամբ:

Մեր օրերուն ընդհանրապէս Արեւմուտքը եւ մասնաւորապէս Միացեալ Նահանգները ճանչցուած են իբրեւ ազատութեան ջատագովները: Անոնք դժբախտաբար միայն ազատութեան ջատագովողներն են, այսինքն միայն խօսողներ եւ ոչ թէ ազատութեան հաւատացողներ կամ արդարութիւնը կիրառողներ: Անոնք ազատութիւնը կ'ըմբռնեն միայն իրենց անձերուն համար ազատութիւն եւ ուրիշներուն՝ ստրկութիւն: Այս քաղաքականութեամբ Արեւմուտքն ու Ռուսիան ժողովուրդներ կը ճգմեն, ժողովուրդներու վրայ գաղութարարութիւններ կը կատարեն, միայն այդ երկիրներու բնական հարաստութիւնները կողոպտելու նպատակով: Արցախի հարցին նկատմամբ Արեւմուտքի ժխտական կեցուածքը հինէն յայտնի է: Ռուսիոյ պարագային՝ Ագրպէճանի եւ Թուրքիոյ հետ առեւտրական ոլորտին մէջ սերտ յարաբերութիւններ մշակած ըլլալով, Ռուսիա դոյզն չափով իսկ օգնութեան ձեռք չերկարեց, այլ Ագրպէճանը քաջալերեց հայոց դէմ իր թշնամական արարքները ի գործ դնելու համար: Հաւանական է որ Ռուսիա բացասականօրէն Ագրպէճանի խորհուրդ տուաւ Արցախի ղեկավարները եւ ազատամարտիկներէն ոմանք ձերբակալելու, նախապէս անոր յանձնելով այդ մարդոց մասին տեղեկութիւններ: Հակառակ սոյն իրողութեան, այս ծիրին մէջ Ռուսիա կ'այլապէս Եւրոպական Միութիւնը Հայաստանի հանդէպ թշնամական կեցուածք ունենալու յանցանքով, պարզապէս Հայաստանը Եւրոմիութենէն հեռացնելու նպատակով: Այսպիսով Ռուսիա Հայաստանի եւ ԱՊՀ-ի միջեւ բոլոր համաձայնութիւնները ոտնակոխ ըրաւ, ստիպելով Հայաստանին շահամոլ ու հետեւաբար կողմնակալ Արեւմուտքին գիրկը նետուելու, որ յաճախ պաշտօնականութիւնն ու իրաւասութիւնը արդէն իսկ կորսնցուցած արդար ու «հայանպաստ» որոշումներու յայտարարութիւններով կը փորձէ խաբել հայերը... Ներկայիս ոչ մէկ պաշտօնական հանգամանք ունեցող եւ նախապէս պաշտօնի վրայ գտնուած բարձրաստիճան պատասխանատուներ «ի նպաստ» հայոց յայտարարութիւններ կը շռայլեն...



Արեւմուտքի պետութիւններու վերնախաւին եւ դիւանագիտական կառոյցներու բարձրաստիճան պաշտօնեաներու առօրեայ կրկներգը դարձած է «ազատութիւն եւ ժողովրդավարութիւն» («freedom and democracy») նշանաբանի արտայայտութիւնը: Ամէն ինչ որ կ'ընեն այս անօրէնները անոնց կեղծ հաւաստիութիւնը այս նշանաբանին կը վերագրեն եւ իրենց հարցում ուղղող թղթակիցներուն վերոյիշեալ արտայայտութիւնը կ'արտասանեն շեշտելով, թէ իրենց ըրածները եւ ընելիքները ազատութեան եւ ժողովրդավարութեան սիրոյն են միայն: Անոնք կը շաղակրատեն նաեւ «մարդու իրաւունքներ» կոչուած սուտին մասին:

Արդե՞օք ինն ամիս Արցախը պաշարման տակ պահելը, ամբողջ հարիւրքսան հազար հայեր իրենց իսկ սեփական հողին վրայ առանց սնունդի եւ դեղօրայքի ձգելը, անոնց վրայ յաճախ կրակ տեղացնելը եւ հայեր առեւանգելով զանոնք չարչարելէ ետք սպանելը կը համապատասխանէ՞ ազատութեան գաղափարախօսութեան: Այս մասին ի՞նչ կը խորհին ամերիկացի, անգլիացի, ռուս եւ օտար «ազատութիւն» ու «մարդու իրաւունքներ» կոչուած կեղծաւորութեանց քարոզիչները...

Կայ նաեւ այլ աճպարարական «փիլիսոփայութիւն» մը Արեւմուտքի քաղաքագէտներուն եւ դիւանագէտներուն մօտ՝ «քաղաքականութիւնը բարոյականութիւն է» ասացուածքը: Վերջերս այս արտայայտութիւնը լսած եմ արեւմտեան երկրի մը դեսպանատան՝ մտքով միջակ կարողութեամբ բարձր դիրք ունեցող պաշտօնեայի մը բերնէն, որ կը ջանար արդարացնել որոշ ղեկավարի մը բարբարոսական յարձակումները այլ երկրի մը վրայ, ու ծածկել անոր բացայայտ սուտերն ու ոճիրները: Այդպիսի լեզուախաղերով է որ Իրաք կործանեցաւ իր անգոյ համայնաքանդիչ զենքերու սուտին պատճառով:

Տակաւին վերջերս Թուրքիոյ պաշտպանութեան նախարար՝ Եաշար Կիլիւր «պատուաւոր» յայտարարութիւն մը ցրուեց լրատուական ցանցերուն ըսելով. «Հայաստան պարտի Ազրայէճանի միջանցք տալու իր խոստումը կատարել», երբ իրականութեան մէջ Հայաստան այդպիսի խոստում մը չէ տուած, ոչ բանաւոր եւ ոչ ալ զրաւոր: Ընդհակառակն, Հայաստանի Հանրապետութիւնը կտրականապէս մերժած է միջանցք հայթայթել Ազրայէճանին Նախիջեւանը իր մայր հողամասին կապելու համար : Թուրք նախարարը պարզապէս կը ստէ եւ այս սուտը արեւմտեան քաղաքական ու դիւանագիտական պատասխանատուներու կողմէ կ'ընդունուի իբրեւ բարոյականութիւն: Սա լոկ սուտի վրայ հիմնուած նենգ սպառնալիքով սարսափ ազդելու քաղաքականութիւն է:

Վերջին քանի մը տասնամեակներուն, Թուրքիա, որ Իսրայէլի հետ սերտ գործակցութեան մէջ է, սովորութիւն դարձուց իր եւ իրեն դաշնակից Ազրայէճանի ոճիրները բացայայտող դատապարտութիւններուն իբրեւ պատասխան յայտարարել թէ այդ կեցուածքները դէմ են իսլամ կրօնքին, իսլամ աշխարհի՝ արաբական աշխարհի ու մանաւանդ արաբական Օղջի երկիրներու համակրանքն ու հնչուն ոսկիներու նեցուկը պահպանելու եւ աւելի՛ն ապահովելու միտումով: Այս մէկն ալ ահա՛ւասիկ քաղաքականութեան «բարոյական» բնոյթը ցոյց կու տայ...

Հայտար Ալիեւի բռնատէր խունդայի քանի մը «սրտցաւ» բարձրաստիճան պաշտօնեաներ, ի տես Արցախի հայոց բռնագաղթին ու տեղահանութեան, կեղծ զարմանքով արտայայտուած են ըսելով. «Հայերը ինչո՞ւ կը հեռանան, անոնք մեր եղբայրներն են...»: Մինչ բռնատէր Ալիեւի զինուորական վոհմակը՝ ռուսական թելադրութեամբ եւ արեւմտեան հաւանութեամբ կամ թերեւս ալ նոյնպէս՝ թելադրութեամբ, հետամուտ է ձերբակալելու ազատութիւն փնտրող արցախցի հայ երիտասարդները, նաեւ անոնց զինուորական ու քաղաքական բարձրաստիճան ղեկավարները եւ Պաքուի զնտաններու մէջ մաշեցնելու, գոհացում տալու համար իրենց հիւանդագին վրէժի ու ատելութեան հոգեբանական բարդոյթներուն... Այս է ռուսական եւ արեւմտեան ըմբռնումը բարոյականութեան նկատմամբ:



Եւրոպական Միութիւնը, ներկայացուած ՏԻԿԻՆ Ուրսուլա Վան տէր Լէյէնով, պարզապէս հակադրուելով Փութինի՝ կազմի մատակարարման հարցով, «Բարոյական» խիզախ քայլով մը՝ Արցախի Հանրապետութեան գոյութիւնը եւ արցախցի հայոց ազատութիւնը կը փոխարինէ դէպի Եւրոպա ագրայէճանական կազմի մատակարարումի ապահովման հետ: Այս «փափկասուն» տիկինը անձամբ դէպի Պաքու կը վազէ եւ բռնատէր Ալիէի հետ ժողով մը գումարելէ ետք անոր իբրեւ Բարենիշ հետեւեալը կը բարբառէ. «Պարոն Ալիէ, դուք վստահելի անձնաւորութիւն մըն էք...»: Ահաւասիկ այս է Եւրոպական ըմբռնումը բարոյականի նկատմամբ:

Արեւմուտքը կը բաւականանայ միայն Արցախի արմատախիլ եղած հայութեան մարդասիրական ժլատ օգնութիւն ուղարկելով: Ֆրանսա զենքերու հետ առնչուող կարգ մը նախնական գործիքներ կը խոստանայ վաճառել Հայաստանի, մինչ անոնց օգնութիւնները Ագրայէճանի եւ Թուրքիոյ անհամեմատաբար կը գերազանցեն Հայաստանի տրուելիք օգնութեան: Յիշենք թէ Ֆրանսա Ափրիկէի մէջ իր կարգ մը գաղութները վերջերս կորսնցընելու վրայ է: Ան կը փորձէ Կովկաս մտնել: Այս է Արեւմուտքի «բարոյականութեան» գերազանց դրսեւորումը:

Ի՛նչ ազատութիւն, ի՛նչ ժողովրդավարութիւն ու ի՛նչ բարոյականութիւն: Այս երեքին մասին ամէն օր քաղաքագէտներն ու դիւանագէտները կը ճառեն սանձարձակօրէն: Արցախի Հանրապետութեան բոլոր բնակիչները բռնի գաղթի ճամբուն դնելը արդեօ՞ք ազատութեան եւ ժողովրդավարութեան գաղափարախօսութիւններու հետ որեւէ աղերս կրնա՞յ ունենալ: Արդեօ՞ք Արցախի Հանրապետութեան մէջ բնակող հայերը պէ՞տք է Պաքուի վերնախաւին կողմէ իշխուին: Արդե՞օք այս բոլորին մէջ նշոյլ մը իսկ բարոյականութիւն գոյութիւն ունի՞:

Ու տակաւին «բարոյական» իբրեւ այլ արարք մը Ագրայէճանի կողմէ, ան Հայաստանի Հանրապետութենէն հսկայական գումարի դրամ կը պահանջէ՝ իբրեւ Արցախեան պատերազմի վնասուց հատուցում: Ան «Բարոյապէս» կը սպառնայ թէ հակառակ պարագային Հայաստանի Հանրապետութիւնը ստիպուած պիտի դառնայ Ագրայէճանի մայր հողը Նախիջեւանի կապող Զանգեզուրեան անցքը ձրիօրէն հրամցնել: Տեսնենք թէ Ագրայէճանի Արեւմուտքի եւ Արեւելքի դաշնակիցները այս հարցին նկատմամբ ի՞նչ դիրք պիտի որդեգրեն, որովհետեւ անոնք եւս «Բարոյական» մարդիկ են ու այս մէկը նկարագրի լոկ թալանճիական յատկութիւն մըն է 21-րդ դարուն Ագրայէճանի կողմէ, որ իր թուրք ցեղային էութեամբ դարերով վարժուած է կողոպուտի, անով ապրած՝ իբրեւ ձրիակեր մակաբոյծ մը, ճիշդ օսմանցիներու վերնախաւին եւ թուրք ժողովուրդին նման:

Եւ վերջապէս, նախապէս ծրագրուած ու որոշուած եւ կատակերգութեան նմանութեամբ, Միացեալ Ազգերու Կազմակերպութեան ներկայացուցչութիւնը այցելեց Արցախ, միան այն ատեն երբ արցախցի հայ ժողովուրդը բռնի տեղահան եղած էր իր հողերէն: Ամենայն անփութութեամբ ու սառնասրտութեամբ, ներկայացուցչութիւնը իր կողմնակալ գեկոյցը պատրաստեց ու հրապարակեց օր ցերեկով ամբողջ աշխարհի աչքին առջեւ: Արցախի Հանրապետութեան քաղաքացիներու եւ քաղաքական ու զինուորական պատասխանատուներու ձեռքակալութիւնը անոնց համար ոչինչ են: «Ամէն ինչ բնական է...» իմաստով խաբեբայ ու կեղծ արտայայտութիւն մըն էր այդ: Եւրոպական Միութիւնը խստիւ կը դատապարտէ Ագրայէճանը՝ Արցախի հայոց բռնագաղթ պարտադրելու յանցանքով եւ արժանի կը գտնէ անոր դէմ պատժամիջոցներ կիրառել, սակայն... պէտք չէ խոչընդոտել կազմի եւ քարիւղի մատակարարումը Եւրոպայի, ուստի Ագրայէճան զերծ կը մնայ որեւէ պատիժէ...

«Ազատութեան, բարոյականութեան եւ ժողովրդավարութեան» վայրագ վարուելակերպի մէկ նոր դրսեւորում մը եւս այն է թէ Ագրայէճան Իսրայէլի մեղսակցութեամբ մարդկային օրկաններու վաճառքի ձեռնարկած է ատենէ մը ի վեր... Արդարեւ, առեւանգուած եւ գերի բռնուած հայերը սպանուելէ առաջ կը ղրկուին Թէլ Ավիւ եւ ապա Իսրայէլի Աշտուտ աւանը,

ուր տեղի կ'ունենայ մարդկային օրկաններու անջատում եւ ապա վաճառք: Այս «պիզնըսը» Ազրալէճանի եւ Իսրայէլի համար միլիոնաւոր տոլարներ կ'ապահովէ: Ու տակաւին Արեւմուտքն ու Ռուսիան լուռ են...

Այսպիսով մինչեւ այն ատեն տեղի ունեցած եւ շարունակաբար տեղի ունեցող հայ ժողովուրդի ողբերգութիւնը չէր հետաքրքրեր աշխարհի հսկաները... Սա պարզապէս անտառի օրէնքն է...


Անձնապէս բուռն հաւատացող մըն եմ՝ օր մը Աստուծոյ Դատաստանին առջեւ բոլոր մարդոց հաշիւ տալու ճշմարտութեան ու այս պատճառով հարց կու տամ. «Արդեօք այս մարդիկը ի՞նչ հաշիւ պիտի տան Աստուծոյ Դատաստանին առջեւ»:

Աստուածաշունչը հետեւեալ խօսքով կը զգուշացնէ մարդիկը Դատաստանի նկատմամբ. -

«Հապա զարհուրելի սպասում մը դատաստանին ու կրակի բարկութիւն մը կը մնայ, որ պիտի լափէ հակառակորդները»: Եբր. 10.27

ՊԱՅՔԱՐ 345

ԿՈՐՄՆՈՒՑԻՆՔ ԱՐՑԱԽԸ «ԺԱՄԱՆԱԿԱԻՈՐԱՊԷՍ». ՈՒՇՔԻ ՊԷՏՔ Է ԳԱՆՔ ՉԿՈՐՄՆՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ



Այս օրերուն ծանր է մթնոլորտը Հայոց աշխարհի ամբողջ տարածքին: Ծանրագոյնը Արցախի մէջ է, ոչ շատ պակաս ծանր է նաեւ կացութիւնը Հայաստանի մէջ: Անխուսափելիօրէն սփիւռքահայութիւնը եւս շժմած է վերջին շրջանին, յատկապէս վերջին օրերուն, հայոց աշխարհի մէջ կատարուած ու տակաւին կատարուող քաղաքական եւ ռազմական ցնցիչ զարգացումներուն իբրեւ անգորակնատես: Մեր ժողովուրդի ժամանակակից պատմութեան ամենածանր շրջաններէն մէկն է որ կ'ապրինք այս օրերուն: Մեծագոյն մարտահրաւերը բոլորիս համար կը կայանայ ջանալ ազգովին ստեղծելը կացութեան լրջութեան համազօր հասուն եւ հանդարտ տրամադրութիւն՝ գործածելով, կարճ եւ երկար ժամանակի համար ազգային փրկութեան խելօք ռազմավարական ծրագիրներ: Պէտք է առաւելագոյն չափով

դաս առնել վերջին տարիներուն այդ ռազմավարութեան չգոյութեան հետեւանքով ազգովին կրած մեր ծանր կորուստներէն:

Առաջին հերթին անհրաժեշտ է ամէն գնով կանխել հայ ժողովուրդի տարբեր մասնիկներու ուժերուն վատնումը՝ տեղի տալով դժուար լուծելի ներքին հակամարտութիւններ հրահրելու այսօրուան ակնյայտ փորձութեանց: Ուրիշ խօսքով՝ պէտք է հասունութիւն ցուցաբերել բոլորին կողմէ, իսկապէս հաւատալով եւ ամէն գնով դրապէս իրագործելով այնքան գործածուած եւ գրեթէ երբեք չիրագործուած Ազգային Միասնականութիւնը:

Իշխանութիւնը, ըսել կ'ուզեմ՝ որեւէ իշխանութիւն, յատկապէս օրուան իշխանութիւնը, ընդդիմութիւնը, ըսել կ'ուզեմ՝ որեւէ ընդդիմութիւն, կուսակցութիւններ՝ ըսել կ'ուզեմ որեւէ կուսակցութիւն, եւ սփիւռքահայութիւնը իր տարբեր կառոյցներով, ըսել կ'ուզեմ՝ որեւէ մէկը այդ կառոյցներէն, ստիպողաբար պարտի մասնակից ըլլալ եւ իր բոլոր միջոցներով օժանդակել այդ Ազգային Միասնականութեան կայացման: Ստեղծուած այս



միասնականութեան ալ առաջնահերթ նպատակը պարտի ըլլալ ծրագրել եւ գործադրել Ազգային Փրկութեան Ռազմավարական ծրագիր մը, որուն պարտին իրենց օժանդակութիւնը բերել հայ ժողովուրդի վերոյիշեալ բոլոր գործօն մասնիկները: Այս հանգրուանին, որեւէ մէկուն կողմէ խախտելը այս գործելակերպին, իսկապէս համագործակցային դաւաճանութեան:

Ազգային Փրկութեան Ռազմավարութեան հիմնական տուեալներուն մասին արդէն իսկ կարելի է առաջարկներ ընել՝ պաղարհւնութեամբ վերլուծելով մեր մօտաւոր անցեալի պատմութիւնը: Այդ պատմութեան սկիզբն է Հայաստանի եւ Արցախի անկախացումը 1990-ական առաջին տարիներուն եւ անոր վերջաւորութիւնն ալ այս օրն է:

Կարելի չէ եւ արդար ալ չէ այսօր, այս քանի մը տողերու սահմաններուն մէջ երկար կամ մանրամասն վերլուծումներ կատարել՝ անդրադառնալով այդ երեք տասնամեակներու պատմութեան բոլոր հանգրուաններուն, ներառեալ, մանաւանդ, 2018 թուականին այսպէս կոչուած «Թաւշեայ յեղափոխութեան» անկիւնադարձային դրուագը:

Այդ տարիներու «մեծ պատկեր»ը միայն նկատի առնելով, որոշ կերպով կրնանք մատնանշել հետեւեալ հիմնական իրականութիւնները եւ առաջքը առնել այդ իրականութեանց նկատմամբ հայկական շահերը պաշտպանելու պատասխանատւութիւն ունեցող տարբեր ժամանակներու պատասխանատուներուն ակնյայտ բացթողումներուն:

Առաջին եւ մեծագոյն բացթողումը եղած է Հայաստան-Արցախ սահմանները լրջօրէն պաշտպանելու կարող ռազմական լրջագոյն մակարդակով եւ քանակով ոյժեր ապահովելու ջանքերու բացակայութիւնը: Այս բացթողումը, որուն համար պատասխանատու են երեք տասնամեակներու իշխանութիւնները, ազգային յանցագործութեան համագործակցութիւնն է: Ուրեմն այսօրուրէն իսկ սկսելով, ազգային գերագոյն պահանջ պէտք է նկատուի, այս կամ այն, ուղղակի թէ անուղղակի, տեղական թէ արտաքին միջոցներ գործածելով երկիրը ապահովել իր պաշտպանութեան ՄԵՓԱԿԱՆ մարդկային եւ ռազմական հզօր համակարգով:

Երկրորդ մեծ բացթողումը սրբագրելու համար, անհրաժեշտ է Հայաստանի առկա իշխանութեանց եւ սփիւռքի ամբողջ ուժականութիւնը գործածելով, ջանալ եւ յաջողիլ ստեղծել միջազգային հանրային կարծիք, թէ Հայաստանն իսկ ենթակայ է ուշ կամ կանուխ ջնջուելու աշխարհի քարտէսէն, իր ազգերի եւ թուրք դրացիներու համատեղ գործակցութեամբ: Արդարեւ, այս հանգրուանին արդէն իսկ փաստուած է, թէ այսպէս կոչուած «Խաղաղութեան համաձայնագիրները» այս դրացի երկիրներուն հետ ոչ մէկ արժէք կը ներկայացնեն:

Այս օրերու դառն փորձառութեամբ փաստուած այս իրականութեան ոյժին տակ Հայաստան պէտք է յաջողի պահանջել ՄԱԿ-էն, իր այդ երկիրներու սահմաններուն վրայ գետեղել «Միջազգային խաղաղապահ ոյժեր», եւ ոչ թէ միայն մէկ կամ միւս յատուկ երկրի պատկանող զինուորական ներկայութիւն:

Երրորդ մեծ բացթողումը, որ պէտք է անյապաղ սրբագրուի, Հայաստանի իշխանութեանց կողմէ (ով որ ըլլայ այդ իշխանութեան գլուխ գտնուողը), մասնաւոր կարեւորութեամբ ստեղծելն է Հայաստան-Սփիւռք միասնական գործակցական վարչամեքենայի մը: Մինչեւ



այսօր աժան հռետորախօսութեամբ կ'ըսուի, որ եթէ Ատրպէյճանը քարիւղ ունի, Հայաստանն ալ ունի Սփիւռքը...: Նոյն ժամանակ, մանաւանդ վերջին իշխանութիւնները ոչ մէկ ջանք կատարած են կազմակերպուած ձեռով այդ «հարստութիւն»ը ի շահ Հայաստանի գերագոյն պահանջներուն օգտագործելու: Արդարեւ, Սփիւռքը ունի մարդկային եւ նիւթական շատ մեծ կարողութիւններ, որոնք սակայն համադրուած չեն եւ չեն ալ կրնար իրենք իրենց համադրուիլ օգնելու համար հայրենիքին: Այդ աշխատանքին պատասխանատուութիւնը ամբողջովին կը պատկանի Հայաստանի իշխանութեանց:

Ահա այս օրերու խորապէս տագնապալից մթնոլորտին մէջ այն խորհրդածութիւնները, որոնք կ'առաջարկենք ապագայի նկատմամբ յոյս ստեղծելու նպատակով՝ աշխատանքի ուղղութիւններ ունենալն է: Բնականաբար խորհրդածութեանց այս դաշտը ոչ մէկուն առանձնաշնորհումն է: Եթէ կան համոզիչ յաւելուածական կամ տարբեր առաջարկներ, հիմա՝ է ժամանակը բոլոր անոնց համար որ մտահոգ են մեր ազգի ապագայով, բացայայտուելու:

Պէտք չէ մոռնալ, թէ ժամանակակից պատմութեան էջերուն մէջ միակ պարագան որ, յարգելով հանդերձ բոլոր չափանիշներու մակարդակի տարբերութիւնը, նման է հայ ժողովուրդի պատմութեան՝ հրեաներու եւ Իսրայէլի պատմութիւնն է: Գրեցի անցեալին, թէ պէտք է ջանանք մեր կարելիութեան սահմաններուն մէջ օրինակ առնել եւ ջանալ ստեղծել Սինի-Իսրայէլի համագոր Հայաստան մը:

Առժամաբար կորսնցուցինք Արցախը, սակայն անցնող դարերուն ունեցած ենք աւելի եւս դաժան շրջաններ: Կարելորը սթափիլն է այսօր եւ որդեգրել համազգային խելացի քաղաքականութիւն մը, որպէսզի վաղուընէ սկսեալ սկսինք նախ փոքր, ապա հետզհետէ մեծ քայլերով ընթանալ առաջ:

Եթէ ձախողինք՝ պատճառը մենք ենք:

Եկեք միացնենք մեր ունեցած մտաւորական թէ նիւթական բոլոր կարողութիւնները ի պաշտպանութիւն եւ ի հզօրացում մեր հայրենիքին:

Դոկտ. ԱՐՇԱԻԻՐ ԿԷՕՆՃԵԱՆ

Մոնրէալ

ԻՐԱՆ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՓՈԽԱԴԻՆԵԼՈՒ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ



Հոկտեմբեր 23-ը ռազմավարական դիտանկիւնէն շրջադարձային թուական մը հանդիսացաւ Հայաստանի համար. նախ որովհետեւ տարածաշրջանի երկիրներու «3+3» հարթակի հանդիպումն էր Թեհրանի մէջ, որուն մաս նակցեցան Իրանի, Թուրքիոյ, Ռուսաստանի, Ազերպայճանի եւ Հայաստանի Արտաքին գործոց



նախարարները, ի բաց առեալ Վրաստանի, որ Ռուսաստանի հետ ունեցած հակամարտութեան պատճառով հրաժարած էր մասնակցելէ: Ապա նաեւ ու մա՛նաւանդ անոր համար, որ Ֆրանսայի հետ պաշտպանական զենքերու գնումի պայմանագիր ստորագրուեցաւ: Այս երկու ռազմավարական ուղղութիւնները թէւ առաջին հայեացքով իրարու կը հակադրուին, մէկը՝ արեւմտեան թեքումով, միւսը՝ տարածաշրջանային, ուր Իրանի եւ Ռուսաստանի ներկայութիւնը անհանդուրժելի է Արեւմուտքի համար եւ փոխադարձաբար: Սակայն, Հայաստանի վարչապետը Կրանատայի Եւրոպական քաղաքական համայնքի ժողովէն վերադարձին անդրադարձաւ տարածաշրջանային «3+3» հարթակի հանդիպումին Հայաստանի մասնակցութեան անհրաժեշտութեան, ըսելով թէ Արեւմուտքի գործընկերներու հետ յարաբերութիւնները պէտք չէ այն տպաւորութիւնը թողուն որ Հայաստան կ'անտեսէ իր անմիջական դրացիներուն հետ երկխօսութիւնը:

Եւ իրօք, Արցախ-Ազերպայճան հակամարտութեան ամբողջ երկայնքին Արեւմուտքի միջամտութիւնը եւ երաշխիքները արգելք չհանդիսացան որ Ազերպայճան Թուրքիոյ եւ Ռուսաստանի հաւանութեամբ պատերազմ մղէ Արցախի ու Հայաստանի դէմ եւ բռնի ուժի կիրարկմամբ գրաւէ ամբողջ Արցախը եւ Արցախահայութիւնը ենթարկէ ցեղային զտումի: Ալիււի ռազմական ախորժակը այս կէտին կանգ չառնելով՝ պիտի շարունակէր Սիւնիքով, եթէ Իրան չցցուէր իբրեւ հօր պատնէշ, արգելք չհանդիսանար Սիւնիքի միջանցքի ռուս-թուրք-ազերական ծրագրի յաջողութեան: Արդարեւ, Իրան բարձրագոյն մակարդակի յայտարարեց որ պիտի չընդունի որեւէ սահմանային փոփոխութիւն:

Այս իրողութենէն մեկնած, Հայաստանի կառավարութեան որոշումը՝ մասնակցելու Թեհրանի մէջ տարածաշրջանային «3+3» հարթակի հանդիպումին բոլորովին հասկնալի է ու արդարանալի: Եւրոպան Արցախի հայաթափումը կանխելու առումով անօգուտ գործընկեր ու միջնորդ հանդիսացաւ: Արթնցաւ երբ Արցախ արդէն ենթարկուած էր ցեղային զտման: Հայաստանի իշխանութիւնները Արցախի շրջափակման գրեթէ 10 ամիսներու ընթացքին զգուշացուցին իրենց արեւմտեան գործընկերները Արցախահայութեան ցեղային զտման վտանգին մասին: Զգուշացուցին որ Ալիււի խոստումներուն պէտք չէ ապաւինիլ: Սակայն, աղէտը տեղի ունեցաւ, հարիւր հազար ժողովուրդ մէկ շաբթուան մէջ լքեց իր պապենական հողը: Միջազգային ոչ-կառավարական կազմակերպութիւններու զգուշացումները եւս ոչ մէկ արդիւնք տուին: Սակայն, անոնց եզրակցութիւններն ու ամբաստանութիւնները,– յատկապէս Ցեղասպանութեան կանխարգիլման Լեմբին հիմնարկին, որ Եւրոպացի քաղաքական գործիչները մեղսակից յայտարարեց Արցախի մէջ գործուած ցեղային զտման,– անհետեւանք չմնացին: ԱՄՆ-ն ու Եւրոպան մարդասիրական օգնութեան ձեռք մեկնեցին, Հայաստան փութացուցին իրենց պատասխանատու պաշտօնեաները: Նոյնիսկ, Հայաստանի ինքնիշխանութիւնը պաշտպանելու համար սկսան առաջարկել ռազմական օգնութեան ծրագրեր:

Այս բոլորին մէջ Ֆրանսայի կառավարութեան դիրքորոշումը թերեւս ամէնէն ուշագրաւն էր, որուն ջանքերով Հայաստանի եւ Ազերպայճանի սահմանին տեղակայուեցաւ Եւրոպական Միութեան մնայուն դիտարկման առաքելութիւնը, որուն շնորհիւ երկու անգամ հրաւիրուեցաւ ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհուրդի ժողով եւ վեջապէս Հոկտեմբեր 23-ին

Փարիզի մէջ, Պաշտպանութեան նախարարներ Սեպասթիէն Լը քոռնիւ եւ Սուրէն Պապիկեան կնքեցին պաշտպանական զենքերու գնումի պայմանագիր:

Հայաստանի անվտանգութեան ապահովման առումով՝ Արեւմուտք եւ Իրան, երկուքն ալ իրենց կարելորդ դերակատարութիւնը ունին, հակառակ անոր, որ ասոնք իրարու հակադիր ճակատներ են միջազգային հարթակի վրայ եւ Իսրայէլ-Պաղեստին պատերազմը աւելի լարեց իրավիճակը: Ռուսաստանն է որ Ուքրաինայի մէջ իր արկածախնդրական պատերազմով՝ կովկասեան ճակատը կորսնցնելու վրայ է, ի նպաստ Իրանին:

ԺԻՐԱՅՐ ՉՈԼԱՔԵԱՆ

ՆՈՐ ՅԱՌԱՋ

26/10/2023

ԵՐՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ Բ. ԱՐԱՐԸ

Յակոբ Միքայէլեան

10/11/2023



Մեծ տրամա մըն է, որ աւելի քան ամիսէ մը ի վեր համաշխարհային ուշադրութեան առարկայ է, բազմահազար կռուող դերակատարներով, ողջ ու անկենդան, բազմաթիւ արարներով ու 468 միլիոն արաբ եւ անհաշիւ միլիոնաւոր միջազգային հանդիսատեսներով: Նախերգանքը անակնկալ էր եւ հերոսական, ընթացքը դադար չունեցող բախումներով՝ ոչ հերոսական, իսկ վերջերգը բնաւ յայտնի չէ, սակայն վստահ՝ ողբերգական պիտի ըլլայ:

Գ. Աշխարհամարտ, Արար Բ.- Պաղեստին-Իսրայէլեան պատերազմ, որ մոռցնել տուաւ Ռուս-Ուքրաինական պատերազմը: Աշխարհի ամենաուժեղ, ամենաարդիական զինուժով համալրուած, մօտ կէս միլիոն անձնակազմով իսրայէլական բանակը աշխարհի փոքր մէկ ազգային-ազատագրական, քառասունհազարնոց ռազմիկ կազմակերպութեան դէմ պատերազմի մէջ է: Ի՞նչ պատերազմ. տեղի ունեցածը պատերազմ չէ, աւելի ճիշդ կ'ըլլայ ջարդ, կամ կոտորած անուանել, երբ Իսրայէլ անկարող է ապստամբ կազմակերպութիւնը արմատախիլ ընելու, յուսահատ կը դիմէ ամենավայրագ միջոցին՝ ջարդելով խաղաղ բնակիչները, առանց տարբերութիւն դնելու իր ԱԹՍ-ներով ու կործանիչ օդանաւերով թիրախաւորուածները, ըլլան անոնք կին, երախայ, թէ ծերունիներ ու ցարդ 10000-է աւելին մարդ սպանելով, որոնցմէ մօտ 4000-ը երեխաներ են... Էին:

Իսրայէլ, ռազմատենչ իր ղեկավարով որոշած է արմատախիլ ընել Համաս կազմակերպութիւնը, որ տասմաեակներէ ի վեր կը պայքարի յանուն պաղեստինցիներու իրաւունքներուն՝ իրենց հողերուն վրայ ազատ ու անկախ ապրելու համար: Իսրայէլ չընդունիր անոնց պահանջքը ու ամէն անգամ անհաշիւ զոհեր պատճառելով կը հեռանայ, յուսալով որ Համաս մէյ մըն ալ չի համարձակիր առիծին պոչին կոխել: Սակայն այս անգամ տարբեր էր, շատ տարբեր, նախայարձակները պատժելու միակ ձեւը բռնագաղթն ու բնաջնջումն էր:



Այսպէս կը վարուէին հազարաւոր տարիներ առաջ արիւնարբու միապետները, որոնք իրենց թշնամին սպանելով չբաւարարուելով, սուրէ կ'անցընէին անոր գերդաստանը ամբողջութեամբ: Այսպէս վարուած է նաեւ Բարայէլի պաշտպան «խաղաղասէր» Ամերիկայի Միացեալ Նահանգները, երբ Երկրորդ համաշխարհային պատերազմին, Ճափոնի կողմէ քարուքանդ եղած իր ռազմական նաւատորմիդին վրէժը լուծելու համար հիւլէական առաջին ռումբերը նետեց Հիրոշիմայի եւ Նակագազիի վրայ, սպանելով աւելի քան հարիւրհազար խաղաղ բնակիչ:

Ցաւալին այն է, որ ամբողջ աշխարհը կը տեսնէ եղածը ու չի միջամտեր, դատապարտումով կը բաւարարուի, յետոյ դատապարտումը ցոյցերու կը վերածուի, յետոյ որոշ դեսպաններու տուն կանչ, քիչ մըն ալ ուտելիքի ու խմելիքի օգնութիւն, քանի որ Բարայէլը որոշած է անօթութեամբ ու ծարաւով սպանել, սնունդէ, ջուրէ եւ վառելանիւթէ զրկելով պաղեստինցիները: Իսկ անդին Ամերիկան անդադար նորանոր զինամթերք կ'ուղարկէ Բարայէլ ու միլիոններ... ու միլիաոններ...: Բարայէլ կը սպառնայ՝ կամ կը յանձնուիք,-կ'ըսէ,- կամ կը մեռնիք: Ու կը մեռնին պաղեստինցիները իրենց արաբ եղբայրներուն աչքերուն առջեւ, կը մեռնին ու չեն յանձնուիր:

Համաշխարհային երրորդ պատերազմ... Համաշխարհային նոր ծրագիր, նոր դասաւորում... միաբեւեռ, թէ՛ երբեւեռ, թէ՛ բազմաբեւեռ, թէ՛ անբեւեռ...

Առաջ կ'ըսէին, թէ Աստուած ծրագիրներ ունի աշխարհի ու մարդկութեան համար, մէջտեղ ելաւ որ «աստուած» ըսուածը մարդկային ճիւղներ են, չես գիտեր ո՞ր եւ ի՞նչ դիմակների տակ թաքնուած: Ի՞նչ կ'ուզեն աշխարհէն, ի՞նչ կ'ուզեն մարդոցմէ, ինչո՞ւ խաղաղութեան մասին կը քարոզեն, տեմոքրասի կը հռչակեն ու հակառակը կը գործեն: Ինչո՞ւ անդադար պատերազմներ կը հրահրեն ու մարդիկ կը սպաննեն: Չե՞ն մտածեր, որ զենքերու համար մսխուած միլիաոններով ամբողջ աշխարհի անօթեւան ու անօթի միլիոնաւոր մարդոց տուն եւ սնունդ կրնան ապահովել ու խաղաղութիւն սերմանել:

Ըտողներ եղան, որ այս պատերազմը ծրագրուած սենարիոյի մը հետեւանքն էր: Ծրագրուած, այսինքն յարձակում արդարացնող պատճառ յօրինել, ինչպէս 11-9- 2001-ին Նիւ Եորքի երկու երկնաքերներու պայթում-փլուզումը, որ դրդապատճառ դարձաւ հակաահաբեկչական յարձակումներու ու ներխուժումներու եւ ԱՄՆ-ին՝ արշաւելու Աֆղանիստան եւ Իրաք: Նոյնանման սենարիօ մը գործի դրուեցաւ Լիբանանի մէջ վարչապետ Հարիրին ահաբեկելու, որուն հետեւանքով սուրիական ոյժերը պարտադրուեցան Լիբանանէն դուրս գալ:

Այս պատերազմն ալ նոյնն է, Համասը նախադարձակ եղաւ, որպէսզի Բարայէլ բնաջնջէ զայն... Ո՞վ գիտէ, թերեւս, ինչ-որ տեղ մը կը ծրագրուի աշխարհի վերջը բերելու նոր սենարիօ մը:

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՓՈԻՆՋ ՄԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ



ԱՐՇԱԼՈՅՄՆԵՐ

Շունչիս հետ շո՛ւնչ, հեւքիս հետ հե՛ւք,
Ինձ հետ մնացիք, արշալոյսնե՛ր,
Լուսաճաճա՛նչ, լուսապարգե՛ւ,
Շողք փռեցիք արեւայեղ...

Քանի անգամ պատահեցա՛մ
Մեզն ու մշուշն, մութնումուրթը
Խափանէին ճանապարհս,
Որ մոլորիմ ճարահատեալ...

Դուք ցոլացիք մշտաժպի՛տ,
Միրալոյսո՛վ ճառագեցիք,
Յո՛յս ու հաւա՛տք ներշնչեցիք,
Փարո՛ւ դարձաք իմ ճամբէքին...

Հոգետունս ձեզմով եղաւ
Ճառագայթեալ ու մշտավառ,
Լուսաւորեց ջահի նման
Օրերս խենթ ու հողմահար...

Դեռ պիտ' ծագիք, կը հաւատա՛մ,
Ձեր շողերով արեւափա՛յլ



Պիտ' սպասեմ ձեզ տենդագի՛ն
Մինչեւ կեանքիս շունչը վերջին:
19/10/2021

.....

ՄՕՐՍ ՀԵՏ

Տարիներու մշուշին մէջ յիշատակդ միշտ անթառամ
Կ'արեւանայ սիրապայծառ, ճաճանչներով կարօտավառ...

Մերդ կարծես միշտ բոցարծարծ զիս ջերմացնէ լուսագորով,
Երբ տաղտկալի գորշ առօրեան զիս կը կլանէ իր յորձանքով...

Ապաւենդ կը զգամ, անգի՛ն, քար սիրտերու սառնութեան մէջ,
Քնքուշ խօսքդ սիրտս շոյէ հրեշտակներու փետուրին պէս...

Յոգնած աչքէդ, խորշոմներէդ սէ՛ր կը ցաթի ու չի հատնիր,
Լոյս հայեացքդ յոյս ճառագէ կեանքի մթին շառաւիղին...

Վտիտ ու նուրբ մարմինիդ մէջ, անկոտրում կամք մը կը ցցուի,
Մրրիկներուն դէմ ծառանայ ու յաղթական կ'աշտարակուի...

Բուռ մը սրտիդ մէջ խտանայ անչափ ներո՛ւմ, սէ՛ր, կարեկցա՛նք,
Կարծես տիեզէ՛րք մը ան ըլլայ Աստուածային սիրով առկայծ...

Ու խիղճ մ'արթուն միշտ կը տրոփէ զարկով մը բորբ, սիրագորով,
Կը բարձրանայ դէպի երկինք, դառնայ աղօթք մը մշտախօս:

Ժամանակը կը չքանայ ՄԵԾ ՄԻՐՈՅԴ դէմ տիեզերաչափ,
Ժամանակէն վեր ու անդին ԱՐԵԳԱԿ է յաւերժագնայ:
21/10/2021

.....

ԼՌՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Լռութեան մէջ առաւօտեան,
Բառեր ծագին հորիզոնին,
Լուսաբացին պէս սպասուած,
Երկնային հիւր են պաշտելի...

Օրուան հեւքին հետ կ'անուշան,
Կ'օձեն քիմքս միւռոնի պէս
Քաղցրահամքո՛յր, սիրավարա՛յր,
Անբաժան են միտքէս, սիրտէս...

Անդորրին հետ իրիկնային,
Բառեր կ'իջնեն ծիրանահեւ,
Միտքս, հոգիս գգուն մեղմիւ,
Սիրոյ մաքուր շշուկի պէս...



Լռութեան մէջ գիշերային,
Բառեր ծփան մթնոլորտին,
Կ'առինքընեն սիրտս, հոգիս,
Այցելունէ՛ր ես մտերմիկ...

Բառերուն մէջ արեւնէ՛ր կան,
Բառերուն մէջ աշխարհնէ՛ր կան
Միրացնձո՛ւն, լուսացնձո՛ւն,
Կ'օրհնեն պահը աղօթաբո՛յր...

Կը բազմանան աստղերուն պէս,
Կ'ըլլան ճաճա՛նչ ոսկելոյսի
Եւ կը տեղան օրհնութեան պէս
Խորհրդալո՛յս, խորհրդահե՛ւ...
14/10/2023

.....

ԶՐՈՅՑ ԱՇՆԱՆ ՀԵՏ

Աշո՛ւն, դուն այնքան մօտ ես իմ սրտին,
Որ դեռ կը տրոփե՛ր բարի՛, քնքշագի՛ն,
Երբ շուրջը բոլոր հա՛տ-հա՛տ կը թափին
Տերեւնէ՛րը թաց, օրե՛րը կեանքիս...

Ամէն մէկ տերեւ յո՛ւշ է թանկագին,
Ոսկի՛ եւ արե՛ւ իր մէջ ամբարած,
Այժմ՝ դողդղայ, ճիւղին դեռ կառչի
Վերջին գորովո՛վ մը տրտմաթախիժ...

Տերեւներուդ պէս, աշո՛ւն սիրելի,
Միրտս լռութեամբ կը խոկայ հիմա
Անցա՛ծ ու գացա՛ծ օրերուս անգին,
Որոնք մերթ ոսկի՛, մերթ կրա՛կ դարձան,
Մերթ կարօտի յո՛յգ ու մերթ հառաչա՛նք,
Խի՛նդ ու արտասո՛ւք, մորմո՛ք ու բերկրա՛նք,
Տենդէ՛ր անսպառ, տենչէ՛ր անաւարտ,
Վառ երագանքնէ՛ր, տեսիլքնէ՛ր ոսկեայ...

Տերեւներուդ պէս հիմա դալկահար,
Որոնք պիտ' երթան հողին ու փոփն,
Անցա՛ծ ու գացա՛ծ օրերս հիմա
Պիտ' երթան անյայտ վիհի անդունդին...
Աշո՛ւն տրտմագին, սիրտս կը մսի
Քու հանդերձանքիդ տակ ոսկեկարմի՛ր,
Գուցէ դուն յուշես խորիո՛ւրդը խորին
Կենաց ու մահուան առեղծուածին:
19/10/2023

.....



ԽԻՂՃԻՍ ՀԵՏ

Այս աշխարհի լաւն ու վատը ճաշակեցի ես ցմրուր,
Հոգիս երբե՛ք չչարացաւ, պահեց խիղճը մշտաբարուն:

Քանիներուն հա՛ց բաշխեցի, կենա՛ց գինի, կենա՛ց բան,
Շատ շուտ մոռցան, անցան-գացին եւ ուրացան ամէն բան...

Իրենց ցաւին սփռփա՛նք դարձայ, իրենց վերքին՝ բալասա՛ն,
Վերքս մնաց մրմռալի՛ց, ո՛չ ոք դարմա՛ն, բո՛յժ գտաւ:

Արդարութեան համար այլոց պայքարեցայ անվիա՛տ,
Փոխարէնը՝ կոխկոտեցին արդարութիւնն իմ զգեստնու՛ծ...

Գէշ մարդ դարձայ պաշտպանելով ճշմարտութի՛ւնն ոտնակոխ,
Մունետիկին պէս գոռացի անոր արժէքն անվրդո՛վ:

Դիմակները կեղծապատի՛ր թող փշրուին, իյնա՛ն վար,
Մարդը մա՛րդ է դէմքով անեղծ, աչքերովն իր լուսափայլ...

Ու թէ քողով պիտի ծածկես դիմագիծդ լուսերե՛ս,
Խամաճի՛կ մը սոսկ կը դառնաս, ծաղրածու մը ծուռերե՛ս...

Անդիմա՛կ ես աշխարհ մտայ, կ'ուզեմ մեկնիլ անդիմա՛կ,
Դէմքիս վրայ միշտ ալ ցոլաց խի՛ղճս մաքուր, անարատ:
16/9/2023

.....

ՔԵԶ ՆՄԱՆ, ԱՇՈՒԻՆ

Հե՛ւք մը քու շունչէդ կար իմ աշնան մէջ,

Բո՛ց մը կրակէդ սիրտս հրավառեց,

Շո՛ղ մը թոյրերէդ յար ճառագայթեց

Ու մերժեց մեռնիլ, մընաց լուսեղէ՛ն...

Քեզ նման, աշո՛ւն, մնացի նաշխուն,

Սիրտս սրտիդ պէս մի առեղծուա՛ծ էր,

Ոչ ոք զայն կրցաւ կարդա՛լ, խորզա՛լ,

Տերեւներուն տակ տեսնել սի՛րտս տաք...

Գաղտնիքը անոր անվերջ հուրհրատե՛ց

Բոցեղէն կրակներ, յոյզեր սիրահեւ,



Բայց հրդեհն անոր միայն զիս այրեց...

6/11/2019

.....

ՀՈԳ ՉԷ ԹԷ...

Ժամանակի սլաքը դառնար,

Գարունս վառ պահ մը ետ գար՝

Բոյր թոյրերով վարդաշուշան

Արբենայի կրկին անգամ...

Մեղմ զեփիւռը համբոյր մը տար,

Զիս կախարդէր վերջին անգամ,

Իր թելերուն մէջ զիս օրրէր,

Տանէր դէպ' լոյս հորիզոններ...

Արեգակներ դեռ հայեացքիս,

Հիւսէի ես նոր անուրջներ,

Մայրամուտը հեռու ըլլար,

Կէսօրուան տապն զիս հրկիզէր...

Թող բռնկէր սիրտս յուրթի

Հուր ու կրակով մը սրբագին,

Հոգ չէ թէ այդ բռնկումէն

Մնար միայն մոխրի հետքեր...

05/09/2020

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ԵՐԵՒԱՆԵԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Գեորգ Պետիկեան

Երևան

Հոկտեմբեր 2023



Աղուոր անկեղծութեամբ միշտ կրկնած եմ, թէ անցեալ տարուան ընթացքին «Երկար» հիւանդութենէս հազիւ ապաքինած, այս տարի եկած էի Հայաստան կրկին երկարօրէն վայելելու անոր արեւն ու լոյսը, աշունն ու ժամանակը: Հայրենասիրութեան չեմ կապած սեփական աշխարհս: Անոր համար կը փորձէի միշտ կիսել ամէն

ուրախութիւն եւ տխրութիւն: Որովհետեւ հաստատ համոզում ունէի, որ աշխարհի վրայ չկայ մեզի նման ժողովուրդ մը, որ հայրենիքէն հեռու ըլլալով հանդերձ, այնքան կապուած ըլլայ անոր:

Եկած էի հեռաւոր սփիւռքէն, հայրենակիցներու եւ պապենական հողիս հետ նոր կամուրջ մը նետելու եւ կամ նախկինը նորոգելու, որովհետեւ հո՛ւս, մեր աստուածները տարբեր էին: Անոնք թէւ մտած էին երազներու աշխարհը, սակայն տակաւին կ'ապրէին մեր հայրենիքի բարձր լեռներու գագաթներուն եւ կարծես անհամբեր կը սպասէին հայու հոգեկան դիւցազնութեան:

Վերջապէս, կրկին հայրենիք եկած էի, որովհետեւ թէւ սփիւռքեան ճակատագրին մէջ ինկած կ'ապրէի, սակայն օրին Հայաստանը դարձուցած էի նաեւ կեանքիս բանալին: Ու ամէն անգամ եւ ամէն առիթով նոյնիսկ ամպերու շղարշին տակ, երբ Արարատը տեսնէի, լուռ երկչոտութիւն մը կը պատէր զիս, որ դարերու խորքէն եկած իր թելերովը դարձեալ իրեն կը քաշէր, ու «կը գրկէր», իբրեւ մէկ հարազատը:

Ու նաեւ համեստօրէն աւելցնեմ, որ մեկնելով տարիքիս «մեծութենէն», եւ նոր հատորի մը լոյս ընծայումէս, այս այցելութեանս արդէն իսկ զանազան միջոցառումներ ծրագրուած էին ինծի համար: Պատմական եւ իմաստաւորեալ: Թարմ եւ պարզ:

Առաջին իսկ հերթին, իբրեւ խարբերոցի ծնողքի հարազատ զաւակ, ուզեցի այցելել ՀՀ Արարատի Մարզի Նոր Խարբերոցի Մ. Ղազարեանի անուան թիւ 2 միջնակարգ դպրոցը, որուն հետ սերտ կապս, բարեկամութիւնս ու յարգանքս, աւելի քան երկու տասնամեակներէ ի վեր գոյութիւն ունէին: Ու այս անգամ պիտի տեսնէի նորոգուած վարժարանը ու անպայման վարժարանի աշակերտութեան հետ մօտիկէն պիտի հաղորդակցէի: Արդէն բարձրագոյն կարգի աշակերտները ինծի համար անակնկալ մը պատրաստած էին:

Կնոջս հետ մտանք դպրոց: Նորակառոյց եռայարկ շէնք: Ժպտերես եւ ծափողջիւններով դիմաւորուեցանք աշակերտներով եւ վարժարանի պատասխանատուներու խումբով: Այցելեցինք դասարան, թանգարան, սրահ , խոհանոց եւ վերջապէս մեզ առաջնորդեցին



դպրոցի գրադարանը, ուր հաւաքուած էին մեծ թիւով աշակերտներ իրենց ուսուցիչներու հսկողութեամբ:

Ու ի՛նչ մեծ անակնկալ...ամբողջ գրադարանի երկայնքին շարուած սեղաններուն վրայ լոյս ընծայած բոլոր հատորներս ցուցադրուած էին: Իսկ սեղաններուն ետին բարձրագոյն կարգերու աշակերտներ նստած զիս կը դիտէին: Հաւանաբար իրենց կեանքին մէջ առաջին անգամ ըլլալով կը հանդիպէին սփիւռքահայ գրող-մտաւորականի մը: Վայրկեանին յիշեցի, որ իմ ա՛յդ տարիքինս, միայն բանաստեղծուհի Կապուտիկեանի այցելութիւնը վայելած էի, ուրիշ ոչ մէկ մտաւորականի: Ու բարի գալուստի խօսքերէն ետք, բառեր որոնց ետին թաքնուած էին մեծ ու փոքր գնահատականներով լեցուն ծովեր, անմիջապէս նոր լոյս ընծայած բանաստեղծութիւններու հաւաքածոյէս, 16 աշակերտ-աշակերտուհիներ քանի մը օրուան ընթացքին, մէկական ոտանաւոր գոց սորվելով իւրաքանչիւրը իր կարգին, սկսան արտասանել: Այս բոլորը՝ այնքան շօշափելի եւ խորունկ: Տպաւորիչ, յուզիչ եւ նոյնքան ալ պատմական: Իմ կարգիս պերճախօս լեզուով եւ ներդաշնակութեամբ, ինքնատիպ եւ հուժկու, հոգիի լիութիւն տուող խօսքերով եւ կեանք ներարկող բառերով արտայայտուեցայ, ձայնիս մէջ յուզումը թանձրացնող ոճով եւ ապրումիս ջերմութեամբ: Հայրենի հողի եւ մայրենիի մասին մտահոգութիւններս յայտնեցի: Երկար խօսեցայ մտքիս մէջ ծփացող քաջալերական խոհերով ու երեւակայութիւնս շոյող լսելի բառերով, որոնք կը կարծեմ արմատներ ունեցան իրենց մատղաշ մտքերուն մէջ: Հաստատապէս այս բոլորէն ետք յուզումով եւ քրտինքով ապրեցայ նոր կեանք տուող մթնոլորտ մը, հարազատ ու քաղցր:

Երկրորդ ուխտագնացութիւնս՝ «Յառաջ» արեւմտահայերէնի աշխատանոց-կեդրոնն էր: Մտերիմ զրոյց: Մեծ ցանկութիւն՝ ապրելու եւ վերյիշելու: Հոն պիտի հանդիպէի Երեւանաբնակ հալէպցիներու ու մանաւանդ մեր Քարէն Եփփէ Ազգ. Ճեմարանի հին ու նոր շրջանաւարտներու: Հաւաք մը, որ հին օրերուս գեղեցիկ թարմացումը բերաւ վայրկեաններուս: Ամէն վայրկեան յիշատակներ արթնցան: Հաւաքը նաեւ առիթ տուաւ, որ ժողովեմ ապրումներս մտքի եւ հոգիի թռիչքներով միատեղ: Ու իբրեւ լուսաւոր ներկայութիւն, զիս կապեց սերտօրէն: Երազէ մը արթնցողի նման դիտեցի ու մտիկ ըրի: Խօսեցայ եւ պատմեցի: Հոս, կարօտով եւ սիրով մեկտեղուած էին Ճեմարանն ու Հալէպը: Ինքզինքս իմ տանս մէջ կը զգայի: Ապահով եւ տաքուկ: Չէ՞ որ իւրաքանչիւր աշակերտի համար Ճեմարանը կեանքի դպրոց ալ եղած էր: Բոլոր ներկաներն ալ վերագտած էին հայրենիքի հողին վրայ ապրելու իրենց հպարտութիւնը: Գեղեցիկ երեւոյթ եւ օրինակելի: Ներշնչող հոգեկան իրականութիւն: Բոլորս ալ մեր մտքերուն եւ հոգիներուն մէջ ժամանակի եւ կացութիւններու յուշերն ու պատկերները շալկած, հոս արթնցող բաբախումներով իրար փոխանակեցինք: Բոլորին ներկայութիւնը ջերմապէս ողջունելի էր: Կարծես աշխարհը խրախճանքի հրաւիրած ըլլայի, որովհետեւ նոյնքան ուրախ էի: Յիշեցի դէմքեր եւ դէպքեր, որոնք ինծի դիմագիծ տուած էին: Բոլորս հաստ-հաստ եւ միասին խօսեցանք կարծես թէ կեանքը նոր սկսած ըլլար: Խօսեցանք ուրախ, կարօտով, երազի ու երազանքի աչքերով, առանց բացառութեան: Խօսեցանք յիշատակներու արձագանգներէն զսպուած եւ յուզուած: Իրարու քով եկած էինք եւ ամէն ձեւով կը փորձէինք մեր հոգիներուն մէջ պահելով բոցավառ գոյներով մեր Ճեմարանն ու մեր Հալէպը, իբրեւ մեր կեանքը ջերմացնող: Յուզումէս տխուր էր հոգիս բոլորին պէս, աւերուած տաճարներու նման Անիի: Այդ օր, նոր կեանք մը ապրեցայ, կարճ պատմութեան մը նման:

Խ. Աբովեանի անուան Հայկական Պետական Մանկավարժական Համալսարանն եմ: Կազմակերպուած է 80-ամեակիս նուիրուած յոբելէնական հանդիսութիւն մը, որակաւոր ու պատշաճ յայտագրով: Հաւաքուած են ուսանողներ, համալսարանի դասախօսներ, մտերիմներ, դարձեալ հալէպցիներ եւ ճեմարանականներ: Սրահ մուտքիս անակնկալ երկիւղ մը զիս բռնած էր: Իբրեւ մտքի հոսքի տեւական ճամբորդ, մտածումներովս լրութիւնն ու ուրախութիւնը որսացի: Ու ձեռնարկի ամբողջ տեւողութեամբ հայ ուղեղիս իմաստ տուող իրարայաջորդ գնահատող, քաջալերող, լաւն ու ճիշդը մատնանշող նախադասութիւններով վարակիչ եւ գօտեպնդիչ խանդավառութեամբ արտայայտուող խօսքերը, նախ լուռ եւ յուզուած մտիկ ըրի: Բոլորն ալ շնորհաւորանքի, գնահատանքի եւ քաջալերանքի կողքին կ'արտայայտէին նաեւ գրաւչութիւնը արեւմտահայ մեր լեզուին, որոնք միաժամանակ թռիչք եւ զօրութիւն տուին երագանքիս: Արտասանուած եւ իմ հասցէիս նշուած բոլոր գնահատականներն ու քաջալերական խօսքերը, խորքին մէջ իմ անձիս նուիրուած մեծարանք մը ըլլալէ աւելի, նաեւ մէկական պատգամներ ալ էին: Յուզումով հաստատեցի, թէ հասցէիս ձօնուած բառերն ու անոնցմէ կազմուած բոլոր խօսքերը, վայրկեանին մրճահարած էին միտքս եւ հոգիս: Բոլորն ալ երակներուս մէջէն խօսած էին: Տաք եւ թարմ:

Միրոյ, գնահատանքի եւ յարգանքի մթնոլորտով պարուրուած փայփայուած զգացի, յարգանքի շօշափելի արտայայտութիւններուս կողքին: Կեանքիս համը իրապէս որ փոխուած էր, աւելի քաղցրացած:


Ու համեստօրէն փորձեցի լեզուի գեղեցկութեան եւ անոր պահպանման մասին արտայայտուիլ: Խօսեցայ երկու պարզ անկեղծներու նման եւ ուրախութեան հեւքով պահը լեցուցի: Չեմ գիտեր հաւաքական թէ անձնական հրճուանքներ էին այս բոլորը: Միայն այն գիտեմ, որ այս բոլորը պերճախօս վկայութիւններ էին հայ գրողի նուիրուած, անոր մտքի եւ գրիչի հոսքին հասցեագրուած: Պատշաճ ու երախտապարտ՝ շնորհակալութիւն յայտնեցի, հաստատ եւ եզակի ինքնագոհութեամբ ու աշխարհ մը հետս տուն բերի:

Չեմ գիտեր ի՞նչ էր երջանակութիւնը...սակայն ես դարձեալ զայն ապրեցայ:

ՄԻՀՐԱՆ ԹՈՒՄԱՃԱՆ

ԿՈՄԻՏԱՄԻ ԱՐԺԱՆԱԲՈՐ ՍԱՆԸ

Դոկտ. Մինաս Գոճայեան, Լոս Անճելըս



Այս տարի կը լրանայ արեւմտահայ երաժշտական կեանքի արժանաւոր դէմքերէն մէկուն՝ Միհրան Թումաճանի մահուան 50-ամեակը: Ան ի սպառ կորուստէ փրկեց հարիւրաւոր երգեր, որոնք յօրինած էր հայ շինականը իր դարաւոր հայրենիքի տարածքին՝ փաստօրէն շարունակելով իր ՄԵԾ ՈՒՍՈՒՑԻՉԻՆ՝ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ գործը:

Միշտ բարեւես, կոկիկ հագուած եւ սովորաբար աղուոր ժապաւէն մը վզին, ան կը զբօսներ իր եղբորորդիին՝ մեր շատ սիրելի ամերիկահայ ընկերոջ՝ Տիգրան Թումաճանի հետ: Շատեր



սովոր էին այս տեսարանին, յատկապէս Արովեան փողոցի կրպակներու վարիչները, որոնք մօտենալով գոյգին, կը հարցնէին. «Ինտո՞ր էք, մայեսթրօ»: Այն աստիճան բնորոշ էր այս գոյգը, որ «Հայրիկ» շարժապատկերի բեմադրիչը տեսարան մը նուիրած էր «հայր եւ որդի» նկատուող Թումաճաններուն:

Սփիւռքահայ ուսանողներուս, ինչպէս առհասարակ Երեւանի երաժշտասէր հասարակութեան համար, ան Կոմիտաս վարդապետի կենդանի ներկայութիւնն էր: Արդարեւ, Միհրան Թումաճան Կոմիտասի հինգ յայտնի սաներէն էր, ինչպէս Բարսեղ Կանաչեան, որոնց վրայ Հայր Սուրբը առանձին առանձին ջանք թափած էր որ շարունակեն իր սկսած գործը: Թումաճանին բախտ վիճակուած էր բանահաւաքութիւնը: Երկար ու տքնաջան աշխատանքներէ ետք լոյս տեսաւ այդ նիւթերուն երեք ժողովածուները 1973-1986 թուականներու ընթացքին: Երեւանի մէջ՝ «Հայրենի երգ ու բան» վերնագրով:

Միհրան Թումաճան ծնած էր 1890 թուի Հոկտեմբեր 21-ին, Արևմտեան Հայաստանի Կիւրին քաղաքը (Սեբաստիոյ գաւառ, այժմ Սիվազ): Կրթությունը ստացած է Պոլսոյ մէջ, իսկ 1913-ին աւարտած է տեղւոյն համալսարանը: 1910-1915 թուականներուն երգած է Կոմիտասի «Գուսան» երգչախումբէն: Այս տարիներուն է որ Կոմիտաս վարդապետ յատուկ դասընթացքով մը զայն կը պատրաստէ որպէս երաժշտական գործիչ: Յեղասպանութենէն ետք Կոմիտասի սաները զիրար կը գտնեն 1918 թուին ու կ'որոշեն շարունակել իրենց ուսուցիչին գործը: Երիտասարդ Միհրան իր ճիւղին մէջ մասնագիտանալու նպատակով երկու տարի կ'ուսանի Փարիզի մէջ 1920-1922 տարիներուն:

1923 թուականին Մ. Թումաճան կը մեկնի ԱՄՆ, ուր կը հիմնէ «Հայ երգ» ընկերութիւնը, որ հասարակութեան առջեւ հանդէս կու գայ Կոմիտասի եւ Բարսեղ Կանաչեանի խմբերգերու կատարումով: Միաժամանակ Թումաճան մեծ բժախնդրութեամբ կը հաւաքէ ու կը մշակէ Արևմտեան Հայաստանի տարբեր գաւառներէ Ամերիկա հաստատուած հայութեան բեկորներու երգն ու երաժշտութիւնը:

Հայրենադարձութեան վառ օրինակ մը հանդիսացաւ Միհրան Թումաճան, երբ 1965 թուականին Միհրան Թումաճան իրականացուց իր երազը եւ հաստատուեցաւ Խորհրդային Հայաստան՝ շրջապատուեցաւ երաժիշտներով ու արհեստավարժ կատարողներով: Հայրենի պետութիւնը զայն ապահովեց թոշակով եւ կոկիկ բնակարան մըն ալ տուաւ Արովեան փողոցին վրայ գտնուող Երեւան պանդոկին մէջ (այժմ Գրանդ Թիւլիփ, Grand Tulip, Yerevan): Հայաստանի Գիտութիւններու Կաճառի արուեստի հիմնարկը Թումաճանի համար հնարատրութիւն ստեղծեց հանգիստ պայմաններու ներքոյ հրատարակութեան պատրաստել տասնամեակներու ընթացքին անոր հաւաքած գործերը, եւ այսպէս լոյսին կու գան «Հայրենի երգ ու բան» ժողովածուի չորս հատորները՝ 1973-2005 թուականներու ընթացքին: Կը փրկուին հարիւրաւոր տոհմիկ երգեր ու երաժշտական կտորներ:



Թումաճաններու թանկագին «Հաբաբըր»ը (հօրեղբայր) կը սիրէր կրկնել. «Ես հասկցայ, որ իմ աշխատանքներս գնահատողները հո՛ւ են»:

Միհրան Թումաճան վախճանեցաւ 1973 թուի Հոկտեմբեր 28-ին, Երեւանի մէջ: Հայրենի պետութիւնն ու երաժշտական աշխարհը յաւուր պատշաճի պաշտօնական յուղարկաւորութիւն մը կազմակերպեցին եւ անոր յոգնատանջ մարմինը ամփոփուեցաւ Նուպարաշէնի պանթէոնին մէջ:

Տողերուս հեղինակը ներկայ էր վերջին հրաժեշտին: Անձրեւոտ օր էր եւ ներկաները երկինք նայելով կը հառաչէին. «Երկինքն էլ է լալիս», մէկն ալ աւելցուց. «ի՞ր ուսուցչի ու սաների արտասուքն է, որ թափուում է երկնքից...»: Կարծէ այս պահուն յիշել բնութեան սարքած անակնկալը: Երբ թափօրը գերեզմանատուն կը հասնէր աշնանային անձրեւի տակ, յանկարծ կտրուեցաւ եւ մարդիկ սկսան զարմանքով գիրար դիտել ու մեկնաբանել: Ներկաներէն մէկը, որ բաւական տարիքը առած մտաւորական մըն էր եւ ականատես եղած էր Կոմիտասի թաղումին, հետեւեալը ըսաւ.

- Հրաշքներ պատահել են, պատահեց եւ հիմա: Արդարեւ, Կոմիտասի յուղարկաւորութեան պահին էլ անձրեւոտ էր եղանակը, իսկ երբ մօտեցանք Երեւանի պանթէոնին, անձրեւը դադարեց եւ երկինքը մի պահ դեմքը ցոյց տուեց...Սա զուգադիպութիւն չէ, սա հրաշք է:

Եւ իրօք, թաղման պահուն, մայրամուտի արեւի վերջին շողերը ինկած էին քառագագաթ Արագածի վրայ...

Միհրան Թումաճան ընտանիք չէր կազմած, այլ իր եղբոր զաւակները ընդունած էր որպէս իր հարազատ զաւակները, վերջիններս ալ կը գուրգուրային իր վրայ որպէս իրենց հայրը: Այդպէս կը վարուէր եղբորորդին՝ Տիգրան Թումաճանը (մահացած 2022-ին, Տիթրոյթ): Տիգրան իր «Հաբաբըր» հօրեղբոր հետ կ'ապրէր եւ պահապան հրեշտակի պէս կը հետեւէր անոր ամէն քայլին: Բնաւորութեամբ ալ նման էին, բայց յատկապէս զուարթախօս էին երկուքն ալ:

Առաջին անգամ երբ Տիգրան զիս ծանօթացուց «Կոմիտասի սանին»՝ ըսելով. «Հաբաբըր, *հշտէ* ա՛ն է Մինասը, որուն մասին միշտ կը պատմեմ քեզի...», այն ատեն «Հաբաբըրը» պոլսական զուարթամտութեամբ մը հարցուց. «Կարգուա՞ծ ես, տղաս»: Ժխտական պատասխանս ստանալէն ետք աւելցուց.

-Ուրեմն դո՛ւն ալ անկարգ ես...



Այսօր արժանի կերպով իր անունը կը կրէ Տիգրանի որդին՝ Միհրան Թումաճանը, որ ատեն մը Հայկական Համագումարի Լոս Անճելըսի բաժնի վարիչն էր եւ կը շարունակէ իր ներդրումը բերել ԹՄՄ-էն ներս:

Մարեր, ձորեր, դաշտեր ու ջրեր,
Մարմանդ-մարմանդ վագոդ աղբիւրներ,
Մի վեր կացէք, իմացէք,
Տեսէք իմ սրտի ցաւեր: (Կոմիտաս)

լոյս տեսաւ Երեւանի մէջ «Հայրենի երգ ու բան» վերնագրով,

չորս

ժողովածուները 1973-2005 թուականներու ընթացքին:

Չորրորդ հատորը հրատարակուեցաւ 2005 թուականին:

ՅՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Մարուշ Երամեան



Կը յիշէ՞ք այն օրը, երբ Թալիպան Աֆղանիստան մտաւ եւ իր առաջին գործերէն մէկը եղաւ պայթեցնել Պամիյան շրջանի երկու Պուտտաներուն հսկայ արձանները, փոքրը՝ 38 մ., իսկ մեծը՝ 55 մ., որոնք 6-րդ դարէն կու գային:

Մայրաքաղաք Գապուլէն 130 քմ. հեռու, 2500 մ. բարձրութեան վրայ, ժայռերուն մէջ կառուցուած այս

Պուտտաները որո՞ւ ուսերուն նստեր էին, որո՞ւ նեղացուցեր էին, որ պէտք էր զանոնք պայթեցնել, կարճ պահուան մը մէջ սրբելով դարերու պատմութիւնը:

Պուտտիստներու համար սրբատեղի համարուող այս արձանները Մետաքսի ճամբուն վրայ կը գտնուէին:

Թալիպանի հիմնադիրներէն Մոլլա Օմարի հրամանով ... 2001 թուականին ...

Բայց ո՞վ էր Մոլլա Օմար, որ արձանները քանդելու այդ որոշումը առեր էր: Այդ որոշումը ի՞նչ էր, թէ՞ ինք հրամաններ կը գործադրէր միայն:

Այդ օրերուն ամբողջ աշխարհը դատապարտեց Թալիպանը, հակամշակութային այս արարքին համար: Բայց ո՞ր էր «ամբողջ աշխարհը» այդ քանդումէն առաջ, եւ ինչո՞ւ չկրցաւ առաջը առնել այդ բարբարոսութեան:

Ասիկա առաջին դէպքն էր կեանքիս ընթացքին, երբ մարդիկ դիտումնաւոր կերպով կը քանդէին արուեստի գործ մը, հնութիւն մը. հասկնալի չէր, որովհետեւ մեր մանկութենէն սորվէր էինք, որ արուեստն ու մշակոյթը շատ կարեւոր բաղադրիչներ են, որոնք մարդը անասունի աստիճանէն կը հանեն վեր, ասունի աստիճանին:



Յետոյ վրայ հասաւ նոր Ջուղայի խաչքարերու քանդումը 2005 թուականին, թէւ շատ աւելի վաղ՝ 1998 թուականէն սկսել էր խաչքարերու ջարդը: Այդ խաչքարերը, Պամիլյանի Պոտտաներուն նման, ԻւՆԵՍԿՕ-ի Համաշխարհային Ժառանգութեան ցանկին մաս կը կազմէին, եւ ճիշդ նոյն կեցուածքով աշխարհը դատապարտեց, բայց ոչինչ կրցաւ ընել, կամ ուզեց ընել, հակառակ անոր, որ Հայաստանի պետութիւնը քանիցս դիմած է ԻւՆԵՍԿՕ-ին եւ զգուշացուցած զայն:

ԻւՆԵՍԿՕ-ն՝ Միացեալ Ազգերու կրթութեան, գիտութեան եւ մշակոյթի կազմակերպութիւնը, ստեղծուել է 16 Նոյեմբեր 1945-ին:

Համաշխարհային Ժառանգութիւն (World Heritage) բաժինը մաս կը կազմէ ԻւՆԵՍԿՕ-ին, որպէս ենթաբաժանում, եւ կը զբաղի բնութեան ու մարդուն կողմէ ստեղծուած մշակութային արժէքներու պահպանումով:

Եւ որպէսզի անաչառ ըլլայ նման վայրերու ընտրութիւնը, Համաշխարհային Ժառանգութիւնը վեց կէտերէ բաղկացած չափանիշերու ցանկ մը հրատարակած է, հետեւեալ ձեւով.

I. Մարդկային ստեղծագործութեան գլուխ գործոց մը պէտք է ըլլայ ներկայացուած հնավայրը.

II. Հնավայրը պէտք է հաստատէ մարդկային արժէքներ, եւ անոնց տուեալ ժամանակահատուածին մէջ, կամ մշակութային որոշ բնագաւառի մը՝ ճարտարապետութեան, գիտարուեստի, կամ ճարտարագիտութեան փոխադարձ ազդեցութիւնը հաստատէ:

III. Հնավայր մը, որ եզակի է կամ առնուազն բացառիկ՝ մշակութային աւանդոյթի կամ քաղաքակրթութեան համար, որ գոյութիւն ունի մինչեւ այսօր կամ արդէն անհետացեր է (եթէ անհետացեր է, ինչպէ՞ս պաշտպանել ... Մ. Ե.):

IV. Հնավայր մը, որ կառուցումի, ճարտարապետական, գիտարուեստական, կամ ճարտարագիտական համալիրի մը, կամ բնավայրի մը ակնառու օրինակ է եւ կը ներկայացնէ մարդկային պատմութենէն կարեւոր շրջան մը:

V. Հնավայր, որ մարդկային կառուցումի ակնառու օրինակ է, հողի եւ ծովու աւանդական օգտագործումով, մշակոյթը, կամ մշակոյթները շրջապատող միջավայրին հետ մարդկային փոխարաբերութիւններու օրինակ, յատկապէս եթէ բնութիւնը դարձեր է խոցելի ու անշրջելի, փոփոխութիւններու ուժեղ ազդեցութեան պատճառով:

VI. Հնավայր, որ ուղղակիօրէն կամ մասամբ կապուած է իրադարձութիւններու կամ գոյութիւն ունեցող աւանդոյթներու, գաղափարներու, համոզումներու, գրականութեան ու գեղարուեստի հետ եւ ունի համամարդկային նշանակութիւն:

(Ըստ ԻւՆԵՍԿՕ-ի կոմիտէի կարծիքին, այս վերջին չափանիշը նախընտրելի է օգտագործել այլ չափանիշերու հետ):

Այսօր մենք մեզ կը գտնենք զգետնուած, ոչ միայն Արցախը կորսնցուցած ըլլալու իրողութեան ցաւին տակ, այլեւ Արցախի մաս կազմող անհամար հնագիտական վայրերուն եւ կառոյցներուն անորոշ կամ դժիւմ ճակատագիրով:

Ի՞նչ կրնանք ընել այս պարագային, ի՞նչ պէտք է ընել, որովհետեւ ՊԵՏՔ է բան մը ընել, թէւ հայաստանցիներէն շատ աւելի ծանօթ ըլլալով թուրքին թրքութեան (սփիւռքահայերն ու Արցախի ժողովուրդը շատ լաւ գիտեն ասիկա, վերջինները՝ առաջին ձեռքէ), շատ կը կասկածիմ, որ ԻւՆԵՍԿՕ-ն կարենայ բան մը ընել: ՄԱԿ-ը ի՞նչ կրցաւ ընել, որ իր ենթաբաժանումը՝ «Համաշխարհային Ժառանգութիւն»-ը կարենայ բան մը ընել:

Բոլորս ալ գիտենք (կամ չենք գիտեր), տեսեր ենք ու կարդացեր կամ ոչ, այն բազմաթիւ հատորներն ու պատկերագիրքերը, որոնք լոյս կը սփռեն Արցախի ճարտարապետական կոթողներուն վրայ, որոնցմէ մաս մը ներկայացուած է - թէւ բոլորը պէ՛տք է մաս կազմեն - ԻւՆԵՍԿՕ-ի Համաշխարհային Ժառանգութեան 1199 անուններուն, որոնց 48-ը



անդրասահմանային են (Transboundary), 3-ը՝ ցանկէն հանուած (չ'ըստիր թէ ինչո՛ւ), 56-ը՝ վտանգի մէջ, 933-ը՝ մշակութային (միւսները ի՞նչ են ...), 227-ը՝ բնութեան մաս կազմող եւ այլն:

Աշխարհի բոլոր մեծ ճարտարապետներն ու ճարտարապետութեան պատմութեան մասնագէտները միաձայնութեամբ համաձայն են, որ հայկական ճարտարապետութեան, մանաւանդ եկեղեցիներուն ոճը խիստ ինքնուրոյն է, եւ կ'ընդունին այդ ճարտարապետութեան ազդեցութիւնը այլ ճարտարապետական ոճերու վրայ:

Այս բոլորը գիտականօրէն հաստատուած են եւ կարելիին չափ տարածուած միջազգային մամուլին մէջ:

Բայց կը շարունակուի քաղաքական «խաղը», ըսելու համար, որ Արցախը ատրպէյճանական տարածք է. եթէ այդպէս է, ինչպէ՞ս բացատրել եկեղեցիներուն եւ վանքերուն գոյութիւնը, անոնց այդքան մեծ թիւը Արցախի մէջ: Իրանը միակ ներողամիտ իսլամական երկիրն է, ուր հայկական եկեղեցիներն ու վանքերը պետութեան ուշադրութեան առարկաներն են: Այնտեղ երբե՛ք կասկածի տակ չ'առնուիր այդ կառոյցներուն պատկանելիութիւնը, երբե՛ք չի ժխտուիր անոնց ծագումը:

Աշխարհը շատ լաւ գիտէ այս իրողութիւնը, բայց անշուշտ անգիտանալ կը ձեւանայ:

Եւ կրկին, բիրտբորդ անգամ մենք, մեր պատմութիւնն ու մեր համաշխարհային ժառանգութիւնը կ'իյնանք քաղաքական այնպիսի մեծ խաղի մը մէջ, որ բոլորովին կապ չունի մշակոյթի թէ արուեստի հետ:

Հիմա հարցը այստեղ շատ աւելի ծանր է, քան Արցախի բոլոր կառոյցներուն Համաշխարհային Ժառանգութեան մաս կազմել-չկազմելը՝ անոնց գոյութեան ապահով շարունակութիւնը:

Կ'ըսեն թէ միայն իրենք զիրենք չհաստատած անձերն են - երեւան եկաւ, որ ազգերն ալ այդպէս կրնան ըլլալ - որ կ'ուրանան դիմացինին շնորհները, կը փորձեն անտեսել, ապա չեզոքացնել զանոնք:

Պիտի կարենա՞նք տոկալ ու դիմանալ, երբ ...

Չեմ իսկ ուզեր պատկերացնել Արցախի եկեղեցիներուն եւ վանքերուն դժիւեմ ապագան:

Անցեալները մէկը հարց կու տար՝ «Հո՞ղը թէ մարդը», ըսել ուզելով ո՞րը նախընտրելի է փրկել:

Անշուշտ հարցումը շատ հռետորական է. բայց մտածել կու տայ:

Եթէ իրապէ՛ս երկիր ենք, եթէ իրապէ՛ս երկրին մասին մտածող եւ անոր շահերուն համար աշխատող պետութիւն ունինք, եթէ իրապէ՛ս դեռ կը շարունակենք ազգ ըլլալ, մեզի համար պատասխանը միանշանակ մէկ է.

Հո՞ղը, անոր վրայ ապրող մա՛րդը եւ այդ մարդուն պատմութիւնը հաստատող բոլո՛ր կոթողներն ու հնավայրերը:

Ուրիշ նպատակ չենք կրնար ունենալ:

Բայց կը մնայ գլխաւորը՝ եթէ ...

<http://www.kantsasar.com/news/46391-2/>

Ի Ր Ա Վ Ի Ճ Ա Վ



Մէկ՝ Մէկ ալ՝ Երկու կ'ընէ մի ըսեր
մէկ Մէկը կայ, միւսը չէ եղած, չկայ,
Ալ Երկու-ն ո՛րն է:

Անոյշ լեզուն օձը ծակէն կը հանէ:
Եթէ օձը իր որջէն դուրս պիտի ելլէ
այդ անոյշ լեզուն - վա՛ղ անցիր - պետք չէ:

Հաւը երազին մէջ կորեկ կը տեսնէ:
Ի՛նչ լաւ, երազ կը տեսնէ գոնէ,
շատեր կան՝ ա՛ն ալ չունին:

Լռութիւնը ոսկի է:
Աւելի յարգին՝ խօսի՛ լն է, ան է որ աղամանդ է
մանաւանդ երբ նորահնար ապակիներ
կը կտրտէ, չափն ու ձեւը կը ճշդէ
վտանգին առաջքը կ'առնէ:

Աստուծոյ սիրոյն, մոռցիր ոսկին,
կորեկները ձգէ հաւուն եւ հաստավիզ աքլորին
Օձը օձ է, անոյշ լեզուդ գիտնաս ինչպէ՛ս կը խայթէ,
Թոյն կը խրէ մարմնէդ ներս. «Ես չէ, մի՛ւսը ըրաւ» կըսէ,
ինչ որ մէկ-ով կը սկսի երկու չեղած՝ միլիոնի մէջ կը մտնէ

Միլիոնները կը դիզուին,
Տասը հազարներ հիասթափուած կը հեռանան երկիրէն:

Մէկ՝ մէկ ալ երկու չընէ՛ր՝ զերօ՛ կ'ընէ: Ա՛ս ըսէ:

Վեհանոյշ Թեքեան
«Աղօթքներ Ուռկանի մէջ»

ԱԿՆԹԱՐԹՆԵՐ



Ի ՄԿՁԲԱՆԷ ԷՐ ԲԱՆՆ...Խօսքը, խօսքի արժեքը, խօսքի ազդեցութիւնը: Խօսքը կրնայ շինել կամ քանդել, յուսադրել կամ յուսալքել, ոգեպնդել կամ ոգեզրկել, խօսքը հրաշքներ կրնայ գործել...: Ահա թէ ինչու օրն ի բուն կը բանին լրատուամիջոցները, քարոզչամեքենաները, գովազդներն ու հակագովազդները, մարդոց միտքերը հակակշռելու, անոնց ուղեղները լուալու, զանոնք կողմնորոշելու ա՛յս կամ ա՛յն գաղափարին, երեւոյթին, ապրանքին, ապրելակերպին ի նպաստ,

կամ՝ ընդդէմ...: Այս աղմուկ-աղաղակին մէջ, շատ անգամ ԽՕՍՔԸ կը վարկաբեկուի, կը դառնայ սուտի եւ կեղծիքի գործիք: Մարդ-անհատն ու հանրութիւնը տակաւ կը դառնան ծարաւի՝ ճշմարիտ, անկողմնակալ, անկեղծ խօսքի, որ չըլլայ հաշուենկատ, շահախնդիր...: Խօսք՝ որ ըլլայ ազատ ու ազատագրող, խօսք՝ որ ճշմարտութեան ակունքէն բխի եւ հասնի մարդոց սրտին ու մտքին, դառնայ ուղեցոյց փարոս՝ մթամած ու ամպամած մեր ժամանակներուն...

.....

Առողջ ինքնաքննադատութիւնը դրական լիցքեր կը հաղորդէ անհատին, փոխան ժխտականի, քանզի ան իր մէջ ունի նոր վճռակամութիւն, նոր յանձնառութիւն՝ դասեր քաղելու սեփական սխալէն, սխալներէն եւ խրատուիլ անոնցմէ՝ աւելի լաւ գալիքի մը կերտումին համար: Առանց նման ինքնաքննադատութեան, կեանքի ճահճացումը անխուսափելի է, քանզի կայ միշտ ինքնակատարելագործուելու անվերջ կենսընթաց...

.....

Ժողովրդավարութենէ բարբառող ոմանք ամբողջովին անհանդուրժող են իրենցինէն տարբեր տեսակետներու նկատմամբ: Բայց չէ՞ որ ժողովրդավարութիւնը, առաջին հերթին, կը նշանակէ հանդուրժել եւ յարգել տարբեր տեսակետներն ու կարծիքները: Դժուար է ճշմարտապէս ժողովրդավար դառնալ..., յատկապէս հայ իրականութեան մէջ, ուր երբեմն անհանդուրժողութիւնը կը վերածուի թշնամական հակամարտութեան...:

.....

Կեանքի փորձութիւններն ու փորձանքներն են որոնք մեր հոգիի, մտքի, կամքի եւ այլ կարողութիւնները կը ծաղկեցնեն, անոնց նոր որակ կը փոխանցեն, զանոնք նոր մակարդակի կը բարձրացնեն...Առանց մարտահրաւերի կեանքը կեանք ալ չէ, այլ ձանձրալի կրկնութեանց շղթայ եւ ուրիշ ոչինչ:

.....



Մեր մօտ այնքան թերի է ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆԸ, ամէն ինչ հատուածականացած է, ամէն ինչ կը ծառայէ հատուածի մը շահերուն, ընդունինք կամ՝ ոչ...Սփիւռքացած արեւմտահայութեան բեկորները միշտ ալ ենթակայ մնացին ա՛յս կամ ա՛յն հատուածին ուղղորդութեան, չկար ազգային պետականութիւն, չկար համազգային գաղափարախօսութիւն...Ասոր իբր հետեւանք, կա՛մ կայ ամբողջական ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ, կա՛մ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆՈՒԹԻՒՆ եւ ՀԱՏՈՒԱԾԱԿԱՆՈՒԹԻՒՆ...Բայց երբե՛ք ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ՅԱՆՁՆԱՌՈՒԹԻՒՆ, ՏԵՍԼԱԿԱՆ...

.....

Պատուէր կատարողը ինքն իրեն դաւաճանող մարդն է...
Պատուէր կատարողը գործիք է այլոց նպատակներուն իրականացման համար...
Պատուէր կատարողը ինքնութենէ եւ արժանապատուութենէ զուրկ է...
Պատուէր կատարողը ստրուկ է ու ստրկամիտ...ինչ ալ ըլլան իր «շահ»երը:
Պատուէր կատարողը սոսկ արհամարհանքի է արժանի:

.....

Արեւմտեան դեմոկրատիան գրաւեց աշխարհը, բայց փոքրացուց մարդուն...
Հաւասարութիւն քարոզեց, բայց էապէս ասպարէզէն ջնջեց մեծ մարդու, մեծ առաջնորդի, մեծ անհատականութեանց հնարաւորութիւնները...
Հաւասարութեան դիմակին տակ, հարուստը հարստացաւ, աղքատը աղքատացաւ...
Ազատութեան լոգունգին տակ, մարդը աւելի ստրկացաւ դրամի ահաւոր ուժին...
Ազատութեան լոգունգին տակ, արժեզրկուեցան դարերու քննութիւնը բռնած աւանդական-բարոյական մարդկային արժէքները...
Արդեօ՞ք ան հասած է իր վախճանակետին, որմէ դուրս պիտի ելլէ ՆՈՐ ՄԱՐԴԸ...

.....

ՓԱՌՔԻ ԱՂԵՐՄԱՐԿՈՒՆԵՐԸ...Ամենուր են անոնք հայ կեանքի մէջ, կեանքի իմաստ ու նպատակ դարձուցած այս՝ փառքի, պատիւի աղերսարկունները, որոնք պատրաստ են զոհելու կեանքի մէջ ամէնէն թանկագինը՝ սկզբունք, արժանապատուութիւն, ինքնասիրութիւն, խոնարհութիւն, խիղճ ու ճշմարտախօսութիւն, միայն թէ «ԱՐԺԱՆԻ» դառնան փառքի դափնիին, պատիւ ընծայուի իրենց, պարգեւատրուին եւ զովաբանուին, հոգ չէ թէ ԿԵՂԾ ու ՓՈՒՃ խօսքերով Ի ՅՈՅՑ ՄԱՐԴԿԱՆՑ ու ԱՇԽԱՐՀԻՆ...ՄԵԾԱՊԱՏԻՒ ՄՈՒՐԱՅԿԱՆՆԵՐ՝ ասոնք, որոնք Փառք մուրալու ընթացքին կը կորսնցնեն՝ մարդկային կեանքին բուն արժէք տուող ուղղամտութիւնն ու խղճամտութիւնը, արդարամտութիւնն ու շիտակութիւնը, ներքին հպարտութիւնը, ոգեկան երջանկութիւնը վերջապէս, եւ վերջ ի վերջոյ, ՓԱՌՔԻ ԵՏԵԻԷՆ ՎԱԶԵԼՈՎ, ԿԱՐԺԱՆԱՆԱՆ ԱՆՓԱՌՈՒՆԱԿ ՎԱԽՃԱՆԻ...

.....

Մարդիկ կան, որ իրենց երջանկութիւնը կը պատկերացնեն՝ դրամ, հարստութիւն, ինչքեր կուտակելուն մէջ...Ուրիշներ ալ կան, թիւով քիչ, որոնց համար երջանկութիւնը առաւելաբար ոգեկան է եւ կը կայանայ իրա՛ւ արժէքներու փնտռտութիւն մէջ..., մարդ էակը



աւելի կատարեալ, աւելի արժանապատիւ ու մարդկային կեանքը աւելի ներդաշնակ դարձնելուն մէջ...

.....

Մեր մէն մի խօսքը, մէն մի արարքը, մէն մի կեցուածքը, վարքն ու վարուեցողութիւնը իրենց ՀԵՏՔԸ կը թողուն մեր շրջապատին, համայնքին, երկրին ու ազգային հաւաքականութեան վրայ, մեր պատմութեան երթին վրայ, թէկուզ աննշան, թէկուզ չնչին, թէկուզ հիւլէաչափ՝ կ'ունենան իրենց անդրադարձը նոյնիսկ տիեզերական շունչին ու համակարգին վրայ...Ամէն ինչ ամենափոքրիկ, ադումային մասնիկներէ է բաղկացած, նոյնպիսին է ազգային-մարդկային կեանքը...Իւրաքանչիւրս ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ է իր խօսած-չխօսածին, իր ըրած-չըրածին, իր գործած-չգործածին համար...ՄԵՆՔ, ՈՐՊԷՍ ԱՄԲՈՂՋՈՒԹԻՒՆ, ԵՒ ԱՌԱՆՁԻՆ-ԱՌԱՆՁԻՆ ԿԸ ԿԵՐՏԵՆՔ ԱԶԳՆ ՈՒ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՔԱՌԵԱԿՆԵՐ



Մասնի՛կ-մասնի՛կ կը մասնատուինք,
Բաժա՛ն-բաժա՛ն կը բաժնուինք,
Սէր, միութիւն կը քարոզենք,
Խօսքը գործի չենք վերածեր:

Հայերէն է սրտիս վերքը,
Հայերէն է հոգւոյս երգը,
Ու թէ գեղչես հայերէնը,
Ինչպէ՛ս լսես սրտիս տրոփը:

Թէ հիասթափուիս, ներել գիտցի՛ր,
Դասեր քաղէ՛, իմաստնացի՛ր,
Կեանքի դպրոցն է իրական,



Միտքդ, հոգիդ միշտ պահէ բաց:

Որքան ալ փուշ, տատասկ ըլլայ,
Ձիգ զառիվեր ըլլայ ճամբադ,
Արդարութեան քայլը անպարտ
Պիտ'առնես որ յառաջ երթաս...

Պիտի փնտռես ճիշդ հայելին
Ծուռերուն մէջ ակնախտիդ,
Ան է ցոլքը ճշմարիտին՝
Կեղծերուն մէջ խաբեպատիր...

Մարդ պիտ'մնաս ի՛նչ ալ ըլլայ, ո՛ւր ալ ըլլաս, ո՛ւր ալ երթաս,
Մարդ ըլլալն է բուն արժէքը, որ պիտ' մնայ միշտ քեզի հետ,
Ուրախութեան թէ տխրութեան, տագնապի թէ պահին խաղաղ,
Ամէն ինչ ալ անցողիկ է, մարդ մնալն է անանց արժէք:

Նոյն ցեղասպանն է, նոյն քար աշխարհը,
Հաշին ու շահը, ուր չկայ խիղճը,
Կայ կոխկոտուած արդարութիւնը,
Որ դեռ կը սպասէ իր օրն ու պահը...

Եւ որքան դարեր դեռ պիտի անցնին
Որ ցեղասպանը զոջայ արարքին,
Քիչ մը մարդանայ ու զգաստանայ,
Կաթիլով մը գէթ խիղճը արթննայ...

Կառչէ կեանքի մէկ նշոյլէն,
Վտիտ մոմ մը թէ ան ըլլայ,
Գուցէ շատնայ ան քու սէրէդ,
Դառնայ լուսոյ վառ ճառագայթ...

Ժամանակի լուռ շոյանքը
Իմաստութեան կայծեր վառեց,
Վերջալոյսի շողերուն պէս,
Որք հրդեհէն հորիզոնը...



Գիրն անգամ բախտ պիտ' ունենայ
Որ կարդացուի ըստ արժանւոյն,
Չտրորուի զերթ հիւթեղ պտուղն,
Որ կ'իյնայ վար ոտքի կոխան...

Թէ հայր հայուն չդաւաճանէ,
Ներքին պառակտում, դաւեր չստեղծէ,
Կ'ըլլանք մենք ուժեղ եւ անխոցելի,
Մէկ հզօր բռունցք մը անպարտելի...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ